



ՍՈՒՎՈՐՈՎ



355. Գ

Կ-15

SMYSONE

39



3559

4-15

սօ

Ս. ԿԱԼԻՆԻՆ

Ս Ո Ւ Վ Ո Ր Ո Վ

ՈՌԻՍ ՄԵԾ ԶՈՐԱՎԱՐԻ ԿՅԱՆՔԻ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Ս. ԿԱԼԻՆԻՆ

ՍՈՒՎՈՐՈՎ

Ռուս մեծ զորավարի կյանքի ու գործունեյության ուրվագիծը

Այս համառոտ ակնարկով հեղինակը շարադրում է ուսու հանձարեղ զորավար Ս. Վ. Սուվորովի մարտական գործունեյությունը:

Գիրքը նախատեսված է կարմիր բանակայինների, զինվորական դպրոցների կուրսանտների, քաղաքացիական միջնակարգ և բարձրագույն դպրոցների ուսանողների համար, վորոնք զինվորական պատրաստություն են ստանում, ԲԳԿՖ հրամ. և պետ-կազմի և ուղղման պատմությունով հետաքրքրվող քաղաքացիական անձանց համար:



9243
39

**С. КАЛИНИН
СУВОРОВ**

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.



Գեներալիսսիմուս իբլս. Ս. Վ. Սուվորով

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ

Ռուս մեծ զորավար Ալեքսանդր Վասիլյեվիչ Սուվորովի զործողություններն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է Ռուսաստանի պատմությունից մի քանի մոմենտ հիշեցնել:

XVIII դարն Ռուսաստանի համար ծանր դար էր: Այդ դարի ընթացքում ուս ժողովուրդն ստիպված յեղավ իր ուսերի վրա կրելու տասնինն պատերազմ, վորոնք ընդհանուր առմամբ տևեցին 61 տարի: Դրանից 25 տարին ընկնում էր Շվեդիայի դեմ մղած պատերազմներին և 15 տարին՝ Թուրքիայի դեմ մղած պատերազմներին:

Այդ բոլոր պատերազմներն ուժերի վիթխարի լարում էին պահանջում: Ռուսների համար դեպի Բալթիկ ծովը դուրս դալը (պատերազմները Շվեդիայի դեմ) Ռուսաստանի վրա նստեց 120 հազար մարդ սպանված ու վիրավոր և մինչև 500 հազար մարդ շարքից դուրս յեկած՝ հիվանդության պատճառով: Ավելի մեծ զոհեր տրվեցին Սև ծովի ափերին տիրելու համար (պատերազմները Թուրքիայի դեմ):

XVIII դարում մղած պատերազմներում Ռուսաստանը դուրս էր բերել մինչև 5 միլիոն մարդ, իսկ նրա ընդհանուր կորուստը՝ սպանված, վիրավոր ու հիվանդ, հասնում էր այն ժամանակվա համար վիթխարի թվի՝ 1.400 հազար մարդու:

Պատերազմները ծանր ազդեցություն էին ունենում ուս բնակչության ուժերի ու միջոցների վրա: Վոչ միայն կանգ էր առել այդ բնակչության բարեկեցության աճը, այլ և պատերազմների հետեվանքով բնակչության հիմնական



խմբերի դրուժյունը նշանակալից չափով վատացել էր: Մի-
լիոնավոր ազատ դյուղացիներ բաժանվեցին կալվածատե-
րերին ու ազնվականներին: Ճորտատիրական իրավունքն
ուժեղացավ: Այս բոլորի հետևանքով Ռուսաստանը տնտե-
սապես ավելի ևս հետ մնաց Արևմտյան Յեվրոպայից:

Չնայած Պետրոս I-ի դործադրած խոշոր ջանքերին՝ այդ
ժամանակ արդյունաբերությունը թուլյ էր զարգացած:
Պետրոս I-ի թագավորության վերջին՝ 1725 թվին Ռու-
սաստանում կային միայն 195 ֆաբրիկա և դործարան: Ֆաբ-
րիկաները տիպիկ ճորտատիրական մանուֆակտուրաներ է-
յին, վորոնք հիմնված էին ձեռքի աշխատանքի ուղտադործ-
ման վրա: Մեքենայացումը յերևում էր միայն ջրի ուժի
ոգտադործումով՝ ջրաղացների սկզբունքով: Արտադը-
րություն մակարդակի մասին դատելու համար բավական է
նշել, վոր 1723 թվին ամբողջ Ուրալը տարեկան տալիս էր
1,5 հազար տոնն չուգուն և մոտ 500 տոնն յերկաթ. սա
պակաս է այն քանակությունից, վոր այժմ մեր խորհրդա-
յին դործարանները բաց են թողնում մեկ ժամում:

Մինչև 1796 թիվը արդյունաբերական ձեռնարկություն-
ների թիվը հասավ 1.161-ի: 70 տարվա ընթացքում Ռու-
սաստանում ֆաբրիկաների ու դործարանների թիվն ավելա-
ցավ վեց անգամ: Հարկ կա՞ տեսլու, վոր այդ ամեննին էլ
այն տեմպը չեր, վորի պահանջն ուներ Ռուսաստանը:

Մինչև Պետրոս I-ը Ռուսաստանի զինված ուժերը կազմ-
վում էին գլխավորապես աշխարհագորականներից, վորոնք
պատերազմի ժամանակ հավաքվում էին ազնվականներից
ու նրանց ճորտերից: Մշտական զորքերի մի չնչին քանակ
ստեղծվել էր մինչպետրոսյան եպոխայի ամենավերջին
տարիներին: Դրանք այսպես կոչված՝ ոտարերկրյա տիպի
զորքեր էին՝ ուսուսարական, դրագունական և սալաթա-
կան:

Պետրոս I-ի ռեֆորմներն առաջին հերթին զինված ուժե-
րին էին վերաբերում: Ստեղծվեց մշտական բանակ, վոր
հավաքվում էր համայնքներից: Բանակը կոմպլեկտավորելու
այն միջոցը, վոր մտցրել էր Պետրոսը, մնաց ամբողջ XVIII

դարում, ըստ վորում, սկզբում բանակում ծառայում էին
ցմահ, բայց XVIII դարի կեսերին ծառայության ժամկետը
սահմանափակվեց 25 տարով: Պետրոս I-ի որով բոլոր ազնվ-
վականները պարտավոր էին ծառայել բանակում. հետագա-
յում նրանք սատիճանաբար ազատվեցին այդ պարտականու-
թյունից և բանակում ծառայելու պարտավորության ծան-
րությունը զցեցին ուրիշ դասակարգերի, մասնավորապես
դյուղացիների վրա:

Հաճախակի ու լարված պատերազմներն ստիպում էին
տարեց տարի բանակն ավելացնել: XVIII դարի ընթացքում
բանակի անը յերևում է հետևյալ աղյուսակից:

	Դաշտային զորքեր					Կայացոր- յին զորքեր			Լանդի- լիցիա			Ընդամենը մեծ զոր- քի թիվը և զորակա- զմը
	հաս- կա	հաս- կա	հաս- կա	հաս- կա	հաս- կա	հաս- կա	հաս- կա	հաս- կա	հաս- կա	հաս- կա		
1700 թ. (Պետ. I)	48,5	2,5	0,1	—	51	—	—	—	—	—	—	556
1725 թ. (Պետ. I)	79,5	38	4,5	—	122	65	570	—	6	6	6	203
1739 թ. (Պետ. I)	83,5	39,5	5,5	0,5	129	63,5	972,5	3,5	24	27,5	9	248
1761 թ. (Պետ. I)	129,5	44	8,5	1	183	64	973	1,5	26	27,5	36	319,5
1756 թ. (Պետ. I)	275	70,5	21,5	1,5	368,5	95	—	95	—	—	—	40503,5
1800 թ. (Պետ. I)	204	45	25	2,8	277	77,5	—	77,5	—	—	—	47401,5

Մինչդեռ Ռուսաստանի բնակչությունը XVIII դարի ըն-
թացքում աճել էր յերեք անգամ, նրա բանակն ավելացավ
8-9 անգամ: Պետություն յեկամուտի յերկու յերրորդը XVIII
դարի ընթացքում ծախսվում էր բանակի պահպանման վրա:

Անհրաժեշտ է արդյոք ավելի ցայտուն ցուցանիշ բերել
այն վիժխարի լարումի, վոր կրեց ոռու ժողովուրդը XVIII
դարի ընթացքում:

Բանակի քանակական աճը զուգահեռ էր ընթանում նրա
վորակական աճին:

Կարևոս XII-ի Շվեդիայի և Ֆրիդրիխ II-ի Պրուսիայի դեմ մղած պատերազմները լավ դպրոց հանդիսացան ուսանողան համար: Յեթե դարի սկզբում Պետրոս I-ը ուսաների ուղղակի վատ վարժության հետեւանքով ստիպված եր թանգ վճարել իր մարտիկների արյունով, յեթե այդ ժամանակ ուսաների կորուստները յերեք-չորս անգամ դերազանցում էյին շվեդների կորուստներից, ապա դարի վերջում ուսաները հակառակորդներին շատ ավելի մեծ կորուստներ էյին պատճառում, քան իրենք էյին ունենում նրանց հետ մղած մարտերում: Նույնիսկ այն ժամանակվա ամենալավ բանակը՝ Փրանսիական բանակը ուսաների հետ ունեցած բոլոր ընդհարումներում ավելի մեծ կորուստներ եր ունենում, քան ուսաները: XVIII դարի վերջում ուսանողան բանակը սուվորովյան վարժեցումով ու նրա հաղթանակներով չտեսնված բարձրության հասավ. նա կանգնած եր ամբողջ աշխարհի լավագույն բանակների շարքում: Ի դուր չեր, վոր հենց միայն Սուվորովի անունը տալը մարտիկների մեջ հաղթանակի այնպիսի հավատ եր բորբոքում, վոր վոչ մի խոչընդոտ չեր կարողանում կանգնեցնել նրա «հրաշք-հսկաների» հաղթարչավը:

Մեր յերկիրը կարող ե պարծենալ Սուվորովի անունով: Նա նրա անունը դնում ե անցյալի այն մեծ անունների շարքում, վորոնք ուս ժողովրդի համար ապահովեցին նրա համաշխարհային հռչակն ու փառքը:

ՍՈՒՎՈՐՈՎԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Այնքանգր Վասիլյեվիչ Սուվորովը վոչ հարուստ ազնվական ընտանիքի զավակ եր: Նրա հայրը՝ Վասիլի Իվանովիչը ծառայությունն սկսել եր Պետրոս I-ի որով վորպես զինվորականի սպասավոր ու թարգման: Յեկատերինա I-ի որով արձակվել եր վորպես լեյթ-գվարդիայի ումբարկու սերժանտ, ապա վորպես պրապորշչիկ փոխադրվել եր Պրեքրաթեկսկի գունդը, վորտեղ ծառայել եր ու հասել կապիտանի աստիճանին: Իր ծառայությունը նա ավարտել եր զենեքալ-անչեֆի աստիճանով:

Վասիլի Իվանովիչը համարվում եր այն ժամանակվա ամենազարգացած սպաներից մեկը և լավ տեղյակ եր ինժեներական գործին: Զբաղվում եր ոտարեկիրյա ուղղակիան դրքերը ուսերենի թարգմանելով: Նա ամուսնացած եր Ալդոսյա Ֆեգոսեյեվնա Մանուկովայի հետ և այդ ամուսնությունից Պետրոս I-ի մահից 4 տարի անց, 1729 թվին ծնվեց ապագա հերոսը՝ ուսական բանակի զենեքալխիմուս Սլեքսանդր Վասիլյեվիչ Սուվորովը:

Սուվորովի մանկական տարիներն անցել են Կոնչանսկի կալվածքի գյուղական խաղաղ միջավայրում (նախկին Նովոգորոդի նահանգի Բորովիչի գյուղից 37 կմ. հեռավորության վրա):

Այն ժամանակներն աղնվականներին իրավունք եր տրվում իրենց տղաներին զինվորական ծառայության մեջ գրել նրանց ծննդյան օրվանից: Այդպիսի սովորություն ստեղծվել եր սկսած Պետրոս I-ից, վորը պահանջում եր, վոր յուրաքանչյուր աղնվական զինվորական ծառայությունն սկսի զինվորությունից: Նշանավոր մարդիկ այդ պահանջը դանց

եյին անուամբ նրանով, վոր իրենց տղաներին գնդերում ցուցա-
կադրում եյին մանուկ հասակից: Առանց բանակում ծառա-
յելու նրանց յերեսաները հաճախ սպայի աստիճան եյին ըս-
տանում դեռ որորոցում:

Այսպէս մեծ զորավարը ծնվել էր թուլակազմ ու տկար:
Հայրը յերկյուղ կրելով իր տղայի առողջութեան համար՝
նրան չէր ցուցակադրել գնդում: Փոքրիկ Ալեքսանդրը վախտ
էր, նիհար, թուլակազմ, նրա մարմնի կազմվածքը վատ էր
ու տգեղ: Այդ հատկութիւններով դժվար էր զինվորական
գործում կարյերա ձեռք բերել:

Փոքրիկ Սուվորովը հաջող էր սովորում: Նրա համար
առանձնապէս դյուրին էր ոտար լեզուներ սովորելը: Նա լավ
ուսումնասիրեց Ֆրանսերեն, գերմաներեն, լեհերեն և ի-
տալերեն լեզուները և այդ նրան հնարավորութիւն էր տա-
լիս ոտար գրականութիւնը կարդալ բնագրով: Այն ժամա-
նակ ուսւ գրականութիւն համարյա դոյութիւն չուներ և
ոտար գրքեր կարգալը միակ միջոցն էր, վոր ընդարձակում
էր հետաքրքրվող յերեսայի մտահորիզոնը:

Հենց վոր Սուվորովը գրագիտութիւն սովորեց, նրա
մեջ ռազմական գրքեր կարգալու սեր առաջացավ: Նրա
հայրն այն ժամանակվա համար հարուստ գրագարան ու-
ներ, և Սուվորովը յեռանդով կրանում էր այնտեղ հավաք-
ված յերկերը: Վասիլի Իվանովիչի հյուրերի թիւում հա-
ճախ լինում էր նրա կալվածքի հարեան գեներալ Աննիբալ
Աբրամ Պետրովիչը՝ մեծ բանաստեղծ Պուշկինի նախապա-
պը: Հաճախ Աննիբալն ու Սուվորովը ձմրան յերկար դի-
չերներն անց եյին կացնում վերհիշելով Պետրոս I-ի մեծա-
մեծ գործերը: Այդ գրույցներն ու գրքերի ընթերցանու-
թիւնը զգայուն յերեսայի մեջ սխրագործութիւնների ծա-
րով եյին բորբոքում: Բնական շնորհքն ու ընթերցանու-
թեան սերը տեսնում եյին իրենց գործը: Տասնմեկ տարե-
կան հասակում Սուվորովն ավելի շատ բան գիտեր, քան
շատ չափահաս մարդիկ: Նրան մանրամասնորեն հայտնի
եյին Ալեքսանդր Մակեդոնացու, Հաննիբալի, Հուլիոս Կե-
սարի և անցյալի շատ ուրիշ մեծ զորավարների խոշոր ար-
չավանքները:

Իր գործողութիւններում նա ջանում էր նրանց նման-
վել: Հաճախ ամբողջ ժամերով նա մնում էր հորդ անձրե-
վի տակ, կամ թե թեթեւ հագուստով կանգնում էր սառնա-
մանիքում: Մեծերի նկատողութեանը պատասխանում էր.
«Չինվորին վայել չի քնքշութիւնը»:

Յերբեմն նա ամբողջ որերով կորչում էր անտառում,
սիրում էր մենակութիւն, ապրում էր յերազներով:

Նրա մանկական սենյակում մարդու զարմացնում էր
գրքերի առատութիւնը, այնտեղ հավաքված գլոբուսների,
աշխարհագրական քարտեզների, ճակատամարտերի պլաննե-
րի և այլ նյութերի առատութիւնը: Հաճախ նրան կարելի
էր գտնել այդ քարտեզների մեջ խորասուզված, մեծ ճա-
կատամարտերի պլաններն ուսումնասիրելիս:

Սուվորովի հայրը չէր համակրում իր վորդու հակում-
ներին և մտածում էր նրան քաղաքացիական ծառայութեան
տալ:

Սակայն տղայի բախտը վորոշվեց անսպասելի կերպով,
նրա հոր ցանկութեանը հակառակ: Այդ մասին Սուվորովի
կենսագիրներն այսպէս են պատմում:

Մի անգամ ամառը Սուվորովներն տանը շատ հյուրեր
եյին հավաքվել: Նրանց մեջ էր նաև Աննիբալը:

— Իսկ վորտե՞ղ է Սաշան, — յեղավ նրա առաջին
հարցը:

— Նա ելի շարունակում է առանձնանալ, — պատաս-
խանեցին նրան: — Հավանորեն նորից կպել է իր գլոբուս-
ներին ու քարտեզներին:

Հյուրերի գրույցի ժամանակ Աննիբալն աննկատելի
վերև բարձրացավ և նայեց Սաշայի սենյակի ներսը: Նա
տղային գտավ հատակին փոված քարտեզի վրա պառկած,
գրքի մեջ խորասուզված: Տղան չնկատեց ել, վոր իր սեն-
յակը մարդ մտավ:

Կարճ գրույցից ու փոքրիկ քննութիւնից հետո, վորին
տեղն ու տեղը յենթարկեց Սաշային Աննիբալը, նա յեկավ
այն յեղրակացութեան, վոր չի կարելի խոչընդոտ հանդի-
սանալ տղային, պետք է թույլ տալ, վոր նա իր մեջ գար-
դացնի այն ընդունակութիւնները, վորոնցով նա այնքան

առատորեն ոժտված և: Հենց այդտեղ ևլ նա Սուվորովի հորը համոզիչ կերպով խորհուրդ տվեց՝ իր տղային զինվորական ծառայութեան նշանակել:

— Նա Ինձանից ու քեզանից ևլ շատ առաջ կգնա, — ասում էր նա ծերունի Սուվորովին: — Յեվ առողջութունն ևլ այնքան վատ չէ, ինչքան դու կարծում ես: Մեզք է նրան հետ պահել իր սիրած զբաղմունքներից:

Մենիբալի խորհուրդն ազդեց Սուվորովի հոր վրա և հետևյալ տարին, 1742 թվին Ալեքսանդր Վասիլյևիչը Սեմյոնովյան դնդում ցուցակագրվեց վորպես լեյթ-գվարդիայի շարքային զինվոր: Դրանից հետո յերեք տարի նա տանը մնաց: Տասնվեց տարեկան հասակում նա հորը հասարակորեն հայտնեց, թե ժամանակն է, վոր ինքը զինվորական դործը սովորի գործնականում և փոխադրվեց դորն՝ իսկական զինվորական ծառայութեան:

ԱՌԱՋԻՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մինչդեռ Սուվորովի հարուստ հասակակիցները զինվորական վարժութունները համարում էին միայն զվարճութուն, պարապութունն սպանելու զբաղմունք, Սուվորովն առանձին սիրով և իրեն հատուկ ջանասիրութեամբ ձեռնամուխ յեղավ զինվորական գիտութեանը: Նա իր մեջըին կրեց զինվորի կյանքի ամբողջ ծանրութունը: Իր վրա կատարած համառ աշխատանքով բնականից աննախանձելի իր առողջութունն այնպես կոփեց, վոր հետո իր ամբողջ կյանքի ընթացքում ուրիշներից ավելի հեշտ էր զիմանում ծանր արշավանքներին: Իննը տարի ապրելով գորանոցում զինվորների հետ՝ նա նրանց հետ միասին կատարում էր բոլոր աշխատանքները, նույնիսկ այնպիսի գործեր, վոր ինքը չպետք է աներ: Յերբեք չէր խուսափում ծանր հանձնարարութուններից, հաճախ ինքն էր մեջ ընկնում, վոր ավելի ծանր գործեր ստանա: «Նախ քան ուրիշներին հրամայող դառնալդ ինքդ սովորիր յենթարկվել», — ասում էր Սուվորովը: Յեվ նա համառորեն ուսումնասիրում էր զինվորական ծառայութունը: Բանակում չկար այնպիսի մի դործ, վոր Սուվորովը չկարողանար կատարել: Նա ուսումնասիրում էր հետևակազորային, հրետանային և հեծելազորային գործը: Նա խիզախ զինվոր էր և լավ սուսերամարտիկ:

Մի բան, վոր առանձնապես արժեքավոր է Սուվորովի մեջ, այդ այն է, վոր յերկար ժամանակ զինվորների հետ ապրելով՝ նա լավ ուսումնասիրեց զինվորի բնավորութունն ու կարիքները: Սովորեց խոսել զինվորի լեզվով: Ի գուր չէ, վոր հետագայում նրա մի քանի խոսքից բորնկվում ու յեռում էր զինվորների սրտերը:

Պարապմունքներէց ազատ ժամանակը Սուլթորովը նվիրում էր դիտութիւններին, գլխավորապէս ուղղմական պատմութեանը: Ծառայութեան պարտականութիւնները նա կատարում էր արտասովոր ջանասիրութեամբ և մանրակրկիտ կերպով:

Իննը տարի Սուլթորովն անց կացրեց պինդութեան մեջ և վորպէս յենթասպա: Միայն 1754 թիւին նշանակվեց դաշտային բանակի սպա (պորուչիկ): Սպայական առաջին աստիճանը նա ստացավ 26 տարեկան հասակում: Նրա անվանի հասակակիցներն այդ ժամանակ արդէն շտաբ-սպաներ ու գեներալներ էին: Սուլթորովի վրա թանգ էր նրատուժ սպայական աստիճանը: Այդ իր կնիքը դրեց նրա ամբողջ կյանքի վրա: Հետո մենք կտեսնենք, թե ինչպէս ավազութիւնը, վորին այն ժամանակ խոտորեն կառչում էին, քիչ անխորժութիւններ չի պատճառում Սուլթորովին: Գերմարդկային սխրագործութիւններ ու բացառիկ ծառայութիւններ էին հարկավոր, վորպէսզի կարելի լիներ դուրս գալ ամենացածունքներից և իր մասին խոսել ստիպել վերնախավին, վորն ամբարտաւանանում էր իր ծագումով ու աստիճաններով:

1759—1761 թիւերին Սուլթորովին վիճակվեց մասնակցել Յոթամյա պատերազմին: Այդ ժամանակ նա արդէն շտաբ-սպա յեր:

1759 թիւի սեպտտի 14-ին, իր կյանքի յերեսներորդ տարում, Կուններսդորֆի մոտ տեղի ունեցավ Սուլթորովի առաջին մարտական մկրտութիւնը: Սուլթորովի հետագա գործողութիւններն այդ պատերազմում անվերջ սխրագործութիւններ էին, արտակարգ քաջագործութիւն և բացառիկ հնարագիտութիւն ու պաղարկունութիւն:

Բերենք մի քանի որինակ:

Յերբ ուսսական զորքերը Կոլբերգը պաշարեցին, Յերիդրիխ II-ը Կոլբերգին ողնելու համար ուղարկեց հիանալի գեներալ Պլատենին, խնդիր տալով նրան՝ անհանդիստ անել պաշարող ուսսական կորպուսին:

Տեղեկանալով այդ մասին՝ Սուլթորովը կազակների մի հարյուրակով արշավեց դիմավորելու Պլատենին: Մի դի-

չերվա ընթացքում անցան մոտ 40 կիլոմետր: Լուսարացին մոտեցան մի դետի:

— Առաջ, — դոչեց Սուլթորովը և ինքն առաջինը նետվեց ջուրը: Նրա հետեւից լողալով անցան նաև կազակները: Վոչ հետու Լանդսբերգ քաղաքն էր:

— Քաղաքը մե՛րն է, — դոչեց Սուլթորովը, — ուռա՛:

— Բայց քաղաքում պրուսացիներ են, — փորձեցին հետ պահել Սուլթորովին:

— Վողորմած աստված, ի՛նչ լավ է, — պատասխանեց Սուլթորովը:— Մենք ել հենց նրանց ենք վորոնում:

— Չե՞ք հրամայի, արդյոք, իմանալ, թե քանի հոգի յեն:

— Ինչի՞ համար: Մենք յեկել ենք նրանց կոտորելու և վոչ թե հաչվելու:

Իր ջոկատը շարք կանգնեցնելով և «Մա՛րշ, մա՛րշ» դոչելով արշավեցին քաղաքի վրա: Կազակներն աղաղակով ու գնդակոծութեամբ ներխուժեցին քաղաք: Անակնկալ հարձակումը չմեցրեց քաղաքում յեղած պրուսական հուսարներին. նրանք, չնայած ահագին գերազանցութեանը, առանց կովի անձնատուր յեղան:

Մի ուրիշ դեպք: Մի ճակատամարտում ուսս հուսարներն ու ճիւղիոր գրեհագերները չգիմացան պրուսացիների ճնշմանը և փախուստի դիմեցին:

Վորտեղից վորտեղ նրանց մեջ լույս ընկավ Սուլթորովը:

— Կանգնի՛ր, կանգնի՛ր: Ո՞ւր եք գնում, — դոռաց նա:— Յես այտե՛ղ եմ:

Նահանջը դադարեց:

— Շարվի՛ր, — հրամայեց Սուլթորովը և ջոկատը Սուլթորովի գլխավորութեամբ կրկին առաջ նետվեց: Պրուսացիք չգիմացան և նահանջեցին:

Յոթամյա պատերազմում անց կացրած յերեք տարիների ընթացքում Սուլթորովը մասնակցեց առնվազն 10 մարտերի ու խիզախ հարձակումների, այդ թվում նաև Բեռլինի վրա կատարված հարձակմանը: Յերկու անգամ վիրավորվեց: Բոլոր մարտերը, վոր Սուլթորովը մղեց այդ պա-

տերազմում, աչքի եյին ընկնում իրենց խիղախությամբ, անսկիւղ հարձակումներով, մանեվրելու վարպետությամբ և մտածված սլանը մինչև վերջ հասցնելու վճռահանությամբ: Ամենուրեք Սուլտրովն անպայման հաղթում էր՝ հաճախ իր դիմաց ունենալով հակառակորդի գերազանց ուժեր:



Բանակային հետևակի յենթասպաներ
(1756 — 1762)

Սուլտրովն իր մասնակցած այդ առաջին խիղախությամբ ստիպեց խոսել իր մասին: Ամբողջ բանակում չկար մի մարդ, վոր չճանաչեր Սուլտրովին: Զորքերի մեջ

հենց միայն նրա խիղախ սիրագործությունների մասին էյին խոսում: Սուլտրովն աչքի ընկավ վորպես խիղախ հեծելակ և հիանալի շտաբային հրամանատար:

Յոթամյա պատերազմում իր մատուցած ծառայությունների համար ՅԱ տարեկան հասակում նա ստացավ զնդապետի աստիճան:

Յոթամյա պատերազմը Սուվորովի վրա ուժեղ տպավորութիւն թողեց: Ռուսական զորքերն աչքի ելին ընկնում արտակարգ տոկունութեամբ: Քաջութեանն ու անձնըվիրութեանը կարծես սահման չկար: Սակայն մնացած ամեն ինչը, մանավանդ զորքերի անտեսական մասը, բարձրթողի յեր արված: Գունդ ստանալով՝ Սուվորովն սկսեց նրան սովորեցնել ու վերակազմել իր՝ սուվորովյան ձևով:

Նա չսկսեց կուրորեն ընդորինակել պրուսացիներին: Սուվորովն իր գլխավոր նպատակն էր դարձրել՝ զնդին սովորեցնել այն, ինչ հարկավոր է պատերազմում և այնպես, վոր իր գունդը յերբեք ու վոչ մի բանից չփոթութեան մեջ չընկնի:

Սուվորովի գլխավոր պահանջներն էին՝ շարքում լըռութիւն, վերակազմութեան արագութիւն, կրակ բանալու կարգ: Հաճախակի տազնապները, որերով քայլելը՝ մեջ ընդ մեջ գիշեր ու ցերեկ, առանց ճանապարհների, անտառների միջով, բլուրների վրայով ու ձորերով, գետերի վրայով՝ ծանծաղուտներով ու լողալով, այս ամենը Սուվորովի գունդը վարժեցնում էին յերթային պայմաններին ու մարտական կյանքին:


Ուսուցումը տեղի յեր ունենում աշխույժ ու հետաքրքիր: Յուրաքանչյուր ուսուցում անպայման վերջանում էր սվինամարտով: Ուսուցումից հետո տեղի յեր ունենում պարավումներ ըննարկում, վորի ժամանակ Սուվորովն արտահայտում էր իր պահանջները՝ միշտ վտանգին ընդառաջ գնալ, միշտ հարձակվել և յերբեք չնահանջել թշնամու առաջ:

Սուվորովն առաջինն էր զորավարներից, վոր պահանջ առաջադրեց, վոր յուրաքանչյուր զինվոր հասկանա իր

մանկվրը. նա կարողանում էր այդ պահանջը հասցնել զինվորներին:

1768 թվին Լեհաստանում սկսվեց կոնֆեդերատական պատերազմը, վոր բարձրացրել էլին Ռուսաստանին թշնա-

6429



Հրետանային գնդի ֆուզիլեր (1757)

մի կուսակցութիւնները: Այդ ժամանակ արդեն խակ Լեհաստանում գտնվող գեներալ Վեյմարնի գլխավորած զինվորական ուժերը լրացնելու համար ուղարկվեցին վեց գունդ: Սուվորովը բրիգադի ղեկավարն էր Սուզուպայն գնդով և յերկու եսկադրոններով նոյեմբեր ամսին, առանց ճանապարհների, 30 օրվա ընթացքում Լադոգայից մինչև



Մամուլենուի 900 կիրովետոր ճանապարհ անցավ առանց վորեն
մեկ հետ մնացող ունենալու:

Սյդ նրա խելացի ուսուցման առաջին պտուղներն էյին:
Սուվորովը ձմեռն անց կացրեց Մամուլենուի: Այստեղ
նա իր գործերին ուժեղ թափով վարժեցրեց առաջիկա գոր-
ծողություններին: Գիշերը ճըճքան սառնամանիքին Սուվոր-
ովը գունդը տանում էր մերթ «հակառակորդի» հարձա-
կումը հետ մղելու, մերթ ինքն էր անակնկալ հարձակում-
ներ գործում նրա վրա:

Գարունը բացվեց: Սուվորովը շարժվեց Վարչավայի
վրա: Մինակից մինչև Վարչավա 650 կիրովետոր ճանապար-
հը նա անցավ 12 որում, ճանապարհին ողտաղործելով ձիա-
սայլեր: Իր արագ տեղափոխություններով, անակնկալ ու
արագ գրոհներով նա փայլուն հաղթանակներ տարավ իրեն
հանդիպած հակառակորդի զորքերի դեմ:

Հարձակման անակնկալության և ուժեղության փայ-
լուն որինակ է հանդիսանում Լանցկորոնայի մոտ տեղի
ունեցած ճակատամարտը:

Լեհական զենեքալ Պուլավսկին 4 հազար լեհերով տե-
ղավորվել էր շատ հարմար մի վայրում: Նրա մոտ վորպես
խորհրդական դտնվում էր Փրանսիացի զենեքալ Դյումու-
րյեն: Սուվորովն ուներ մոտ 3,5 հազար մարդ 8 թնդանո-
թով: Մայիսի 10-ին Սուվորովը հանկարծակի հարձակվեց
կոնֆեդերատների վրա: Ճակատամարտը տեեց ընդամենը
մեկ ու կես ժամ: Հեծելազորը հանդուզն կերպով խրվեց
հակառակորդի թևի մեջ, գլխավոր ուժերն ուժեղ ճնշումով
ավարտեցին հաղթանակը:

Լանցկորոնայի պարտությունը ծանր տպավորություն
թողեց լեհական կոնֆեդերատների վրա: Դրանից անմիջա-
պես հետո Դյումուրյեն զնաց Փրանսիա:

Սուվորովն այդ գործի մասին գրել է. «Լանցկորոնայի
մոտ թշնամու պարտությունը տեղի ունեցավ խորամանկ
մանևորներից և Փրանսիական խճճվածությունից, վորից
և մենք ոգտվեցինք: Նրանք (մանևորները) լավ են ուղմա-
կան զեկուցադրերի զեղեցկության համար... Թշնամուն

ժամանակ չպետք է տալ, վորքան կարելի յե պետք է ող-
տվել նրա նվաղագույն սխալից և միշտ համարձակորեն
խսել նրան ամենաթույլ կողմից: Բայց հարկավոր է, վոր
զորքերը հասկանան իրենց առաջնորդողին»:

Իր արդյունքներով ավելի հարուստ էր Ստուլովիչի հաղ-
թությունը, վոր Սուվորովը տարավ մի խավար գիշեր,
յերկարատե յերթից հետո, հակառակորդից հինգ անգամ
պակաս ուժերով:

Լիտվական զետման գրաֆ Ուլինսկին Լիտվայում ուղ-
մական գործողություններ էր սկսել: Վեյմարնը Սուվորո-
վին արդեղել էր մինչև նոր կարգադրություն ստանալը հե-
ռանալ Լյուբլինից: Հանձնարարված էր միայն հսկողու-
թյուն սահմանել Ուլինսկու նկատմամբ: Սակայն Սուվորո-
վըն անհրաժեշտ համարեց շուտ հաշիվ մաքրել նրա հետ:
Վեյմարնին զեկուցադիր ուղարկեց. «Թնդանոթը կըրակեց,
Սուվորովն արշավանքի դիմեց»: Չորս որում 215 կմ. ճա-
նապարհ կարելով՝ Նեսվիժի մոտ նա տեղեկացավ, վոր Ու-
լինսկին Ստուլովիչ գյուղի շրջանում 4-5 հազար մարտիկ
ունի: Սուվորովը, վոր ընդամենը 820 մարդ ուներ, վորո-
շեց հաղթել հանկարծակի թերելով և Ուլինսկու վրա:
Հել դիշերով: Կոխվը համար էր: Շամբ 11-ին մոտ միայն
հաջողվեց կտարել լեհերի համառությունը:

Ստուլովիչի արշավանքը Սուվորովի անունը հայտնի
դարձրեց արտասահմանում:


Փրիզերիս II-ը լեհերին խորհուրդ էր տալիս զգուշանալ
Սուվորովից:

Ստուլովիչի կովի մասին Վեյմարնին տղարկած զեկու-
ցադրի մեջ Սուվորովը գրել է. «Վորպես զինվոր յես ար-
ժանի յեմ պատժի և ձեղ եմ հանձնում իմ թուրը: Վորպես
ուսու յես կատարել եմ իմ պարտքը՝ վոչնչացնելով կոնֆե-
դերատների ուժերը, վորոնց մենք հաղթել չեյինք կարող,
յեթե նրանց ժամանակ տայինք միանալու»:

Վեյմարնը զեկուցադիր ուղարկեց Չինվորական Կորն-
գիային Սուվորովի ինքնազլուխ վարմունքի մասին: Սա-
կայն, դատի փոխարեն, վոր սպասում էր Վեյմարնը,

Սուվորովը պարզևատրվեց Ալեքսանդր Նեվսկու շքանշանով:

1772 թվին Վեյմարին փոխարինեց Բիբելովը: Վորոշոված եր հաշիվ մաքրել կոնֆեդերատների հետ, գրավել



Բաճակային հետևակի մուշկետակիր ավագ սպաներ
(1656—1762)

նրանց ամբողջունները, ՋախՋախել կենդանի ուժը:

Հրամանատարություն առաջադրանքով Սուվորովը շարժվեց դեպի Կրակով, ամբողջը պաշարեց, մասամբ ավերեց հրեաանային կրակով և քաղաքում հրդեհներ դցելով:

քնակիչներին առաջարկեց անձնատուր լինել: Սուվորովի պահանջն անհապաղ կատարվեց:

Լեհական կամպանիայում (արչավում) մեզ դարձացնում ե Սուվորովի զորաշարժերի արագությունը և նրա հարձակումների շեշտակիությունը:

40-60 կիլոմետր Սուվորովի սովորական անցումներն էյին, բայց նա հաճախ մեկ օրում 90 կիլոմետր էլ եր անցնում: Արդյունքը լինում եր այն, վոր հանկարծակի յերևալը և դրան գումարած՝ շեշտակի հարվածները հակառակորդին՝ միշտ ապահովում էյին Սուվորովի հաղթանակը:

«Ձարմացնել և հաղթել», — ասում եր Սուվորովը:

«Արագությունն ու հանկարծակիի բերելը փոխարինում են քանակին», — այս եր նրա կանոնը:

Սուվորովի գործողությունների անակնկալությունը նրան հանելուկ եր դարձնում ժամանակակիցների համար: Ֆրանսիացի Դյումուրյեն Սուվորովին պարսավում եր Լանցկորոնայի համար, ասելով, թե նա այնտեղ կարող եր ջարդ ու փշուր լինել:

Լեհերը պնդում էյին, թե Սուվորովը դադափար չունի ռազմական գործի մասին: «Նա միայն արջերի հետ լավ կկովի», — ասում էյին նրա մասին արհամարհանքով: «Պատահում է՝ դերը ես գրավում, ուսաներին սպասուժ ես ճակատի կողմից, իսկ նա յերևում ե կամ թիկունքի կողմից, կամ թե խփում ե թևերից: Մենք ավելի շատ անակնկալի հետևանքով էյինք փախչում, քան թե պարտվելու», — ասում էյին նրանք:

Հարկ կա՞ արդյոք ասելու, թե ով եր իրավացի և ով ավելի լավ դիտեր ռազմական գործը: Վոչ միայն Սուվորովի հակառակորդներն արտասահմանում, այլ և Ռուսաստանում շատերը չէյին հասկանում նրան: Վեյմարնը հաճախ եր նախատում Սուվորովին, թե՛ նա չդիտի տակտիկան: Մի անգամ Սուվորովը դրան հեղձորեն պատասխանեց. «Ի՞նչ արած, մենք այդպիսին ենք. տակտիկա ու պլանափորտիկա չունենք, բայց հակառակորդին ջարդում ենք»:

Յերբ Վեյմարնը հանդիմանություն եր անում, թե Սուվորովը չափազանց արագ յերթերով զինվորներին տանջում

ե, Սուվորովը նրան պատասխանեց. «Հռոմեացիք մեղանից
եւ արագ եյին դնում, կարգացեք կեսարին»:

Սուվորովի փառքն աճում էր, աճում էր նաև նրան
նախանձողների թիվը: Աշխատում էյին Սուվորովի հաջո-
ղությունները վերադրել վոչ թե նրա հմտությանը, այլ
բախտին: «Այսօր բախտը, վաղը բախտը: Հարկավոր է
յերբեկցե նաև կարողություն», — պատասխանում էր Սու-
վորովը:

1773 թվին Սուվորովն ուղարկվեց Ռումյանցեվի մոտ՝
Թուրքերի դեմ մղվող պատերազմին մասնակցելու: Մայիսի
սկզբներին նա հասավ Յասսա: Ռումյանցեվը Սուվորովին
օտոն ընդունեց՝ նրան համարելով նորելու: Սուվորովի
հրամանատարությանը հանձնեցին մի փոքրիկ ջոկատ,
վոր տեղավորված էր Դանուբի ափին, թուրքական Տուր-
տուկայ փոքրիկ քաղաքի դիմաց: «Նորելուկը» իր հետևն
սեննալով յերկու պատերազմների սխրագործություններ՝
41 տարեկան հասակում ստանում է մի փոքրիկ ջոկատ՝
կոմս Սալտիկովի ղեկիցիայում:

Հանելով իր ջոկատը՝ Սուվորովն անհապաղ սկսեց
նախապատրաստվել Դանուբն անցնելու: Առաջին փորձն
անհաջող յեղավ: Թուրքերը նախապատրաստությունները
նկատեցին և առաջին իսկ գիշերն իրենք անաղմուկ անցնե-
լով Դանուբը՝ հարձակվեցին ոռոսական առաջավոր ջոկատի
վրա: Ինքը՝ Սուվորովը, վոր առաջին շարքերումն էր, քիչ
մնաց պիտի զոհվեր: Սակայն առաջին շփոթությունը չու-
տով անցավ: Ռուսներն արագ ուշքի յեկան և թշնամուն
հետ շարտեցին:

Դրանից հետո Սուվորովը հրաման ստացավ ստայթմ
Տուրտուկայը թողնել և զորքը բացահայտ վտանգի չեն-
թարկել: Սուվորովը վայրը լավ ուսումնասիրելով և հաղ-
թանակին վստահ լինելով՝ վորոչեց ինքնուրույն կերպով
գործել:

Մայիսի 23-ի գիշերը հեծելազորը լողալով, հետևակը
նավակներով անցան Դանուբ դետը: Թշնամին առափնյա
մարտկոցից կրակ բաց արեց, սակայն հաջողվեց բարեհա-

Կող կերպով «սի դուրս գալ: Սուվորովն իր փոքրիկ Զսկա-
ար կանգնեցրեց յերկու շարքով, հրաձիգներով նրանց շար-
ժումը քողարկեց, ոժանդակ ուժ առանձնացրեց և շարժվեց
թուրքերի կողմը: Չորասյունների բաժանելն այդ սլառե-
րազմում նորութունն էր: Ժամը 4-ին ամեն ինչ ավարտված
էր: Թուրքերը փախան՝ կորցնելով 6 դրոշակ, 16 թնդա-
նոթ, 30 նսվ, շատ մակուկներ, ավելի քան հազար մարդ
սպանված ու վիրավոր: Ռուսների կորուստն էր 88 մարդ
սպանված ու վիրավոր:

Սուվորովը կովից հետո հենց այնտեղ էլ կռացավ
Թմբուկի վրա ու զեկուցադիր դրեց: Այդ զեկուցադիրը
շատ հակիրճ էր.

«Փա՛սք ասործուն և փա՛սք ձեզ,
Տուրտուկայն առնված ե, այնտեղ եմ յե՛ս»:

Սուվորովի զեկուցադիրը Ռուսականցեվին կատաղեցրեց:
Ինքնազուլուս դործողութունների համար Ռուսականցեվը
Սուվորովին պաշտոնադրեց և դատի տվեց:

Զինվորական Կոլեգիան մահվան դատապարտեց Տուր-
տուկայի հերոսին: Սակայն թագուհին դատավճիռը չհաս-
տատեց: «Հաղթողին չեն դատում», մակադրեց նա Զինվո-
րական Կոլեգիայի վորոշման վրա: Դեռ ավելին. Տուրտու-
կայի մոտ ցուցաբերած քաջության ու արիության համար
Սուվորովը պարգևատրվեց Գեորգի չքանչանով:

Վորոշ ժամանակից հետո Սուվորովը, վոր այդ ժամա-
նակ հիվանդ էր տենդով, Ռուսականցեվից հրաման ստա-
ցավ յերկրորդ անգամ հարձակում դործել Տուրտուկայի
վրա: Չնայած թույլ առողջությանը՝ հունիսի 30-ի գիշերը
Սուվորովը յերկրորդ անգամ հարձակում դործեց Տուր-
տուկայի վրա: Այդ ժամանակ Սուվորովի տրամադրության
տակ կար 3 հազար մարդ, վորոնցից մոտ 700-ը վատ
վարժվածներ էին:

Կովի մասին Սուվորովի տված հրամանը պարզ ու հա-
սարակ էր. «Չորամասերի հրամանատարները Չորասյունե-
րում վոչ մի բանի մասին չեն զեկուցում, այլ գործում են
ինքնուրույնաբար, շտապ ու խելացիորեն»:

Հուսաբացին թուրքերը փախուստի մատնվեցին. նրանք
Թողին 14 թնդանոթ, 35 նսվ, մոտ հազար սպանված ու
վիրավոր: Ռուսների կորուստը յեղավ մոտ 100 մարդ:

Այդ կովում Սուվորովը կամքի բացառիկ ուժ ցուցա-
բերեց: Տենդից հյուսված լինելով՝ նա շարժվում էր յեր-
կու մարդու ոգնությամբ: Հիվանդ Սուվորովը հրամաննե-
րը տալիս էր թույլ ձայնով և այդ հրամանները կրկնելու
համար նրա մոտ մի հատուկ սպա կար: Չնայած դրան,
այդ հրամանները հաստատ էյին ու վճռական: Նրանք պա-
հանջում էյին առաջխաղացում և վոչ մի բանում հակա-
ռակորդին վորեւ գիջում չէյին թույլատրում: «Յեթե աս-
ված է՝ առաջ, ապա յես չգիտեմ, թե ինչ բան է հոգնա-
ծութունը, ցուրտն ու քաղցը...», ասում էր Սուվորովը:

Սուվորովի և նրա զինվորների համար միջին ճանա-
պարհ չկար: Կամ հաղթանակ կամ՝ մահ: Բոլորն էլ այդ
գիտեյին և միշտ գործում էյին ծայրահեղ վճռականու-
թյամբ:

Նշենք Սուվորովի յերրորդ սիրադործությունն այդ
պատերազմում՝ Գիրսովոյի մոտ: Գիրսովոն միակ կետն
էր, վոր տիրում էյին ռուսները Դանուբի աջ ափին: Այդ
կետը հարկավոր էր, ինչ դնով էլ լինի, պահպանել: Սու-
վորովն այնտեղ նշանակված էր այդ նպատակով: Ժամա-
նելով Գիրսովո՝ նա շատ վտանգավոր դրության մեջ ըն-
կավ, քանի վոր յերեք կողմից շրջապատված էր թշնամի-
ներով: Սակայն այդ քիչ էր հուզում Սուվորովին. նա չը-
գիտեր ինչ բան է վտանգը:

Սեպտեմբերի 16-ին թուրքերը մոտ 12 հազար մարդով
շարժվեցին Գիրսովոյի վրա: Սուվորովն ուներ ընդամենը
3 հազար մարդ, այդ թվում մի քանի հարյուր կաղակ:
Ամբողջ գիշերը Սուվորովն անքուն ուսումնասիրում էր
թշնամու դիրքը: Վաղ առավոտյան Սուվորովն իր առա-
ջավոր շարքերին հրաման տվեց՝ թուրքերին վորքան կա-
րելի յե մոտ թողնել՝ թեթե կրակով հետ քաշվելով նրան-
ցից: Սորամանկութունը հաջողվեց: Թուրքերը, տեսնելով
վոր ռուսները նահանջում են, կատաղաբար առաջ նետվե-
ցին, սակայն գլխավոր դիրքերի մոտ կործանիչ կրակի

հանդիպեցին: Այդ ժամանակ թշնամու աչքից թաղցրած յերկու զորասյուներ թևերի կողմից սվինամարտի հարձակվեցին թշնամու վրա: Հարվածը ճիշտ եր հաշվի առնված: Թուրքերը չդիմացան և խառնխուռն փախուստի դիմեցին: Սուլթորովը 30 կիլոմետր հարածեց փախչողներին: Թուրքերի կորուստը հասավ 1100 մարդու: Ռուսների կորուստը չնչին եր: Սմբողջ զործողութունն օրինակելի կերպով կատարվեց: Բանակը մեծ հրճվանքով դիմավորեց այդ հաղթանակը:


Գիրսովոյի հաղթութունից հետո Սուլթորովը յենթակա դարձավ դեներալ Կամենսկուն: Նրան յենթակա դարձնելը հետևանք եր այն վորոշակի հակահրանքի, վոր Ռուսյանցեվն ուներ Սուլթորովի նկատմամբ: Կամենսկին միայն մեկ տարով ավելի առաջ եր դեներալի աստիճան ստացել, քան Սուլթորովը: Դրա փոխարեն Սուլթորովը մի շարք փայլուն հաղթանակներ ուներ իր հետևում, վորպիսիք չունեք Կամենսկին: Սուլթորովի և Կամենսկու միջև անմիջապես անբարյացակամ հարաբերութուններ ստեղծվեց, վորովհետև Կամենսկին նախանձում եր Սուլթորովին: Այդ բանք շուտով իր բացասական արտահայտութունն ունեցավ: Ընդհանուր պլանի համաձայն Կամենսկին և Սուլթորովը պետք ե հարձակվեցին Բաղարշիկի վրա և ապա՝ Շումլայի վրա: Հարձակման ժամանակ հանդիպական կռիվ սկսվեց Կողուլիի մոտ, վորտեղ Սուլթորովը, առանց Կամենսկուն սպասելու, իր 8 հազարանոց ջոկատով հարձակվեց 40 հազար թուրքերի վրա: Սուլթորովի ջոկատի կործանիչ դրոհի տակ թուրքերի առաջավոր զորամասերը չդիմացան և խուճապային փախուստի դիմեցին: Բայց գլխավոր ուժերն ամուր մնացին: Տաք կռիվ բորբոքվեց: Հենց վոր Սուլթորովն իր 10 թնդանոթներից կրակ տեղաց թուրքերի վրա, բոլոր 40 հազարն ել սարսափահար փախուստի դիմեցին:

Այդ կռիվի հետևանքով Սուլթորովի ձեռքն ընկավ 29 թնդանոթ, 27 դրոշակ ու հազար հողի գերի: Թուրքերի կորուստները հասնում եյին մի քանի հազար մարդու՝ ըսպանված ու վիրավոր:

Կողուլիի մոտ տարած փայլուն հաղթանակը պատե-

րազմի ընթացքը բոլորովին փոխեց: Թուրքերը վհատվեցին և շուտով հաշտության հակվեցին: Սակայն Սուլթորովը ձեռք բերեց մի յերգվյալ թշնամի հանձինս Կամենսկու, վորն այդ զործում վոչ մի տաղանդ չեր ցուցաբերել:

1774 թվի հուլիսի 10-ին Կուչուկ-Կայնարջիում, Ռուս-



Բանակային հետևակի շտաբ—սպա

(1756 — 1762)

յանցելի գլխավոր շտաբում թուրքերի հետ հաշտութուն կնքվեց:

Այդ հաշտութունով Ռուսաստանը ձեռք բերեց Ազովը, Կերչը, Կինբուրնը, Դնեպրի ու Բուդի միջև յեղած ամբողջ տափաստանը: Բացի այդ, իրավունք ստացավ աղատորեն նավարկելու Սև ծովում և Դարդանելի նեղուցում: 27

ԿԻՆՔՈՒՐՆ

1783 թվի սեպտեմբերի 26-ին թուրքերան նորից Ռուսաստանին պատերազմ հայտարարեց: Առիթ եր ծառայել Ղրիմը Ռուսաստանին միացնելը: Ոգտվելով այն բանից, Վոբ Ռուսաստանը պատրաստ չե պատերազմի, թուրքերը վորոչել էյին դրավել Կինբուրն ամրոցը, վորը դժվարացնում եր Դնեպր մուտք գործելը և խանգարում եր թուրքերի ուղիղ հաղորդակցությունը Ղրիմի հետ: Լուսարացին թուրքերն սկսեցին գնդակոծել ամրոցը, իսկ ժամը 9-ին Կինբուրնի ցամաքալեղվակի հարավային ծայրին մոտեցավ թուրքական նավատորմը և սկսեց 6 հազար յենիչերիներից*) բաղկացած զեսանտ ափ հանել:

Սովորովը Կինբուրնում և չրջակայքում ուներ մոտ 3 հազար մարդ: Սովորովը հրամայեց թուրքերի կրակին չպատասխանել, իսկ յերբ նրան զեկուցեցին, թե թուրքերը գորք են ափ հանում, նա հրամայեց չխանդարել նրանց. «Թող բոլորը դուրս գան»: Սակայն Կինբուրնի չրջակայքում տեղավորված զորամասերին հրամայված եր շտապ ամրոց գալ:


Ոտարեկրացի մասնագետների զեկավարությամբ ափ դուրս դալով՝ յենիչերիներն սկսեցին շտապ գերքեր փորել և ականներ դնել, իսկ նավերը հետ տարվեցին ծովի խորքը, վորպեսզի նահանջի հույս չմնա:

Տեղի յեր ունենալու առաջին կռիվը: Յերկու կողմի համար ել շատ կարևոր եր հաջողություն ապահովել այդ կռվում: Թուրքերն իրենց թվով կրկնակի չափով զերազան-

*) Թուրքական սուլթանի ընտիր գորքեր:

ցում էյին ուսներին, սակայն վերջիններխ գլուխ եր կանգնած Սովորովը:

Թուրքերը 15 շաբ խրամատներ էյին փորել և մեթոզիկ կերպով շարժվում էյին դեպի ամրոցը: Նրանք ամրո-




1787 թ. հոկտեմբերի 14-ին Կինբուրնի մոտ տեղի ունեցած մարտի ռիսեման

ցից ընդամենը մեկ կիլոմետր հեռավորության վրա էյին գտնվում: Սովորովն իր ունեցած զորամասերը՝ 6 դումարտակն ու 5 վաչտը զասավորել եր յերկու շաբով:

չախմատային կարգով. հեծելագործ տեղավորել եր հետե-
վակից մի քիչ հետև: Հոկտեմբերի 14-ի ժամը 15-ին թուր-
քերի առաջամասերը մինչև 150 մետր մոտեցան ուսաներին:
Ռուսները բոլոր թնդանոթներից համազարկ տվին, իսկ
գումարտակների առաջին դիժը կազակային յերկու գնդերի
և դրագունների յերկու եսկազրոնների աջակցությամբ
հարձակվեցին թուրքերի վրա ու վոչնչացրին նրանց ալան-
գարդը:

Այնուհետև, չնայած 600 թնդանոթների կրակին, վոր
տեղում եր ծովից, գեներալ Ռեկի առաջին դիժը գրավեց
թուրքական խրամատների 10 շարքը, սակայն հարկադրված
յեղավ կանգ առնել. ցամաքալեզվակը նեղանում եր և
թուրքերի դիմադրությունն ուժեղանում: Սուվորովը կուլի
մեջ քաշեց գումարտակների յերկրորդ դիժը, սակայն յե-
նիչերինները շուտ տվին նրան և նորից իրենց խրամատներին
տիրեցին: Ինքը՝ Սուվորովը, ինչպես միշտ, առաջավոր
շարքերումն եր: Կովի հենց սկզբում նրա տակի ձին սպան-
վեց: Սուվորովն ընկավ, թուրքերը հարձակվեցին նրա վրա
և փորձեցին գերի վերցնել, սակայն մի քանի վրեպոր «Յեղ-
բայրնե՛ր, փրկեցե՛ք դեներալին» գոչելով հետ քշեցին թուր-
քերին և գրոհը վերսկսվեց նոր ուժով: Յերկրորդ անգամ
խրամատներն սկսեցին իրար հետևից Սուվորովի զորքերի
ձեռքն անցնել, բայց այդ ժամանակ գնդակը կպավ Սուվո-
րովի ձախ ձեռքին և նա ստիպված յեղավ կովի գաշտը
թողնել, միայն թե շատ կարճ ժամանակով: Ծովի ջրով ի-
րեն թրջելով և վերքը շապկի թևքով փաթաթելով՝ նա
նորից յերևաց կովոդների մեջ: Կարտեչից նոր վերք կրծ-
քին: Սուվորովը գիտակցությունը կորցնում ե: Թվում եր,
թե ամեն ինչ կորած ե: Բայց նա շուտով ուշքի յե դալիս:
Ուրիշների ոգնությամբ վոտքի կանգնած՝ նա գեկավարում
ե մարտը և կովի մեջ ե նետում իր վերջին ուղեգրով՝ Ա
վաշտերը: Թուրքերն ել են լարել իրենց վերջին ուժերը:
Կովի հաջողությունը կարծես նրանց կողմն ե թեքվում,
բայց այդ ժամանակ ուսաներին ոգնության ե հասնում մի
հեծյալ բրիգադա, վորը 36 կմ. ճանապարհ եր կտրել: Թարմ



Կովի կեդրոնի մաս

զորքերը գրոհի դիմեցին մրրկալից տեմպով: Թուրքերը չդիմացան և գլխովին ջախջախվեցին: Նրանցից մոտ 500 հոգու միայն հաջողվեց նավերով փախչել ու ազատվել: Ռուսների կորուստն այդ կովում հասավ 1000 հոգու՝ ըստ պանված և վիրավոր:

Կինբուրնի հաղթանակը Սուվորովի հիանալի ղեկավարութան արդյունքն էր: Սուվորովի արտակարգ հաստատակամությունը և նրան յենթակա զորամասերի հերոսությունն ապահովեցին այդ հաջողութունը: Կինբուրնի մոտ կրած պարտությունը ծանր տպավորություն գործեց Թուրքիայի վրա: Դա մի այնպիսի խոշոր անհաջողություն էր, վորից հետո պայքարը շարունակելն անհնարին էր թվում: Չե՞ վոր Կինբուրնի մոտ կովում էլին Թուրքական լավագույն զորքերը— յենիչերինները: Սուվորովի զինվորները յերգում էլին իրենց հորինած յերգը:

«Наша Кинбурнская коса вскрыла первы чюдеса*) ..»

Ինքը Սուվորովն ամբողջ լրջությամբ դնահատում էր իր խոշոր հաջողութունը Կինբուրնի մոտ: Այդ հաղթանակի մասին գրված ղեկուցագրում նա ասում է. «Թուրքերը քաջ էլին, այդպիսիների հետ յես դեռ չեյի կովել»:

Իր աղջկանը գրած նամակում, վոր Սմոլնու ինստիտուտի ուսանողուհի յեր, նա ասում է. «Մեր կույրը շատ ավելի ուժեղ էր այն կովից, յերբ դուք իրար ականջ էք քաշքշում: Յեվ ինչպե՛ս էլինք պարում մենք. կողքիս կարտեչ, թևիս՝ զնդակից առաջացած ծակ, տակիս ձիու մուլթն էլ կտրվել էր: Ա՛յ թե կոմեդիա յեր հա՛, 8 ժամից հետո հազիվ մեզ արձակեցին թատրոնից...»:

*) Մեր Կինբուրնի ցամաքալեզուն առաջնակարգ հրաշքներից էլ անցավ:

Պատերազմը Թուրքերի դեմ շարունակվում էր: Այդ պատերազմում ռուսների դաշնակիցներն էլին ավստրիացիք:

1789 թվի հուլիսին Սուվորովը 3-րդ դիվիզիայի գլուխն անցած գտնվում էր Բիրլատում, Յասսից 100 կմ. դեպի հարավ, ներկայիս Ռուսինիայի սահմաններում: 3-րդ դիվիզիան բաղկացած էր 5 հետևակ զնդից, 8 հեծյալ զնդից և զնդային հրետանու 30 թնդանոթից: Սուվորովի դիվիզիան ռուսական բանակի ամենահեռավոր աջ թևն էր կազմում:

Սուվորովը հարևան էր իշխան Կորուբզսկու հրամանատարությամբ հենց նոր ժամանած 18 հազար ավստրիացիներին: Շատ հեռու խորքը զնացած առաջավոր ջոկատն անհարմար դրությունը թեթևանում էր նրանով, վոր այդ ջոկատի գլուխ էր կանգնած Սուվորովը: Նրա առաջ կանգնած էր ահեղ հակառակորդ, վորն իր թվական գերազանցությամբ կարող էր արորել նրան: Գործերը դանդաղ էլին ընթանում: Գլխավոր հրամանատար նշանակված Պոտյոմկինը գործ չէր անում: Կուլի ճակատում ստեղծված հանդամանքները հաշվի առնելով՝ Թուրքերը վորոշեցին արագ հարձակվել ավստրիացիների վրա, նրանց ջախջախել և դաշնակիցներից մեկին հաղթելուց հետո բոլոր ուժերով հարձակվել ռուսների վրա:

Թուրքական զորքերի գլխավոր հրամանատար մեծ վեզիրը, իր գլխավոր ուժերը կենտրոնացրած լինելով Ստորին Դանուբի վրա, Բրախլովից և Միլխտորիայից սերասկեր Մուստաֆային ու Ոսման-փաշային 30 հազար մարդով ուղարկեց Ֆոկչան, վորպեսզի Սերետի կողմից հարձակվեն դաշնակիցների վրա: Հաշիվը սխալ էր: Յեթե Թուրք-

բը նախ հարձակվելին Սուվորովի շուկատի վրա, իշխան Կորուրզակին հաղթել թե նրան ոգնության հասներ: Սակայն յերբ թուրքերը շարժվեցին ուղիղ ավստրիացիներին վրա, այդ բանն իշխանին դուրս բերեց պատսիվ վիճակից և ստիպեց խնդրել Սուվորովին, վոր նա ոգնության շտապի:

Սուվորովն իր ուժերի մի մասը թողեց Բիրլատում և մնացած ուժերով (7 հազար մարդով) անհասպաղ արշավի դուրս յեկավ, իշխանին մի դրությամբ տեղեկացնելով. «Գալիս եմ: Սուվորով»:

28 ժամում 50 կիրոմետր անտանելի ճանապարհ կտրելով Սուվորովը հուլիսի 30-ի ժամը 22-ին հասավ ավստրիացիներին մոտ այնքան անսպասելի, վոր Կորուրզը միայն այն ժամանակ հավատաց, յերբ իր աչքով տեսավ ուսաներին:


Հուլիսի 31-ի ամբողջ օրն անցավ Տրոտուչ դետի վրա կամուրջներ դրելով: Սուվորովի զորքերը լավ հանդատացան: Առավոտյան իշխանը տեսակցություն խնդրեց Սուվորովի հետ: Սուվորովը խուսափողական պատասխան տվեց: Յերկրորդ պատվիրակին պատասխանեցին, թե Սուվորովն աղոթում է աստծուն, յերրորդին թե՛ զնած է:

Այդպես էլ տեսակցություն տեղի չունեցավ:

Ժամը 11-ին Սուվորովը իշխանին ուղարկեց հետևյալ դրությունը. «Զորքերը դուրս են գալու գիշերվա ժամը 2-ին յերեք զորասյուներով, մեջտեղինն սուսներն են լինելու: Թշնամու վրա դրոհել բոլոր ուժերով, առանց աջ ու ձախ մանր բաներով դրաղվելու, վորպեսզի լուսածեղին հասնենք Պուտնա գետը, վորը կանցնենք շարունակելով դրոհը: Ասում են, թե մեր առաջ 50 հազար թուրքեր կան, իսկ մյուս 50 հազարն ավելի դենն են: Ախտոս, վոր միասին չեն. ավելի լավ կլինեք միանգամից հաշիվ մաքրել նրանց հետ»:

Դատողությունների ժամանակ չկար: Իշխանը հասկացավ, թե ինչու Սուվորովն իրեն չընդունեց: Թեև Կորուրզը նրանից ավելի մեծ էր, սակայն ակամայից ստիպված յեղավ յենթարկվել նրան:

Զորքերը դուրս յեկան լույս ոգոստոսի 1-ի գիշերը:



1780 թ. ոգոստոսի 3-ին Զսկչանի մոտ տեղի ունեցած հակառակմարտի պլանը

Տրտուչ գետի այն կողմը կաղմեցին յերկու զորասյուն, արևմտյան կողմը ավարիացիք, արևելյան կողմը՝ ուսանբը: Ռուսների առջևից գնում էր հեծելազորը, վորպեսզի նրանց ժամանումը քողարկվի:

Ուղոստոսի 2-ի առափոտյան շարունակում էին շարժումը գետի Պուտնա գետը, վորտեղ թուրքերի առաջավոր զորքերն էին գտնվում: Նրանց դիմափոր ուժերը գտնվում էին Ֆոկչանի մոտ ամբացված ճամբարում:

Ուղոստոսի 2-ի ժամը 16-ին թուրքերը դուրս մղվեցին Պուտնա գետի այն կողմը դրաված իրենց դիրքերից: Հորդ անձրևի տակ հարձակվողները կամուրջ դրեցին: Ուղոստոսի 3-ի լուսաբացին Սուլթորովն արդեն Ֆոկչանի մոտ էր:

Ավստրիացիք դասավորվեցին յերկու դժով, հեծելազորն իրենց հետևը: Սուլթորովը ևս իր ուժերը դասավորեց յերկու դժով, հեծելազորն առջևը: Թուրքերի առաջավոր ջոկատն արագորեն ջախջախվեց: Սակայն սկսվեց թուրքական հեծելազորի կատաղի դրոհը: Կռիվներում փորձված հետևակը դժվարությամբ դիմացավ նրա ճնշմանը: Թուրքերի հեծելազորը նահանջեց և դաշնակիցների առաջխաղացումը շարունակվեց:

Յերբ նրանք ճամբարին մոտեցել էին, թուրքերը կատաղի կրակ բաց արին: Սուլթորովը հրամայեց առանց կանգ առնելու առաջ գնալ: Ռուսների առաջին դիժն առանց կրակելու նվազով ու թմրկահարությամբ սվինամարտի նետվեց:

Գրոհն այնքան շեշտակի չէր, վոր Ոսման-փաշայի զորքերը դիտովին ջախջախված՝ կովի դաշտը թողին ու փախան գետի Ռիմնիկ գետը: Ռուսական թեթև զորամասերը նրանց հետապնդեցին մինչև գիշեր: Թուրքերի ամբողջ ճամբարը 16 դրոշակով ու 12 թնդանոթով մնաց Սուլթորովին:

Հաղթությունից հետո, վոր ուսանբը ձեռք բերին փոքրը կորուստով— ընդամենը 400 մարդ՝ սպանված ու վերավոր— վերջապես Սուլթորովն ու իշխան Կորուրդսկին տեսակցություն ունեցան: Սուլթորովը դանդաղաչարժ ավըս-

տրիացուն յենթարկել էր իր կամքին և նրան ստիպել, վոր դործի իր ծրագրերին համաձայն: Իշխանը հիացած էր Սուլթորովով և իր ամբողջ կյանքում մնաց նրա բարեկամը:

Ֆոկչանում թուրքերի կրած ջարդը բոլորովին անսպասելի բան էր նրանց համար:

Ռուսաստանի հասարակական կարծիքը մեծ հիացմունքով էր խոսում Սուլթորովի հաղթանակների մասին:

Թուրքերն սկսեցին անհավատորեն վախենալ Սուլթորովից: Փոքրիկ «Թուփալ-փաշան», ինչպես նրանք անվանեցին Սուլթորովին, նրանց համար դարձավ սարսափի նշան: Նրա զեկավարությամբ հաղթել սկսեցին նույնիսկ ավըստրիացիք, վորոնք մինչ այդ վոչ մի հաղթանակի ընդունակ չէլին յեղել: Սուլթորովը նրանց իներս ուժերը քաշում էր իր հետևից և նրանց անկամ մասսան զենք դարձնում իր սղանների կատարման համար:

Հարյուր հազարավորին ուժ կտա, յեթե
Իմաստուն և խորհուրդն առաջնորդի:

ՇՈՒՐՔԵՐԻ ԹՈՒՍՓՈՒՎԵԼԻ

Յոկչանի մտա տարած հաղթանակը չողտադործվեց:
Պոսյոմկինը, դեռևս պատրաստ չլինելով ընդհանուր հար-
ձակում գործելու, շարունակում էր դանդաղ, առանց վրձ-
ոսական նպատակի շարժվել դեպի Գնեստր:

Վեդիր Յուսուֆ-փաշան, ողտվելով Պոսյոմկինի բա-
նակի հեռու լինելուց, վճահց ուռաններից վրեժ աննել Յոկ-
չանում կրած պարտության համար:

Բրախլովի մոտ մինչև 100 հազար մարդ հավաքելով՝
նա իրեն միացրեց թաթարներին և Հասան-փաշայի Իդմա-
յիյան կորպուսը և այդ անեղ ուժով Բրախլովից դուրս
գալով դիմեց դեպի Յոկչան՝ խնդիր ունենալով Չախա-
խել իշխան Կորուրդսիուն և ապա հարձակվել ուռանների
վրա: Իրագործվում էր թուրքերի նույն ծրագիրը, վոր ու-
նեյին նաև Յոկչանից առաջ, միայն թե այժմ թուրքե-
րը հանդես էյին գայիս զգալիորեն ավելի մեծ ուժերով և
այդ ուժերին առաջնորդում էր ինքը՝ մեծ վեդիրը: Իր
մտադրությունը թաղցնելու համար նա ցույց էր տալիս,
թե պատրաստվում է ներխուժելու Բեսարաբիայի սոս-
մանները, հրաման ուղարկեց Ղրիմի խանին, վոր նա վոս-
քի յեյնի Կաուչանի մոտ, իսկ Հասան-փաշայի 10 հազարա-
նոց բանակն Իդմայիլից ուղարկեց դեպի Բելզորադ: Այդ-
բայից կարգադրություններով և դրանց հետևող գործողու-
թյուններով վեդիրը Պոսյոմկինին մուրրության մեջ զցեց:

Պոսյոմկինը վեդիրի ցույցն ընդունեց իսկական մտա-

զբուժյան տեղ: Թուրքերին թվում էր, թե ամեն ինչ լավ
է ընթանում: Գլխավոր վեդիրին հայտնի չեր. վոր ա-
վաստիացիների և ուռանների ուժերը միասին չեն: Իրա
համար էլ նա հույս ուներ նրանց չարդելի դատ-գատ: Վե-
դիրն այնքան վստահ էր իր հաղթանակին, վոր աչքաթոշ
արավ այն հանդամանքը, վոր ուղիղ իր առաջ ուռանկան
7 հազարանոց զորամասի գլուխ է կանգնած «Թուփայ-փա-
շան»՝ Սուլթորովը:

Թուրքերը նախ հարձակվեցին ավաստիացիներին վրա:
Իշխան Կորուրդսիլին իրեն սպառնացող վտանգի մասին տե-
ղեկանալով՝ սուբհանդակ է ուղարկում Սուլթորովի մոտ և
նրա սղնությունը խնդրում:


Սուլթորովը հասկացել էր թուրքերի մտադրություննե-
րը: Նա իր ջոկատով փոխադրվեց Պուցենի, վորտեղից
ավելի դյուրին էր ավաստիացիներին ողնել և այդտեղից
ուժեղացրեց հետախուզությունը թշնամու նկատմամբ:
Սեպտեմբերի 7-ին յեկավ ավաստիացիների յերկրորդ սուր-
հանդակը և ղեկուցեց, վոր թուրքերի վիթխարի ուժերը
կանդնած են իշխանից 16 կիլոմետր հեռավորության վրա:

Այս սեղեկությունն ստանալով՝ Սուլթորովն իր թի-
կունքն ապահովելու համար թողեց մի դումարտակ հետե-
վակ, իսկ ինքը մյուս ուժերի հետ յերկու որում ցեխացած
ճանապարհներով 75 կիլոմետր անցնելով՝ սեպտեմբերի
10-ին մտեցավ ավաստիացիներին:

Թուրքերը կանգ էյին առել Ռիմնիկ գետի ափին, ամ-
բացված ճամբարում:

Սուլթորովը վորոշում է անհապաղ հարձակվել թուր-
քերի վրա: Իշխանը չի համաձայնում դրան: Սոսում է
գաշնակիցների և թուրքերի ուժերի անհամաչափության
մասին, թուրքական ուժերը շատ մեծ են, ուռանկան զոր-
քերը հոգնած են, թուրքերի դիրքերն անառիկ են և այլն
և այլն: Սուլթորովը, վոր առարկություններ չեր սիրում,
վրդովված ասաց.

«Թշնամու թվական դերադանցություն, նրա ամբա-
ցված դիրքեր, — հենց դրա համար էլ մենք պետք է դրո-



Պայմանական նշաններ

- Բուսական պրոբեր
- Ավստրիական " "
- Թուրքական " "

ՀԵ
↑
ՀԲ

Երրեղտի

Լեւորգալ

Ռոյաթա

Ռինա

№5

№4

№3

№4

Սիրգուկուր

Կայաթի անտառ

Կարեւա

Ռինգու Մելլոր անտառ

Ռինա

Յեւնիկ

Սիվնիկ

Մարտինեղտի

Ռոյաթա

Հենք նրա վրա, վորպեսզի ժամանակ չտանք ավելի ևս ամբոնալու:

Ասենք՝ արեք ինչ ուզում եք: Յես մտադիր եմ միայնակ, իմ ուսական ուժերով դրոհել թուրքերի վրա և հույս աւնեմ, զոր մենակ ել կշխիջախեմ նրանց»:

Ինչպես Ֆոկչանի մոտ եր, այնպես ել այժմ իշխանքն ստիպված յեղավ յենթարկվել Սուլտրովի կամքին:

Սուլտրովն իսկույն մեկնեց Հետախուզության: Թուրքերի դիրքն ավելի լաջ դիտելու համար նա բարձրացավ մի բարձր ծառ: Գլխավոր վեզիրի 100 հազարանոց ասեղ բանակը կանգնած եր Ռիմնա և Ռիմնիկ գետերի միջև ընկած բարձունքներում: Ամենաբարձր կետը գտնվում եր հիշյալ գետերի համարյա մեջտեղում, Կրինդու-Մեյլոր անտառի մոտ:

Այստեղից բարձունքներն իջնում էյին յերկու կողմերի վրա դեպի Ռիմնա և Ռիմնիկ գետերը և կախվում էյին նրանց վրա սեպացած ժայռերով: Ծառ տեղեր բարձունքները կտրտված էյին խոր-խոր ձորերով: Գլխավոր վեզիրը ճիշտ եր դնահատել վայրը և գլխավոր ուժերը (40 հազար մարդ) դասավորել եր Կրինդու-Մեյլոր անտառի մոտ գլխունքված բարձունքում, յերկու թևերը տեղավորելով խոր ձորերի մեջ: Տիրգոկուլի գյուղի մոտ տեղավորված եր թուրքերի ավանդարդը՝ մինչև 15 հազար մարդ: Վերջապես մնացած ուժերը՝ 35—45 հազար մարդ, կանգնած էյին Ռիմնիկ գետի ստին, Մարտինեչտի մոտ ամրացված ճամբարում:

Հետախուզությունից վերադառնալով՝ Սուլտրովը կարգադրեց շարժումն սկսել դիշերը. ավստրիացիք՝ դեպի Կրինդու-Մեյլոր անտառը, թուրքերի կենտրոնի ու ձախ թևի վրա, ուսները պետք ե հակառակորդի աչքի առաջ շարժվելին դեպի թևը, ջախջախելին նրա ավանդարդը Տիրգոկուլի մոտ և աջ թևով շարժվելով դեպի Բիչ գյուղը՝ ավստրիացիների հետ միաժամանակ հարվածելին թուրքերի գլխավոր ուժերին: Ռուսների և ավստրիացիների միջև ձիավոր կապ եր լինելու: Ինչպես Ֆոկչանումն եր,

այնպես ել այստեղ ուսները յերկու դժով պիտի շարժվելին: Նույնպիսի կառուցվածք պատվիրված եր ավստրիացիներին:

Մեծ վեզիրը, դաշնակիցների առաջին իսկ կրակոցներեց ճիշտ վորոչեց ուսների ու ավստրիացիներին միջև յեղած մեծ տարածությունը և 20 հազար հոգուց բաղկացած իր հեծելազորին հրամայեց խփել հակառակորդների թևերին: Յերեք անգամ թուրքերը դրոհի նեավեցին, բայց ապարդյուն: Չորրորդ անգամ հանդիպելով դաշնակիցներին հեծելազորի հակադրոհին՝ նրանք նահանջեցին դեպի Բիչա:

Սուլտրովը բոլոր դժվարությունները հաղթահարելով՝ իր զորքերը շարժեց դեպի Բիչա: Անտառից 3—4 կմ հեռավորության վրա, ոգտվելով ջրհորների մոտիկությունից, նա իր զորքերին կես ժամով հանդիստ ավեց: Այդ ժամանակամիջոցում նա վայրը ինամքով դիտեց, վորպեսզի շարունակի շարժումը դեպի Բիչա: Այդ ժամանակ կռիվ դաշտը ժամանեց վեզիրը՝ թարմ հեծելազորով: Գետինը դողում եր 40 հազար ձիերի դուխյունից: Թուրքական հեծելազորն ավստրիացիներին չըջաղատեց: Սակայն այս անգամ ավստրիացիք քաջարար էյին կռվում: Մինչ այդ Սուլտրովն շտապում եր Բիչան դրավել, վորպեսզի ընկնի թուրքերի թիկունքը: Սուլտրովի մանևիրը նկատելով թուրքերն արագ նետվեցին դեպի անտառը, իսկ մասամբ ել դեպի Մարտինեչտի, վոր և ավստրիացիներին հնարավորություն տվեց իրենց թևը մոտեցնել վրա հասնող ուսներին:

Խնդիր եր դրված Կրինդու-Մեյլոր անտառը դրավել և ջախջախել թուրքական 40 հազարանոց ընտիր զորքը, վոր ամբողջովին բաղկացած եր յենիչերիներից: Խնդիրը բարդ եր: Բայց Սուլտրովն այն լուծեց հակառակորդի համար անսպասելի մի համարձակ մանևիրով: Հակառակ թևերի յի ու պրակտիկայի՝ նա թուրքական խրամատները նետեց իր հեծելազորը, իսկ նրա հետևից ել հետևակը վաղբով: «Չարմայնեկ ու հաղթել», ստում եր նա: Թուրքերն այս անակնկալից շճել էյին: 600 մեար հեռավորությունից

դաշնակիցներէ հեծելազորն իր հետեակէ առաջն անցնելով
 ուրանում եր թուրքերի ամբողջ յուններէ վրա: Ստա-
 րոգութեան կարարինակիր դունդը դնդապետ Միկայելակա-
 զլիաւորութեամբ առաջինը նեովեց խրամատներէ վրայով,
 նրա հետեից նեովեցին ավստրիական հուսարները: Կա-
 զակները թուրքերի վրա հարձակվեցին թիկունքից: Յենի-
 չերինները դեռ չեյին կարողացել ուշքի գալ, յերբ դաշնա-
 կիցներէ հետեակը «ուռա» դոչելով վրա տվեց հեծելազորի
 հետեից: Սկսվեց մի սոսկալի կոտորած: Թուրքերն սկսե-
 ցին նահանջել: Իզուր եր մեծ վեղիրը փորձում կանդնեցնել
 փախչողներին, դուրան եր կարգում, ազաչում, սպանում,
 թնդանոթներ կրակում— վոչինչ չեր ողնում. թուրքերը
 խուճապէ մատնված փախչում եյին: Փախչողներին կանգ-
 նեցնելու բոլոր միջոցներն սպառելով՝ կովի դաշտից դուրս
 սլացնով նաև ինքը՝ վեղիրը: Հաղթանակը լիակատար եր:
 Կովի դաշտում ամենուրեք փռված եյին թուրքերի դիակ-
 ներ: Նրանցից մոտ 15—20 հազար մարդ սպանված ու վի-
 րավոր ընկած եր կովի դաշտում, մյուսները ցրվել եյին:
 Հետագայում մեծ վեղիրը հավաքեց միայն 15 հազար
 մարդ: Հաղթողներէ կորուստներն այդ կովում չնչին ե-
 յին, 2000 մարդուց չեր անցնում:

Հարյուրավոր դրոշակներ, 80 թնդանոթ, մի քանի հա-
 զար սայլ՝ բարձած դանազան բարիքներով և անասուններէ
 ամբողջ նախիրներ ավար մնացին հաղթողներին:

Ռիմնիկի հաղթանակն ընդհանուր հիացմունք առաջաց-
 րեց և՛ Ռուսաստանում և՛ Ավստրիայում: Սուվորովի անու-
 նը դարձավ ժողովրդական սիրված անուն:

Կառուցված եր Դանուբի ծանծաղուտի վրա
 Արևելյան վոճով քաղաքը— Իզմայիլ:
 Պաշտպանում եր ամբողջ ձախ ափը նրա,
 Առաջնակարգ ամբոց եր Իզմայիլը հին:
 ՌԱՅՐՈՆ

1790 թվականին Իզմայիլը խիստ ամրացված եր: Գըլ-
 խափոր պատնեշը ձգված եր 6,5 կմ, յերկարութեամբ և ու-
 ներ յոթ բուրդ ու բաղձաթիվ ներս ու դուրս ընկած ան-
 կյուններ: Նրա հարավ-արևելյան մասում, ճակատը դեպի
 դետն արած կար մի փոքրիկ աշտարակ՝ 11 մետր բարձրու-
 թեամբ, 22 թնդանոթով: Ամբոցի պարսպի բարձրութունը
 6—8 մետր եր, նրա տակ փորված խրամատն ուներ 12
 մետր լայնութուն, 6—10 մետր խորութուն և տեղ-տեղ
 լիքն եր մինչև մարդու ուսերը հասնող ջրով: Բոլոր ամ-
 բուրքանները, բացի յերկու քարե աշտարակներից, հողից
 եյին: Հյուսիսային դուրս ցցված անկյունում Բենդերյան
 աշտարակը յերեսապատած եր քարով: Գետի կողմը համե-
 մատարար թույլ եր, սակայն թուրքերը չեյին յենթադը-
 րում, թե ուսները կմտնեն Դանուբի հունի մեջ: Ինքը՝
 քաղաքն աստիճանաձև կառուցվածք ուներ: Ամուր կա-
 ուցված աները, հյուրանոցները, մզկիթները նպաստում
 եյին պաշտպանութեան գործին: Հաղորդակցութունը տե-
 դի յեր ունենում չորս դարբասներով՝ Յարդաղյան և Խո-
 տինյան դարբասները հյուսիս-արևմտյան կողմում և Բեն-
 դերյան ու Քիլիսյան դարբասները՝ հյուսիս-արևելյան
 կողմում:

Ամբոցի սպառազինումը բաղկացած եր 200 խոշոր թըն-
 դանոթներից: Կայազորը հասնում եր 35 հազար մարդու,
 վորից 8 հազարը հեծելազոր, 17 հազարը յենիչերիներ, մի
 քանի հազար էլ թաթարներ: Ռազմամթերքն տուտա եր,
 կենսամթերքը՝ մեկ ու կես ամսով:

Ամրոցի պաշտպանութեան գլուխ եր կանգնած Այգուղի Մեհմեդ-փաշան, վոր կռիւներում ձերմակած, վճռակտն, ամուր ու գործունյա մարդ եր:

Սուլթանը հայանել եր, վոր Իզմայիլի անկման համար բերգասպահներէց բոլոր կենդանի մնացածներին մահապատի յե յենթարկելու:

Իզմայիլն առաջնակարգ ամրոց եր, այն ժամանակվա համար լավ դինված, ուժեղ կայսղորով և փորձված ու վճռական առաջնորդով:

1790 թվականի աշնանը հանգամանքներն այնպես եյին դատաւորվել, վոր հարկավոր եր մի ուժեղ հարվածով Թուրքիային հարկադրել, վոր հաշտութուն կնքի, նախ քան թշնամի պետութիւնները կկարողանային նրան ոգնութեան հասնել: Թվում եր, վոր Իզմայիլին շտապ տիրելը պատերազմին վերջ կդնի:

Յերկու անգամ արդեն ուսաները մտտեցել եյին Իզմայիլին, սակայն անհաջող: Սուլթորովի ժամանելուց մի քանի օր առաջ Իզմայիլը զրոհով առնելն անհնարին եր համարվում: Արդեն հրաման եր արված հետ քաշվել Իզմայիլից և մի քանի զորամասեր սկսել եյին կատարել այդ հրամանը:


Ամրոցը ցնծութեան մեջ եր:

Տեսնելով՝ հետանում են զորքերը,
Անաստան հրճվեցին թուրքերը,
Բայց հրճվանքը կարճատև յեղավ:

ԱՍՅՐԱՆ

Պատյոմկիներ, վոր այդ ժամանակ ապրում եր Քենդերում, սիրտ չեր անում վճռական միջոցների դիմել Իզմայիլը գրավելու համար: Պատմում են, թե իբր մի կին իսպաթղթով գուշակութուն անելով, նրան ասել եր, թե Իզմայիլն անձնատուր կլինի յերեք շաբաթից հետո:

— Յես ձեզանից լավ կարող եմ գուշակել, — պատասխանել է նրան Պատյոմկիներ և Սուլթորովին հրաման է ուղարկել՝ ինչ գնով ել լինի գրոհով վերջնել Իզմայիլը:



Իզմայիլի գրոհը 1790 թ. դեկտեմբերի 11-ին

Կարճ անկեցին Սոււփորովի պատրաստութիւնները: Իդ-
մայիլի պաշարումը ուժեղացնելու համար նա Գալացից այն-
տեղ ուղարկեց Փանազորյան դրենադերներին, 200 կազակ,
հազար արնաուտ և Ապշերոնյան գնդի 150 կամավոր, 30
յելարան, հազար ճեղան և պարենամթերք: Իսկ ինքը ձիով
առաջ օլացավ:

Գեկտեմբերի 2-ի լուսարացին Իզմայիլին մոտեցան յեր-
կու ձիավոր, յերկուսն ել ցեխաթաթախ: Այդ Սոււփորովն
եր և մի կազակ, վորը մի փոքրիկ կապոցով տանում եր
առաջնորդի գույքը... Վողջույնի համազարկ հնչեց, ընդ-
հանուր ուրախութիւնն արագորեն տարածվեց բոլոր զո-
րամասերում: Այդ փոքրամարմին, անսպաճույճ 60-ամյա
ձերունու մեջ նրանք տեսնում եյին վերահաս հաղթանակը:

Ո՛վ եր հեղաշրջման պատճառը համարվում,—

Ծերունի՛ն,— վոր ամբոխ եր կառավարում:

ԲԱՅՐՈՆ

Անմիջապես յեռուն աշխատանք ծավալվեց: Սոււփորովն
ամեն որ սպանների հետ դուրս եր գալիս հետախուզու-
թյան, սուսումնասիրում եր վայրի յուրաքանչյուր դար ու
փոսը, ցուցումներ եր տալիս, թե զորքերը վո՛ր կողմից և
ինչպե՛ս գրոհի տանել ամրոցի վրա:

Մարտկոցները ծածկվեցին, վորպեսզի թուրքերին հա-
մոզեն, թե յերկարատե պաշարման մտադրութիւն ունեն:

Ճամբարում Իզմայիլի պատնեշների ու խրամատների
նման պատնեշներ ու խրամատներ պատրաստվեցին և զի-
շերները Սոււփորովն ինքը զորքերին սովորեցնում եր, թե
ինչպես պետք է հաղթահարել այդ պատնեշներն ու խրա-
մատները: Պատրաստվում եյին յելարաններ ու ճեղաններ:

Ուսուցում եր՝ հասարակ մի յենթասպա վորպես,—


Չեր կորցնում վո՛չ մի տեղ և վոչ մի վայրկյան.

Քրշում եր փոսերով, վարժեցնում այսպես,

Վոր զիմանան հրին, ինչպես սալամանդրան:

ԲԱՅՐՈՆ

Սոււփորովը հսկայական աշխատանք եր կատարում,
վորպեսզի բարձրացնի իր զորքերի հավատը հաղթանակի
նկատմամբ: Նա շրջում եր ճամբարում, խոսում զինվորնե-



Իզմայիլի ցրտիչ

քի ու սպաների հետ, հիշեցնում նախկին հաղթութիւնները, մատնանշում Իզմայիլը զբաղեցրու զժվարութիւնները:

— Տեսնո՞ւմ եք այս ամբողջը, — ասում էր նա ցույց տալով Իզմայիլը: — Նրա պարիսպները բարձր են, խրամատները՝ խոր, բայց և այնպես մենք պե՛տք է գրավենք այն:

— Քեզ հետ միասին կգրավենք, — խանդավառութեամբ պատասխանում էին զինվորները:

Բայց ինչպե՞ս տնել գեներալների հետ: Չե՞ վոր դեռ նոր էր, վոր նրանք անհնարին էին համարում այդ ամբողջը գրավելը և վորոշել էին նահանջել այնտեղից:

Սուլթանը, վոր դեմ էր ամեն տեսակ խորհրդակցութիւնների, վորոշում է ուղղական խորհուրդ հրավիրել: Սակայն այդ խորհուրդն անց է կացնում իր ուղածի պես՝ նա մի կրակոտ ճառ է ասում, նշում է, թէ ուսները յերկու անգամ անհաջող հարձակում են գործել Իզմայիլի վերա, բայց յերրորդ անհաջողութիւնն անհնարին է: Կամ պետք է ամբողջ գրավել, կամ մեռնել նրա պատերի տակ:

— Յես վճռել եմ կամ ամբողջ գրավել, կամ մեռնել նրա պատերի տակ, — վերջացրեց նա:

Ընդհանուրի վորոշումը յեղավ՝ գրոհել:

Իզմայիլի բախտը վճռված էր:

Յերբ համարյա ամեն ինչ պատրաստ էր գրոհի համար, Սուլթանը գեկտեմբերի 7-ին առաջարկութիւն ուղարկեց Իզմայիլ՝ ամբողջ հանձնել: Նամակին կցեց իր գրութիւնը. «Սերասկերին, պետերին և ամբողջ հասարակութեանը: Յես գորքով այստեղ եմ ժամանել: 24 ժամ ձեզ կու՞թյանք: Յես գորքով այստեղ եմ ժամանել: 24 ժամ ձեզ կու՞թյանք: Իմ առաջին կրակոցներն արդեն փրկութիւն չեն բերի: Գրոհը մահ է: Թողնում եմ ձեր հայեցողութեանը»:

Սերասկերը պատասխանեց նամակով, խնդրելով 10 օր զինադադար, իսկ բերանացի ավելացրեց. «Ավելի շուտ Դանուբի հոսանքը կանդ կառնի և յերկինքը կփլի յերկրի վրա, քան թէ Իզմայիլը անձնատուր կլինի»:

Սուլթանը սերասկերի պատասխանին հասկացավ

Թուրքերի վճռական մտադրութեանը և իր գորքի մեջ հաղթանակի ծարալն ավելի բորբոքելու համար հրամայեց սերասկերի հպարտ պատասխանը կարգաւ դորամասերում:

Իզմայիլի մոտ Սուլթանին ուներ 31 հազար մարդ, վորից 13 հազարը հետեակ կաղակներ: Նրանց զգալի մասը զինված էր միայն կարճ նիղակներով, սակայն Սուլթանը նրանց ներչնչեց, թէ՛ «ձեր զենքը նեղվածք տեղում գործելու համար ամենահարմարն է»:

Իզմայիլի վրա գրոհելու Սուլթանի հրամանը չգերազանցված մի որինակ է հանդիսանում: Դիսպոզիցիայի մեջ նշված էին բոլոր էյական բաները, սկսած զորասյուների կազմից և վերջացրած ճեղանների թվով ու յեւրանների յերկարութեամբ: Վորոշված էր հրաձիգների թիվը զորասյուններում, նրանց տեղն ու դերը, ինչպես և բանվորներին: Նշանակված էին առանձին ու ընդհանուր ռեզերվներ, նրանց տեղն ու ոգտագործման պայմանները: Յույց էին արված ամբողջի ներսում զդուշութեան կանոնները, ճշտորեն նշված էին զորասյունների բռնելիք ուղղութիւնը, ամբողջի շրջափակում նրանց տարածման սահմանները և այլն:

Այդ կարգադրութիւնները լավ ուսումնասիրեցին ու հասկացան ինչպես սպաները, այնպես էլ զինվորները:

Չորքերը բաժանված էին յերեք թևի, յուրաքանչյուրում յերեք զորասյուն: Դե-Ռիբասը (8 հազար մարդ) գետի կողմից, աջ թևը բռնում էր Պոսյոմկինը (7,5 հազար մարդ) ամբողջ արևմտյան կողմում, ձախ թևը՝ Սամսյուլը (12 հազար մարդ) ամբողջ արևելյան կողմում: Զիս-վար ռժանդակ ուժը՝ Վեստֆալները (2,5 հազար մարդ)՝ ցամաքի կողմն էր: Դիսպոզիցիոն հարվածը գետի կողմիցն էր:

Գրոհը նշանակված էր գեկտեմբերի 11-ին: Անակնկալի բերելու համար Սուլթանը վորոշեց հարվածը հասցնել զիչերով: Դրանով նա հետապնդում էր մի ուրիշ նպատակ ևս. համառ դիմադրութեան սպասելով՝ նա ցանկանում էր արվա լույս ժամանակն ավելի յերկար ոգտագործել:

Գրոհը միաժամանակ սկսեց. հարկար ոսկետի ազգա-

նշան եր սահմանված: Յերրորդ աղանչանին, առավոտյան ժամը 5-ին գրոհը պիտի սկսվեր, բայց, վորպեսզի թուրքերը գլխի չընկնեն, հրամայված եր ամեն գիշեր ճամբարում ռակետներ արձակել:

Լույս ղեկավարների 11-ի գիշերը խավար եր ու մտախառն: Սուլթորովն անձամբ չըլնեց թմբերը, ստուգեց պահակային ծառայութիւնը: Վոչ վոք քնած չեր: Զինվորներն ու սպաները խարուկների մոտ հավաքված առաջիկա գրոհի մասին ելին խոսում: Սուլթորովը չըլում եր ճամբարներում և նրանց հետ զրույցներ սկսում: Սիրված զորավարի հասարակ ու կենդանի խոսքերը սրտեր ելին բորբոքում: Բոլորը փափազում ելին ցույց տալ, վոր իրենք արժանի յեն գովասանքի:

Գիշերվա ժամը 1-ին Սուլթորովը պառկեց խարուկի մոտ, սակայն քնել չկարողացավ: Ակներև ե, այգպիսի գիշերներին մարդու քուն չի տանում: 22 տարի հետո Բորդինոյի ճակատամարտից առաջ նույնպես քնել չեյին կարողանում վոչ Նապոլեոնը, վոչ Կուտուզովը:

Ժամը 3-ին ռակետը դալարվեց ողում: Զորամասերը գրավեցին նշանակված տեղերը: Ժամը 5-ին գիշերային խավարը ճեղքեց յերրորդ ռակետը և զորքերը գրոհի անցան: Թանճր մառախուղը ծածկում եր նրանց շարժումը: Մի ակնթարթ՝ և հրավառ ողակը չըջապատեց ամրոցը: Դըղըրդացին ամրոցի 250 թնդանոթները և վորպես նրանց պատասխան՝ գետի կողմից սկսվեց 500 թնդանոթների կըրակը: Զորամասերն արագորեն մոտենում ելին խրամատին՝ նրա վրա նետելով ճեղանները: Խրամատն արագորեն հաղթահարեցին և յեւրանները ամրոցի պարիսպներին ղեժ տալով՝ սկսեցին վեր մագլցել: Առաջինը պատնեչի վրա բարձրացավ Լասսին, նրան հետևեցին Լվովի զորամասերը: Շուտով Բենդերյան և Խոտինյան դարբասները ուսների ձեռքումն ելին: Բաց դարբասներով Իգմայիլի ներսը լցվեց հեծելազորը:

Պակաս հաջող եր ընթանում Կուտուզովի գրոհը Քիլիսյան դարբասի ուղղութիւնը: Նկատելով Կուտուզովի գո-

րամասում յեղած դանդաղկոտութիւնը՝ Սուլթորովը նրան լուր ուղարկեց, թե նա նշանակվում ե ամրոցի պարետ: Այդ Կուտուզովի զորամասում ջանքերի լարում առաջացրեց և Քիլիսյան դարբասը գրավվեց:

Մեկնորի յեւրանները կարճ դուրս յեկան: Հարկ յեղավ մահացու կրակի տակ յերկուսական յեւրան իրար կապել: Վերջապես հաջողվում ե պատնեչի վրա բարձրանալ, սակայն այդտեղ հանդիպում ե ինքը՝ սերասկերը՝ ընտիր յենիչերիններով: Մեկնորն ընկնում ե մահացու վիրավորված, համարյա բոլոր սպաները կոտորվում են, բայց պատնեչը գրավվում ե, վորովհետև Սուլթորովի բանակում յուրաքանչյուր զինվոր «պիտե իր մանեվրը», և նրանք բոլորը միասին դժվար հաղթահարելի ահեղ ուժ են հանդիսանում:

Ուլովն արդեն մագլցում եր պատնեչի վրա, յերբ հանկարծ թուրքերի մի բաղմութիւն կողքից հարձակվեց կազակների վրա: Նիդակները փչրվում ելին թուրքերի թրերի հարվածից: Անդեն կազակները կոտորվում ելին: Սուլթորովը նրանց ողնութիւն ուղարկեց հեծելազորը և Պոտոցկու գնդի յերկու գումարտակը: Թուրքերը ջախջախվեցին և նրանց մի մասը միայն փրկութիւն գտավ ամրոցում:

Պլատովը մինչև գոտին ջուր լցված խրամատն անցնելով բարձրացավ թումբը և «իմ հետեվից» գոռայով առաջ նետվեց: Նրա որինակը վարակեց զորքին և մի ուժեղ հարված տալով զորքը մտավ ամրոց:

Դե-Սիրբասի զորամասերն արագ ու կանոնավոր անցան Դանուբը, Իգմայիլի պատերի տակ ափ դուրս յեկան և տիրեցին նրա պատնեչին:

Լույսը բացվեց: Գլխավոր պատնեչն ամենուրեք ուսների ձեռքումն եր: Թուրքերը քաղաք նահանջելով՝ պատրաստվում ելին վերջին վճռական ընդհարմանը:

Կարճատև հանդատից հետո, իրենց կարգի բերելով, հրացաններն առաջ մեկնած, յերաժշտութիւն նվագի տակ անդուսպ կերպով առաջ նետվեցին Սուլթորովի հերոսները և գրոհեցին ամրոցի վերջին պաշտպանութիւն վրա: Քաղաքի ներսում կատաղի կռիվ սկսվեց: Մարտնչում ելին յուրաքանչյուր օան համար:

Յերեկվա ժամը 4-ին, ճիշտ Սուվորովի հաշված ժամին՝ Իզմայիլն ընկավ: 35 հազար բերդապահներէց 26 հազարն սպանված ու վիրավորված էին, 9 հազարը դերի առնված: Հատ ու կենտ մարդկանց միայն հաջողվեց հեռանալ ամբողջից: Դանուբն ամբողջովին կարմրել էր արյունից:

Ռուսների կորուստն էր 4000 սպանված և մոտ 6 հազար վիրավոր:

Ա. Պետրուշևիչին Սուվորովի մասին դրած իր աշխատութեան մեջ Իզմայիլի դրոհն այսպես է բնութագրում.

«Իզմայիլի դրոհն աչքի յե ընկնում թուրքերի գերմարդկային համառութեամբ, և այդ հասկանալի յե նրանք գիտեցին, վոր դրոհից առաջ տեղի ունեցած բանակցութիւններէց հետո իրենց նկատմամբ խնայողութիւն չի լինելու: Բայց անհույս կատաղութեան այդ համառութիւնը, վորին մասնակցում էին նույնիսկ զինված կանայք, կարելի չեղավ կտորել միայն դրոհողների յեռանդի ծայրահեղ լարումով, նրանց հոգու գերագույն բորբոքումով: Այդ ամենն էլ հենց արել էր Սուվորովը: Իզմայիլի պատերի տակ ողւս զորքերի քաջութիւնը հասավ ինքնապաշտպանութեան զգացմունքի կատարյալ բացասման: Սպաները, գլխավոր պետերը առաջին շարքումն էին, կռւում էին շարքայինների նման, չնայած ստացած բաղձաթիվ վերքերին, իսկ սպանվածներն այնքան էին այլանդակվել սոսկալի վերքերից, վոր շատերին անկարելի յեր ճանաչել: Զինվորները սպաների հետևից առաջ էին նետվում ինչպես վորևէ մրցութեան ժամանակ: Անընդհատ վտանդի, հոգեկան բորբոքման ու Ֆիզիկական լարումի 10 ժամերը չէին կտորում նրանց յեռանդը, չէին նվազեցնում նրանց ուժերը: Գրոհին մասնակցածներից շատերը հետո ասում էին, վոր ցերեկվա լույսով, հոգեկան հանդիստ վիճակում նայելով այն տեղերին, վորոնցով նրանք վեր ու վար են արել գիշերային խավարում, սոսկացել են և չեն ցանկացել իրենց աչքերին հավատալ և հազիվ թե ցերեկով սիրտ անեյին կրկնել նույն բանը»:

Ինքը՝ Սուվորովը՝ ևս ասում էր, վոր այդպիսի դրոհ կարելի չէ կատարել կյանքում միայն մեկ անգամ:

Իզմայիլի դրոհը անորինակ մի դեպք է պատերազմների ամբողջ պատմութեան մեջ:

Սուվորովը Իզմայիլի դրավման մասին իր սովորական լակոնականութեամբ այսպես գեկուցեց թագուհուն՝ «Գոռոզ Իզմայիլը ձերդ մեծութեան վտարերի տակ է», Պոյոյոմ-կինին՝ «Ձի յեղել ավելի ամուր բերդ, քան Իզմայիլը, ավելի կատաղի պաշտպանութիւն, քան Իզմայիլի պաշտպանութիւնը, բայց Իզմայիլը դրավված է: Շնորհավորում եմ: Ա. Սուվորով»:

Վեց ուր քաղաքը մաքրում էին դիակներէց: Գրավված էր հարուստ ավար՝ հենց միայն ձիեր վերցված էր ավելի քան 10 հազար հատ, թանգարժեք իրեր՝ ավելի քան մեկ միլիոն ուրբու, մեծ քանակութեամբ զինամթերք և պարեն:

Իզմայիլի ջարդը չմեղուցիչ սպավորութիւն գործեց թուրքերի վրա: Շատ ամրոցներ, վախենալով թե Իզմայիլի բախտին կարժանանան, հանձնվում էին առանց կռւի: Թուրքիայի սիրտը տանող ճանապարհը բացված էր:

Ռուսաստանում ցնծութեանն ու հիացմունքին սահման չկար:

Բանաստեղծ Դերժավինը Իզմայիլը նվաճող հերոսին փառաբանում է հետևյալ տողերով.

Վեզովի բոցն է խաղում բռնկած,
Հրավառ սյուն է խավարում կանգնած,
Ալ-կարմիր հազած այգն է բոցկտում,
Սև քուլաներով ծուխն է բարձրանում.
Կարմրում է Պոնտոսն ահեղ վորոտում,
Հարվածն հարվածին իջնում է ուժգին,
Դողում է յերկիրն, հորդ անձրև տեղում,
Յետում գետերը լավայի պես տաք:
Ո՛ր, Ռուսիա՛, ահա պատկերը փառքիդ,
Վո՛ր տեսավ աշխարհն Իզմայիլի տակ:

Իզմայիլի առումից հետո հերոս Սուվորովի անունը իր ժամանակակից բոլոր անուններից ավելի վեր բարձրացավ:

Նա ընդհանուր ուշադրութեան ու զարմանքի առարկա դարձավ վոչ միայն Ռուսաստանում, այլ և արտասահմանում:

19-րդ դարի ընթացքում քանի՛-քանի անգամ թուրքիայի դեմ մղած կռիվներում ռուսական զորքերը պաշարել ու գրոհել են ամրոցներ, սակայն վոչ մի անգամ, նույնիսկ նրա լավագույն աշակերտները, ինչպիսին էր Կուտուզովը, չեն հասել այնպիսի վարպետութեան, ինչպիսի վարպետութիւն ցուցաբերեց Սուվորովը Իզմայիլի տակ, յերբեք այնքան լրիվ կերպով չի ուղտադործվել զորքի հոգեկան ու Ֆիզիկական ուժերը, ինչպես այդ արեց Սուվորովը Իզմայիլը գրավելիս:

ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԼԵՆԱՍՏԱՆ

Լեհաստանի յերկրորդ բաժանումից հետո նրա վերականգնման համար ապստամբութիւն բարձրացրեց լեհական տաղանդավոր զորավար Փադեյ Կոստյուչկոն: Այդ ապստամբութեան ժամանակ լեհերի ուժերը հասնում էին 70 հազար մարդու: Լեհաստանում գտնվող ռուսական թույլ ջոկատների նկատմամբ տարած առաջին հաղթութիւնները խիստ վողեվորեցին ապստամբներին: Իր զորքով Վարչավայում գտնվող գեներալ Իգելստրոմի անհույսութիւնից ու սխալներից ոգտվելով՝ լեհերը հարձակվեցին ռուսների վրա և կոտորեցին ավելի քան 2 հազար մարդ: Կոստյուչկոն Վարչավան գրավեց և խիստ ամրացրեց նրա արվարձանը՝ Պրաղան: Մոտենում էր 1792 թվի աշունը: Թվում էր, վոր ձմեռը վրա հասնելու հետ պատերազմը պիտի ընդհատվեր, իսկ այդ լեհերին հնարավորութիւն կտար ամրանալ գրաված դիրքերում և ոտարեկրացիների ոգնութեամբ յերկա: ձգձգել պատերազմը:

Ոգոտոսի 27-ին Սուվորովը 4,5 հազար մարդով ու 10 թնդանոթով դուրս յեկավ Նեմիրովից, իսկ սեպտեմբերի 4-ին, 9 օրում 250 կմ. անցնելով, արդեն Վարկովիչուսն էր: Վարչավայի ճանապարհին նա իրեն միացրեց Բուկոգեդենի և Մարկովի ջոկատները: Նրանց հետ միասին Սուվորովի ուժերը հասան 11 հազար մարդու և 26 թնդանոթի: Սեպտեմբերի 10-ին Սուվորովը Կովելումն էր, իսկ 17-ին՝ Կորբինի մոտ, վորտեղ ջարդեց Սիրակովսկու առաջավոր զորամասերը: Ինքը՝ Սիրակովսկին իր գլխավոր ուժերով քաջվեց գեպի Բրեստ: Առանց իր զորքերին հանդիստ տալու՝ Սուվորովը հասավ Սիրակովսկու հետեից և սեպտեմբերի 21-ի լուսաբացին վեց ժամյա կատաղի կռիվով վոչնչացրեց նրա կորպուսը:

Մակայն այդ հաղթանակը թանգ նստեց նաև Սուվորովի գործերին. սպանվեց ու վիրավորվեց մոտ 1000 մարդ։ «Բրեստի կորստան աշտորվանից դոյություն չունի», գեկուցում է Սուվորովն այդ ճակատամարտի մասին։ Մինչ այդ լեհերը չեյին ուղում հավատալ, թե իրենց վրայ չե գալիս նշանավոր Սուվորովը։ Այժմ այդ բոլորի համար պարզ էր։ Կոստյուչկոն դուրսը կորցրել էր։ Յանկանալով խանդարել Սուվորովի ու Ֆերդենի ուժերի միացմանը՝ Կոստյուչկոն հոկտեմբերի 12-ին Մայնովիցի մոտ հարձակվեց Ֆերդենի ջոկատի վրա։ Կռիվը Կոստյուչկոյի համար անհաջող յեղավ. այդ կռվում նա ջախջախվեց և դերի ընկավ։ Սուվորովը վորոշեց անհապաղ շարժվել դեպի Վարշավա։ Ֆերդենին ու Դերֆելդենին հրամայեց դնալ իրեն միանալու։ Իր գործերի մի փոքրիկ մասը թողնելով Բրեստում՝ Սուվորովը հոկտեմբերի 20-ին Տ հաղար մարդով դուրս յեկավ դեպի Ֆանով։ Հոկտեմբերի 27-ին Ստանիսլավովում նրան միացավ Ֆերդենը 11 հաղար մարդով։

Դերֆելդենն այդ ժամանակ գտնվում էր Բուդ դետի վրա, Վիշկովի մոտ։ Տեղեկանալով, վոր Ոկունեվում և Կորելիում լեհական խոշոր ուժեր կան, Սուվորովը Ֆերդենին ուղարկում է Ոկունեվի կողմը, իսկ ինքն շտապում է դեպի Կորելի, վորտեղ հոկտեմբերի 28-ի առավոտյան վոր շնչացնում է Մակրանովսկու ուժերի մի մասը։ Դա մի չըտեսնված կռիվ էր։ Ձիերից իջած հեծելազորն այնպիսի սուսերամարտ տվեց, վոր ինքը՝ Սուվորովը հետագայում ասում էր, թե դեռ յերբեք ինքն այդպիսի բան չեք տեսել։

Կորելիում Սուվորովը կանգ առավ հանդստանալու։ Մինչև Պրագա մի քանի կիլոմետր էր մնում։ Հարկավոր էր սպասել Դերֆելդենին և գրոհը նախապատրաստել։

Պրագան այն ժամանակ մի աղքատիկ ավան էր Վիսլայի աջ ափին։ Վարշավայից Պրագա յեր տանում մի կամուրջ, վորը փոքրիկ ամրություն ուներ։ Պրագան բոլոր կողմերից շրջապատված էր հողե հին պատնեչով։ Հին պատնեչի առաջ Կոստյուչկոն ամրություն էր շինել սկսած Վիսլայից մինչև ճահճոտ, վորտքով անանցանելի գետակը։

Ամրությունները յերեք շարք էյին կազմում. 1) ճյուղապատվարներ և զայլազուբեր, 2) հողապատնեչ և փոսեր՝ հետևակի ու հրետանու համար, 3) 43 մարտկոցներ՝ պատնեչի վրայով կրակելու համար և 4) դուրս ցցված անկյունում յերկու ամուր աշտարակներ։ Ամրոցի սպառազինումը բաղկացած էր 104 թնդանոթից։


Հոկտեմբերի 31-ին Սուվորովը իր ջոկատի բոլոր ավադ հրամանատարների հետ հետախուզություն կատարեց։ Նոյեմբերի մեկին նրա մոտ՝ Կորելիկ յեկավ Դերֆելդենի ջոկատը, վորով նա ունեցավ 18 հաղար հետևակ, 7 հաղար հեծյալ և 5 հաղար կազակ։

Նոյեմբերի 6-ին նշանակված էր Պրագայի գրոհը։ Սկսվեց այդ գրոհի յետուն նախապատրաստությունը։ Ամենինչ արվում էր այնպես, ինչպես Իզմայիլի տակ։ Սուվորովը, ինչպես և Իզմայիլի մոտ, շարունակ գորքի մեջ չըրջելով ու զինվորների հետ զրույցներ ունենալով չափազանց վորդեվորում էր նրանց և հաղթանակի լիակատար հավատ ներշնչում։

Նոյեմբերի 5-ին ռուսական բոլոր մարտիկները կրակ տեղացին Պրագայի ամրությունների վրա։ Գրոհից անմիջապես առաջ զորամասերում կարդացվեց Սուվորովի հրամանը՝ նույնքան հակիրճ ու ազդու, ինչպես և Իզմայիլի մոտ էր։ Զորքը դասավորված էր յոթ զորասյունով. 1-ինը լաստին էր, վորի խնդիրն էր՝ հյուսիսային կողմից թշնամուն կտրել կամուրջից, 4-րդի՝ Բուկադեդենի խնդիրն էր՝ դրավել Ավադարլուրը և Գաղանանոցը, 5-րդը՝ Տորմասովը դեպի կամուրջ տանող ամենակարճ ուղղությամբ պետք է դրավեր արևելյան ճակատը, 2-րդ, 3-րդ և 6-րդ զորասյունները պետք է դրավեյին արվարձանի պատնեչը։ 7-րդ զորասյունը— Դենիսովիները— պետք է մյուսներից 2 ժամ շուտ դուրս գար և 1-ին զորասյունին ուղներ կատարելու իր խնդիրները— թշնամուն հարավից կտրելու կամուրջից։

Ժամը 4 և 30 րոպեյին գրոհն սկսվեց։ Դժվար է նկարագրել այդ գրոհի սոսկալի պատկերը։ Ամենինչ խառնվել, դարձել էր մի գարհուրելի առճուռնա մասսա։ Լե-

Հերը պաշտպանվում էյին կատաղորեն: Սուվորովի զին-
վորները կռվում էյին առյուծի նման և խորտակում էյին
ամեն ինչ, ինչ վոր նրանց առաջն եր դալիս: Յերբ ուս-
ները ներխուժեցին Պրագա, կոտորածն ավելի սաստկացավ:



1794 թվի նոյեմբերի 6-ին Պրագայի գրոհի սխեմա

Պրագայի բնակիչները կրակում էյին կոտորներից ու պա-
տուհաններից, զանազան ծանրություններ էյին գցում ուս-
ների զլխին, յեռացող ջուր էյին թափում նրանց վրա: Այդ
ավելի յեր բարբոքում ուսաներին: Սուվորովը հրաման ու-

ղարկեց սպաներին, վոր բնակիչներին խորհուրդ տան
փախչել ուսաների ճամբարը, վորտեղ նրանք վտանգից
ազատ կլինեն, բայց բնակչության մեծ մասը չօգտվեց
զրանից և զարհուրելի կռիվներում զոհ գնաց Պրագայի
փողոցներում: Վախենալով, թե Վարչավան ել նույն վի-
ճակին կհասնի՝ Սուվորովը հրամայեց Վիսլայի կամուրջը
վառել, վորպեսզի կանխվի այդ քաղաքի ավերումը: Նո-
յեմբերի 6-ի առավոտյան ժամը 9-ին ամեն ինչ վերջացած
եր. ամբողջ Պրագան ուսաների ձեռքումն եր:

Լեհերը կորցրին 23 հազար մարդ և 104 թնդանոթ,
ուսաները՝ մոտ 3 հազար մարդ: Հիվանդ, հաղիվ վրտքերը
քարշ ավող Սուվորովը Ռուսականցեվին ղեկուցում ուղար-
կեց. «Այսքան փայլուն հաղթանակ յես սակավ եմ տե-
սել: Սույն դործը նման է Իզմայիլի դործին»:

Սուվորովի ամբողջ արշավանքը, վոր ավարտվեց Պրա-
գայի մոտ աված կայծակի հարվածով, արագաչարժու-
թյան, ճիշտ հաշիվների և հակառակորդի վրա դրոհելու
արիության բարձր որինակ է հանդիսանում, չնայած հա-
կառակորդի ուժերի գերազանց թվին:

Ժամանակակիցներից շատերը Սուվորովին հանդիմա-
նում էյին Պրագան գրավելու ժամանակ թույլ տված դա-
ժանության համար: Այդպիսի բոլոր հանդիմանություններին
նա միանգամայն հիմնավոր կերպով պատասխանում եր.
«Խաղաղատեր Փելզմարչալները լեհական կամպանիայի
սկզբում ամբողջ ժամանակն անց էյին կացրել պահեստներ
պատրաստելով: Պատերազմելու նրանց պլանը նկատի ու-
ներ յերեք տարի: Ինչպիսի՝ արյունահեղություն: Յեվ ո՞վ
կարող եր յերաշխավորեկ ապագայի համար: Յես յեկա
և հաղթեցի: Մի հարվածով յես խաղաղություն ձեռք բե-
րի և վերջ դրի արյունահեղությանը»:

Պրագան գրավելու համար Սուվորովը հարուստ պար-
զեններ ստացավ, սակայն նրան ամենից շատ ուրախացրեց
Փելզմարչալական գավազանը: Այն ժամանակ Ռուսաստա-
նում միայն Ռադումովսկին և Ռուսականցեվն ունեյին այդ
աստիճանը:

Սուվորովն այդ պարզևատրությունը տոնեց յուրահա-
տուկ ձևով: Նա իր հավատարիմ կամերդիներ Պրոչկային
հրամայեց դահլիճի յերկարությամբ իրարից հավասար հե-
ռավորությամբ իննը աթոռ դնել: Ի զարմանս ներկա յե-
տող անվանի հյուրերի՝ 65-ամյա ծերունին սկսեց այդ ա-
թոռների վրայով ցատկել՝ ասելով.

— Այսպես առաջ ցատկեցի: Մալտիկովը հետ մնաց:

Մյուս աթոռի վրա ցատկելով՝

— Դուգորուկին հետ մնաց:

Յեվ այսպես իննը հնազույն գեներալներ Սուվորովի
հետևը մնացին:

Յերբ բոլոր իննը աթոռ — «գեներալները» հետ մնացին,
Սուվորովն ուրախ դոչեց.

— Ա՛յ թե ինչպես: Բոլորին անցա, վոչ մեկը ցած չը-
գցեցի և նույնիսկ վոչ մեկին չկպա: Յերևելի յե: Վոզոր-
մած աստված, ի՞նչ յերևելի յե:

Յերկար, անբասիր ծառայության ընթացքում Սուվոր-
ովի կրած բոլոր վշտերը, բոլոր վիրավորանքները, վոր
պատճառել էյին նրան նրա ռազմական հանճարը ճանաչել
չցանկացողները և նրա առաջ իրենց ավազությամբ գոռո-
զացողները, թափվել էյին այդ գործողության մեջ:

Մի ամբողջ տարի Սուվորովը մնաց Վարչավայում: Իբ
գիվանագիտական տակտով նա կարգավորեց Ավստրիայի ու
Պրուսիայի հետ յեղած վիճելի հարցերը: Խաղաղ կյանք ըս-
տեղծելու համար հաջողությամբ մի շարք միջոցներ ձեռք
առավ: Կովի դաշտում լինելով ահեղ, խաղաղ աշխատան-
քում նա թույլերի ու ճնշվածների պաշտպանն էր:

Ամբողջ մի վիթխարի յերկրամաս կառավարելու ան-
սահմանափակ իշխանություն ստանալով՝ նա առաջվա պես
մնաց հասարակ, խուսափում էր շքեղությունից, գերադա-
սում էր կյանքի պարզ ու դաժան յեղանակը:

Շուտով նա կանչվեց Պետերբուրգ: Մայրաքաղաքը
հանդիսավոր ընդունեց հաղթողին:

Գալով Տալրիկյան պալատը, վորտեղ մի քանի տարի
գրանից առաջ նույնպիսի շքեղությամբ առնվեւ եո իցմա-

յիլի առումը՝ առանց այդ գործի հերոսի, Սուվորովը
սկսեց վազել սենյակից սենյակ, հասավ մինչև ննջարանը,
վորտեղ պատրաստ էր շքեղ անկողինը և պայծառորեն վառ-
վում էր բուխարին:

«Արդյոք վաղո՞ւց ե այստեղ ապրել Պոտյոմկինը,
նա, վոր...», մտածեց Սուվորովը, «իսկ այժմ ինձ ե վի-
ճակվել ապրելու նրա պալատում. այս ի՞մ բնակարանն է...
Բախտի ինչպիսի՞ անհաստատությունն»:

Յեկատերինայի մահից կես տարի առաջ Սուվորովը
գնաց Տուլչին, վորը դարձրեց իր շտաբ- բնակարանը և
այնտեղ սկսեց զբաղվել զորքերի դասավորությամբ և ու-
սուցումով՝ գալիք նոր պատերազմի համար:

1796 թվին, Յեկատերինա II-ի մահից հետո դահ բարձրացավ նրա վորդի Պավելը: Սկսվեց պետութեան կառավարման ամբողջ գործի վերահասուցում: Այդ վերակառուցումն առանձնապես խիստ արտահայտվեց զինվորական գործում: Պավելը պրուսական Ֆրիդրիխ 2-րդ թագավորի ջերմ յերկրպագուն էր: Բանակում արմատացվում էին պրուսական կարգեր: Ռուս զինվորի տարազը պրուսականի նմանեցնելու գործը հասնում էր պեղանտիզմի: Զորամասերին ուղարկվել էին փայտիկներ՝ վորպես զինվորների ծամերի և խոպոպների նմուշ ու չափ: Ծարքում ավելի լավ հավասարութուն պահպանելու համար քայլերը փոքրացվեցին: Ծարքում ամենաչնչին սխալ անելու համար սահմանված էր դատան ծեծ ու պատիժ:

Այս բոլոր նորամուծումները դուր չէին գալիս Սուվորովին, և նա հեղինակում ու չարութեամբ ծաղրում էր բանակում ստեղծված նոր կարգերը:

«Պուզրան վառող չէ, խոպոպները թնդանոթ չեն, ծամը սուսեր չէ և յես էլ դերմանացի չեմ, այլ բնածին ոռու», բարձր ձայնով ասում էր Սուվորովը: Քայլը բանակում փոքրացնելու մասին նա ասում էր. «Այդպես ուրեմն, քառասունի փոխարեն յերեսուն վերստ կքայլենք դեպի թշնամին»:

Սուվորովին նախանձողները նրա դժգոհութունները ծաղկեցրած և ուռցրած ձևով անմիջապես հասցրին Պավելին:

Վերջինիս կողմից փոթորիկը շատ չուշացավ: 1796 թ. փետրվարի 6-ին Սուվորովը պաշտոնաթող յեղավ: Նրան հրամայված էր քաշվել իր գյուղը: Բայց այդ միայն սկիզբն էր: Դրանից հետ շնորհազրկումներն իրար հաջորդե-

ցին: Շուտով ցարական հրամանագիրը յեկավ Կոբրինսկի կալվածքը, վորտեղ բնակութուն էր հաստատել Սուվորովը: Այդ հրամանագրով Սուվորովին առաջարկվում էր բնակութեան վայր ընտրել հայրական հին, անբարեկարգ կալվածքում, Կոնչանսկոյեյում:

Մայիսի 5-ին Սուվորովը ժամանեց Կոնչանսկոյե և բնակութուն հաստատեց մի փոքրիկ, կիսավեր տնակում, տեղական խոպրալինիկ (վոստիկանապետ) վինդոմսկո-հսկոզութեան տակ:

Տխուր ու միապաղաղ էր անցնում Սուվորովի կյանքը, թեև նա ամեն կերպ աշխատում էր պահպանել իր նախկին գործունյա ապրելակերպը:

Ինչպես ծառայութեան ժամանակ, այնպես էլ այժմ, արթնանում էր ժամը յերկուսին: Իր վրա պաղ ջուր ցանելուց հետո շտապում էր դյուզական դանդակատունը՝ դանդերը տալու: Ժամը յոթին ճաշում էր և հանդստանալուց հետո դնում զբոսնելու դյուզում, վորտեղ վազվզում ու թոչկոտում էր յերեխաների հետ, նրանց հետ վեզ էր խաղում և ակտիվ մասնակցում էր դյուզական խմբական պարերին: Նա լուծում էր դյուզացիների վեճերը, ոգնում էր նրանց կարիքի դեպքում, յերբեմն հյուր էր դնում և սակավ դեպքերում իր մոտ հյուր էր ընդունում հարևան ազնվականներին:

Այս բոլորի հետ միասին Սուվորովը ուշի ուշով հետևում էր ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Յեվրոպայում տեղի ունեցող քաղաքական դեպքերին:

1797 թվից Սուվորովի նկատմամբ հսկողութունն ավելի ուժեղացավ: Կոնչանսկոյե յեկավ ցարական հրամանագրով նշանակված վոմն Նիկոլայեվ, վորը Սուվորովի նկատմամբ վիրավորական հսկողութուն սահմանեց: Նա բռնում էր Սուվորովին հասցեազրկված նամակները, ցանկացողներին չէր թույլատրում տեսակցել նրա հետ և այլն: Այս ամենը խիստ վրդովեցնում էր Սուվորովին: Այդ ժամանակ նրա նյութական գործերն էլ լավ չէին: Նրան ներկայացվեցին մի շարք գրամական խոշոր պահանջներ՝ առաջուց չվճարված հաշիվներով, ըստ վորում, գործերը

պահպանութեան վորոչ հաշիւներ եւ անմիջապէս նրան երկին վերադարձում:

Այդպիսի բոլոր հաշիւները Պապելի կարգադրութեամբ բավարարվում էլին ի հաշիվ Սուվորովի կառվածքի: Սպասվում էր, վոր Սուվորովի ամբողջ ունեցածը վեր կդրվի և-աճուրդով կվաճառվի:

Յերկու տարի անց՝ փոփոխամիտ Պապելը հանկարծ իր դայրուցիւթը փոխեց վորո՞րմածութեան: Կոնչանսկոյի ուղարկվեց իշխան Գորչակովը՝ Սուվորովի ազգականը, վորը նրան հրավիրեց Պետերբուրգ: Սակայն ցարի անսպասելի վորո՞րմածութեանը Սուվորովին չուրախացրեց: Առանց մեծ ուրախութեան նա գնաց մայրաքաղաք: Այնտեղ սկսուցին Սուվորովի սիրաշահումը, նրան հրավիրում էլին դուրատեսերի, ուսուցման: Սուվորովի ներկայութեամբ մի գումարտակի ուսուցանում էլին Սուվորովի սիրած ձեռնարկով: Բայց այս ամենը չկաշտեց ծերունուն: Նա այս բոլորի մեջ տեսնում էր Պապելի թագնված մեքենայութիւնները և չէր ցանկանում ընդառաջել նրա առաջարկութիւններին: Մի քանի օր Պետերբուրգում մնալով, պալատական մի շարք ստորութիւններ տեսնելուց հետո Սուվորովը թույլատրութիւն խնդրեց, վոր նորից վերադառնա դուրս, նույնիսկ խնդիր ավեց, վոր իրեն թույլատրվի վանք քաշվել:

Սուվորովի խնդրի պատասխանը չստացվեց, և դրանից հետո ելի մի տարի Սուվորովը դյուրական կյանք վարեց: Սակայն հսկողութիւնը մեղմացված էր, իսկ 1799 թվի փետրվարի 6-ին անդլիական թագավորի ու ամստրիական կայսրի խնդրանքով Սուվորովն առաջարկութիւն ստացավ գրավել դաշնակիցների զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնը Իտալիայում, զորքեր, վորոնք զործելու էլին Փրանսիացիների դեմ: Նոր նշանակումը Սուվորովն ընդունեց անհարազդելի հրձկանքով: Վերջապէս ավարտվում էր Սուվորովի յերեքամյա արտորը և նա նորից կարող էր իր սիրած զորքերի գլուխ անցնել: 70-ամյա ծերունին պատանեկական յեռանդով արշավեց ապագա կրօնիմաների դաշտը, վորպէսզի մի անգամ ևս աշխարհը վարմացնի իր սիրազորութիւններով ու ռազմական տաղանդով:

ՍՈՒՎՈՐՈՎԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Միեման տեղավորված է գրքի վերջում)

1799 թվի մարտի 25-ին Սուվորովը մտավ Վիեննա: Հեռեկալ օրը ներկայացավ Ֆրանց կայսրին: Հետաքրքրվողների բազմութիւնը լցրել էր բոլոր փողոցները: Բոլորը ցանկանում էլին տեսնել այնքան փառավոր ճակատամարտերի յերջանիկ հաղթողին: Ընդհանուր հրձկանքին սահման չկար: Ֆրանց կայսրը հավատացնում էր, թէ ինքը զործողութիւնների լիակատար ազատութիւն կտա Սուվորովին, սակայն հոֆկիրիգորատի* ? զանազան անդամների միջոցով շարունակ մարզ էր ուղարկում Սուվորովի մոտ՝ տեղեկանալու նրա զործողութիւնների պլանին: Պլանի մասին արված հարցումներին Սուվորովը շարունակ պատասխանում էր, թէ պլանն ինքը կկազմի տեղում հանդամանքներին ծանոթանալուց հետո:

Մի սկանառես պատմում է, թէ մի անգամ հոֆկիրիգորատի չորս անգամ յեկան Սուվորովի մոտ: Նրանք Սուվորովին ցույց ավին զործողութիւնների շատ մանրամասն պլան, վորտեղ նշված էր բանակի զործողութիւնները մինչև Ադրա գետը և Սուվորովին խնդրեցին իր գիտողութիւններն անել: Սուվորովը ջնջեց ամբողջ պլանը և տակը գրեց. «Գործողութիւնները կսկսեմ Ադրա գետն անցնելով, իսկ կամպանիան կավարտեմ վորտեղ վոր աստճուն հաճելի կլինի»:

Ապրիլի 3-ին վերջին տեսակցութիւնն էր կայսրի մոտ: Ֆրանցը, ինչպէս և առաջին անգամ, նորից խոսքով

*) Հոֆկիրիգորատ— կայսրութեան բարձրագույն զինվորական խորհուրդը:

սիրալիր և, Սուվորովին խոստանում և լիակատար ազատություն, սակայն, հրաժեշտի ժամանակ նրան և հանձնում մի գրավոր փաստաթուղթ, վորով նկատելի չափով յերևում և անփաստաբանությունը և յերկյուղը Սուվորովի խիստ համարձակ վորոշումների նկատմամբ: Ապրիլի 4-ին Սուվորովն արդեն Վերոնայումն էր, վորտեղ ընդունեց ուսուս և ավատրիացի զենեքալներին:

Յերբ մնացին միայն ուսուս զենեքալները, Սուվորովը շուտասելուպի նման հիշեցրեց նրանց իր սխտեմը. «Սուբորդինացիա: Եկզերցիցիա: Ջինվորական քայլը՝ մեկ արշին, անցումներին մեկ ու կես: Գլուխը սուչին չի սպասում: Անակնկալ՝ ինչպես գլխին ձյուն մաղի: Գնդակը հիմար և, սվինը՝ քաջ: Մենք յեկել ենք խփելու թեթևամիտ Ֆրանսիացիներին: Նրանք կուփում են գորասյուներով, մենք էլ գորասյուներով կխփենք»:

Այդ նույն յերեկոյան նա Վերոնայից մեկնեց Վալեգ՝ ժիո՝ բանակի գլխավոր բանակատեղին: Իտալիա ժամանելով՝ Սուվորովը մի կոչով դիմեց ժողովուրդին: Այդ կոչում նա խոսում էր իտալական ժողովուրդը ոտար նվաճողներից փրկելու մասին: Կոչը ջերմ արձագանք գտավ Իտալիայում և Շվեյցարիայում: Բնակչությունը սիրալիր էր դիմավորում ուսուս զորքերին: Յերբ բնակչությունը համոզվեց, վոր ուսուս զինվորն իր նկատմամբ լավ վերաբերմունք ունի, փոխադարձ բարեկամական հարաբերություններ ըստեղծվեցին:

Հյուսիսային Իտալիայի հարթությունը հյուսիսից ու արևմուտքից յեզրափակված և Ալպյան լեռների սեղացած ժայռերով, իսկ հարավից՝ Ապենինյան լեռներով, վոտուղվում և բազմաթիվ գետակներով ու ջրանցքներով: Այդ հարթությունը խիստ բնակչություն ունի, հողը արգավանդ է, այնտեղ ցրված են բազմաթիվ քաղաքներ ու ամրոցներ, մինչև նկարագրված դեպքերը շարունակ յեղել և բազմաթիվ նշանավոր արշավանքների ու կռիվների թատերաբեմ և իրավացիորեն արժանացել և ուղղական տեսակետից կլասիկ յերկրի անվանը: Տեղական միջոցների հարստու-

թյունը, ճանապարհների առատությունը բոլոր ուղղություններով, Փրանսիայից Շվեյցարիայի և Ավստրիայի սահմանադրված լինելը— այս ամենը մեծ հնարավորություններ էյին ստեղծում գորավարի ստրատեգիական նրկատառումների համար:

Այն հանգամանքը, վոր վայրը խիստ կտրված էր ջրանցքներով, ամբարտակներով, ալեյաներով, դանադան ցանկապատերով, ամենուրեք դժվարացնում էր զորքերի գործողությունները: Հեծելազորի գործունեության համար տարածություն չկար: Դրա փոխարեն այդպիսի վայրը խիստ հարմար էր Սուվորովի մեթոդով վարժված զորքերի համար: 70-ամյա Ֆելդմարշալը, վոր իր ամբողջ կյանքում ջարդել էր թուրքերին տափաստաններում և լեհերին ճահիճներում ու անտառներում, նոր վայրում ամենալավ ձևով կիրառեց ուղղական գործի իր հասարակ կանոնները:

Մինչև ապրիլի 7-ը Սուվորովն ավստրիական զորքերին սովորեցնում էր իր կանոններով պատերազմել, աշխատում էր նրանց վտասաություն ներշնչել իրենց ուժերի նկատմամբ: «Հաղթանակելու գիտությունը» թարգմանեց գերմաներենի: Ռուս սպաներն ավստրիացիներին սովորեցնում էյին սվինային շեշտակի հարված տալը:

Ապրիլի 7-ին սկսվեց Սուվորովի նշանավոր արշավը: Շարժումը կատարվում էր արագ, հատուկ չվացուցակով: Դուրս էյին դալիս զիշերը, գնում էյին 7 կիլոմետր, ապա մեկ ժամ դադար էյին առնում, հետո նորից 7 կիլոմետր անցնում և յերկարատե դադար առնում— 3-4 ժամ— ճաշ յեփում, սնունդ պատրաստում: Ճաշից հետո անցնում էյին 7 կմ., ապա կրկին մեկ ժամ դադար: Վերջապես անցնում էյին վերջին 7 կմ. և կանգ առնում զիշերելու, զորքերն անցնում էյին որական 28 կիլոմետր, հանգստանում էյին որվա ամենաշոգ ժամանակը և առանձնապես չէյին հողնում: Սակայն այդ բնթացքն ավստրիացիներին չափազանց արագ էր թվում: Յերբեմն նրանք ինքնազուխ կանգ էյին առնում, իսկ նրանց զենեքալ Մելստը հոֆիրիցորատին զեկուցում ուղարկեց, թե յերթը խիստ արագ է

և զուրկ և ոսգմական հաշիվներից: Բրեշիան գրավելուց հետո ապրիլի 15-ին Սուվորովը մտեցավ Ադրա գետին:

Ֆրանսիական զորքերի հրամանատար Շերերը, 28 հազար մարդ ունենալով, նահանջեց Ադրա գետի այն կողմը՝ պաշտպանվելու նպատակով: Յերկյուղ կրելով, թե իր թևերի կողմից հարձակման կենթարկվի՝ նա իր զորքերը փոսեց Կոմս լճից մինչև Պո գետը, մոտավորապես 100 կմ վրա, պահպանելով Կասանոյի, Լոգիի և Պիչիգետոնի մոտ գտնվող կամուրջները:

Սուվորովը կենտրոնացավ Ֆրանսիացիների հյուսիսային թևի և կենտրոնի դիմաց: Ամենահյուսիսային մասում նա ուներ 19 հազար մարդ, ընդդեմ 8 հազար Ֆրանսիացիների, կենտրոնում 23 հազար, ընդդեմ նրանց 8 հազարի: Սուվորովը վորոշեց ձեռքի վրա Ֆրանսիացիների ձգված զիծը:

Ապրիլի 17-ին պաշտոնանկ արված Շերերի փոխարեն Ֆրանսիական զորքերի հրամանատարությունն իր ձեռքն առավ յերիտասարդ, յետանդուն ղեներալ Մորոն: Իմանալով այդ մասին՝ Սուվորովն ասաց. «Այն դավիճիները, վո՞ր մենք կխլենք Մորոյից, ավելի փարթամ կկանաչեն»:

Մորոն վորոշեց իր նախորդի ցրիվ աված զորքերը հասկանալ կենտրոնում, սակայն Սուվորովի արագ զործողությունները նրան խանգարեցին: Ֆրանսիացիների ճակատը ձեղքվեց: Սկսվեց նրանց նահանջը դեպի Միլան: Սերյուրյեյի դիվիզիայի կեսը Վապրիոյի մոտ կտրվեց գլխավոր ուժերից և գեներլ ցած դրեց: Ընդհանուր առմամբ Ֆրանսիացիք կորցրին 2,5 հազար սպանված և վիրավոր, 5 հազար գերի և 27 թնդանոթ: Դաշնակիցների կորուստները հասնում էին 2 հազար մարդու:

Սուվորովի հաղթանակը հանդիսավոր կերպով տոնվեց և՛ Վիեննայում և՛ Պետերբուրգում: Սուվորովը խոշոր պարգևներ ստացավ: Սուվորովի Վիեննա ժամանելուց հետո ընդամենը յերկու շաբաթ եր անցել, բայց դրուժյունն սաղմաճակատում սկսել եր արժատապես փոխվել:

Ադրա գետի մոտ տարած հաղթությունից հետո Սուվորովն անհապաղ շարժվեց դեպի Միլան, վոր Լոմբար-

դիայի գլխավոր քաղաքն եր: Ֆրանսիական իշխանությունները Մորոյի հետ փախան այնտեղից: Ապրիլի 18-ին Միլանի բնակչությունը Սուվորովին հանդիսավոր դիմավորություն կազմակերպեց: Նա դարձավ ամբոխի սիրելին և վո՞չ միայն ուսսական, այլ և ավստրիական զինվորների սրտերի անսահմանափակ տերը:

Միլանում Սուվորովը մնաց յերկու օր: Նա բոլոր ջանքերը դորձադրեց, վորպեսզի վերացնի տակտիկական գրուժյան մեջ յեղած այն տարբերությունը, վոր դեռ գոյություն ուներ ուսսական ու ավստրիական զորքերի միջև: Ընդհանուր կանոններ ուղարկեց և՛ առաջինների, և՛ յերկրորդների համար: Հենց Միլանումն ել Սուվորովը մշակեց Ֆրանսիացիների դեմ կատարելիք իր հետագա գործողությունների ծրագիրը: Այդ ծրագրի ելությունը հանգում եր նրան, վոր թիկունքում ամբոցները պաշարի ավստրիական ղեներալ Կրայի զորքերով, իսկ ինքը հարձակվի Մակոնայդի*) վրա, վորը Տոսկանայից (Միջին Իտալիա) Ապենինյան լեռների վրայով դալիս եր Պո գետի հովիտը, Սուվորովի դեմ: Սուվորովը ծրագրել եր նրան ջանջախել և սպա շարժվել դեպի Տուրին, Մորոյի վրա, յերկուսի հետ ել հաշիվ մաքրել և սպա ուսանների ու ավստրիացիների բոլոր ուժերն առած շարժվել դեպի Փարիզ: Կարիք կա՞ր ստելու, վոր հոֆկրիդարաուը, վոր ինչպես Սուվորովն և զիպուկ կերպով նկատել, վարժվել եր շարունակ ջարդված լինելուն, չկարողացավ համաձայնել այդպիսի համարձակ ծրագրի, նա կարգադրեց պաշտպանողական դիրք բռնել և բոլոր ջանքերն ուղղել Հյուսիսային Իտալիայի ամբոցները նվաճելու վրա, վորպեսզի իրենց ձեռքում պահվի հարուստ Լոմբարդիան:

Սուվորովը, իր «գարմացնել-հաղթել» կանոնին հավատարիմ մնալով՝ շարունակում եր իր հարձակումը:

Յերկու ամսում նա մաքրեց ամբողջ Հյուսիսային Ի-

*) Ֆրանսիական հրամանատարներից մեկը:

տարիան: Բայց այդ ուժերի խիստ ցրում առաջացրեց, իսկ մինչ այդ մինչև վերջ չջախջախված Մորոյի բանակը քաշվեց Ջենովական Ռիվյերան, այնտեղ կարգի բնկալ իր առաջին պարտութունից հետո և սրատրաստվում եր հարձակվելու Հյուսիսային Իտալիայի վրա: Նույն ժամանակ Մակդոնալը պետք է շարժվեր արևելքից, Պո դեպի հարավային ափով: Յերկու բանակները պետք է միանային Տորտոնի մոտ:

Սուվորովը Տուրինում տեղեկանալով յերկու կողմից Փրանսիական զորքերի շարժման մասին, վորոշեց իբ բանակը հավաքել կենտրոնական կետում՝ Ալեքսանդրիայում, վորպեսզի նրանց միանալու հնարավորութուն չտա և հարձակվի այն հակառակորդի վրա, վորն առաջինը կերևա:

Մայիսի 29-ին Տուրինից դուրս դալով՝ խիստ շոգ յնշանակին, անտանելի ճանապարհներով յերկու ու կես սրում Սուվորովը 100 կիլոմետր տարածութուն անցավ և հունիսի մեկին ժամանեց Ալեքսանդրիա: Այստեղ Սուվորովի հրամանատարության տակ կենտրոնացավ 34 հազար մարդ: Տրված կարգադրությունները կարող էին սպառնալ, վոր այդ կետում 60 հազար մարդ կենտրոնանա, սակայն հոֆերիգրատի միջամտութունը խանգարեց: Ավրտորիացիք Ալեքսանդրիա, Սուվորովի զորքերին միանալու չեկան: Հունիսի 2-ին տեղեկանալով, վոր Փրանսիացիք Մոզենը գրավել են, Սուվորովը վորոշեց, վոր գլխավոր թշնամին Մակդոնալն է: Մտածելու ժամանակ չկար և Սուվորովը վորոշեց իբ ունեցած ուժերի պակասը լրացնել զործողութունների արագությամբ: Մակդոնալի ավանդարդը հունիսի 3-ին Ֆլորենցիոյի մոտ եր (Պիաչենցայից 20 կմ. դեպի հարավ-արևելք): Գեներալ Ռոր 6 հազար ավտորիացիներով Վոգերայից դարձավ դեպի հետ և պաշտպանվելու համար կանդ առավ Պիաչենցայի մոտ: Սուվորովը հունիսի 4-ին 22 ժամում Բորմիդան անցավ, հարավային ճանապարհին ունենալով ուսուսական զորքեր, հյուսիսայինում՝ ավտորիական: Նա նպատակ ուներ սուսական զորքերով Փրանսիացիներին լեռներից կտրել և

նրանց Պո դեպին սեղմելով՝ վոչնչացնել հենց այնտեղ: Ամբողջ դիչերը և 5-ի առավոտյան առաջ շարժվելով՝ ուսսական զորքերը մոտեցան Կաստելնովային: Ընդամենը 3 ժամ հանդատանալուց հետո նրանք հասնում են Կաստելլիո, իսկ զորասյունի գլուխը՝ Մորադելլա: Մորադելլայի մոտ անցը դրավելու առաջին խնդիրը կատարված է: Ի դուր չեր, վոր դրա համար սոսկալի շողին զորքերը լարել էին իրենց բոլոր ուժերը, որական 45 կմ. ճանապարհ անցնելով:

Գեներալ Ռորից դեկուցադիր ստանալով, վոր նա նահանջել է Փրանսիացիների գլխավոր ուժերի առաջ, Սուվորովն անհապաղ Մեյասին հրամայում է դնալ Ռորն ուսսական: Իսկ ինքը գլխավոր ուժերով հարձակվում է Մորադելլայի վրա և հունիսի 6-ին, ժամը 10-ին գրավում այն: Ելի 25 կիլոմետր մնաց թիկունքում: Սուվորովը մորտադիր եր Մորադելլայում զորքին հանդիստ տալ, սակայն, նոր դեկուցադիր ստանալով այն մասին, թե Փրանսիացիք արդեն հասել են Տիլոն դեպին, առանց հանդիստ առնելու շտապում է նրանց դեմ: Մակդոնալը տեղեկանալով, վոր Սուվորովն Ալեքսանդրիայից առաջ է շարժվում, վորոշում է Ռոր ավտորիացիներին ջախջախել մինչև Սուվորովի հասնելը: Ռոր 8 ժամ դիմադրում է Փրանսիացիների դրուհին, բայց ստիպված է լինում նահանջել: Այդ ժամանակ նրան ոսկնության և հասնում Մեյասը: Նորից տաք կռիվ է սկսվում:

Մինչ այդ Սուվորովը, առանց մի քսակ իր զորքերին հանդիստ տալու, նրանց արտակարգ արագությամբ առաջնորդում է Փրանսիացիների դեմ: Այրող տապին մարդիկ վոչ թե քայլում էին, այլ՝ վազում: Ծառերն ու ժառանգառ յեղած ընկնում էին: Զորասյուները ձգվում էին: Սուվորովը զորքերի մեջ շրջելով շարունակ կրկնում եր.

— Առա՛ջ, առա՛ջ, գլուխը պոչին չի սպասում:

Վորպեսզի զորքերին ստիպի հոյնածությունը մոտանալ, նա հրամայում եր առաջնորդացման ժամանակ Փրանսերեն 12 բառ սովորել:

Նոր տեղեկութիւն. թշնամին արդեն Տիգոն գետի վրայն: Գնե՛րալ Ուր նահանջում է Ջիւլիանոյից դեպի հյուսիս: Սուվորովը հրամայում է զորքերը բերել վորքան կարելի յէ արագ, իսկ ինքը Բաղրատիոնի հետ արշավում է կովի դաշտը: Ժամը 15-ին Սուվորովը բարձրանում է մի բլուր, վորտեղից յերևում եր կովի դաշտը— և այնտեղից դիտում է մի անմխիթար պատկեր: Այստրիացիք, յերկու կողմից շրջապատված լինելով Փրանսիացիներով, նահանջում են: Այստրիացիների և հարավային ուղղութեան միջև, վոր նշանակված եր ուսուկան զորքերի համար, հաղթականորեն և մեծ խանդավառութեամբ առաջ է նետվում Դոմբրովսկու լեհական զիվիդիան, վոր զործում եր Փրանսիացիներին հետ: Մակդոնալը չեր կարծում, թէ այտեղ Սուվորովին կհանդիպի: Ընդամենը 36 ժամ առաջ նա գետ Ալեքսանդրիայումն եր, Տիգոն գետից 80 կմ. հեռու: Կրկնվում եր նույնը, ինչ Ռիմնիկում տեղի յեր ունեցել մեծ վեցիբի հետ: Հալանարար Մակդոնալը չկտրեց այն մարդու գլուխը, վոր նրան տեղեկութիւն բերեց, թէ Սուվորովը դանվում է Ալեքսանդրիայում, բայց և այնպես Մակդոնալի զորքերը դարձացած էին, թէ Սուվորովն ինչպե՛ն լույս բնկավ այտեղ:

Գրեկովի և Պոզդեյեվի կազակական զնդերն արշավում են Դոմբրովսկու վրայ, իսկ նրանց հետևից Կարաչայի զորագուհները խփում են Փրանսիացիներին: Փրանսիացիները յերկու թևերն ել կաշկանդված են: Սուվորովն ընդհանուր հարձակման է անցնում: Բաղրատիոնը խնդրում է գրոհը հետաձգել— վաշտերում 40-ական մարդ ել չկա, իսկ Մակդոնալի վաշտերում— 200-ական մարդ կա:

— Ինչ վոր աստված տվել է, նրանով ել գրոհիր:

Հանդիպական կովի հիանալի բմբոնողութիւն— «զարմացնել, հաղթել»:

Յեվ 19 հազար սուվորովյան հերոսները հարձակվում են Նապոլեոնի 22 հազար աշակերտների վրայ: Փրանսիացիներին ստիպում են նահանջել դեպի Տրեբրիա: Մակդոնալն սպասում եր Ոլիվյեյի և Մոնտրիչարի զիվիդիաների

ժամանմանը, վորոնք մեկ յերթաչափ հեռու էին դանվում, վորպեսզի վերսկսի գրոհները Սուվորովի դեմ: Մորսն պետք է դործեր նրա թիկունքում: Հունիսի 7-ին Փրանսիացիք հարձակուձը վերսկսեցին: Սուվորովը կանխեց այն և նույն օրը ժամը 10-ին յերեք զորասյուներով, գլխավոր խմբավորումը հարավում, շարժվեց հակառակորդի դիմաց, դեպի Տրեբրիա գետը: Տիգոնայի և Տրեբրիայի միջև կատարի կռիվ է սկսվում: Որվա յերկրորդ կեսից (Ոլիվյեյի և Մոնտրիչարի տեղ հասնելուց հետո) Մակդոնալն ուներ 35 հազար մարդ, Սուվորովը՝ 24 հազար, Փրանսիացիք իրենց թվով մեկ ու կես անգամ գերազանցում էին: Չնայած գրան՝ Մակդոնալը պարտութիւն է կրում և ստիպված լինում մեծ կորուստներով փախչել Տրեբրիայի այն կողմը: Մինչև ուշ գիշեր հակառակորդները կանգնած էին այդ գետով բաժանված և զնդակի տարափ էլին տեղում իրար վրայ: Վրայ յեր հասնում կովի յերրորդ օրը:

Հունիսի 8-ի օրը յերկու հակառակորդներն ել նոր հարձակում են նշանակում: Սուվորովը զորքերին առաջադրում է հին խնդիրը, Մելասին հիշեցնում է, վոր Ֆրելիխի ջոկատը և Լիխտենշտեյնի 10 Վսկադրոնը անպայման պետք է շարժվեն կենտրոնի զորասյունի հետևից:

Մակդոնալն ել իր կողմից իր զորքերի առաջ այսպիսի խնդիր է դնում. Վիկտորը, Ռուսկան և Դոմբրովսկին 14 հազար մարդով խփում ու շուրջանցում են հակառակորդին հարավից, Վատրենիան և Սարման— 7 հազար մարդ— հյուսիսից, Ոլիվիյեն և Մոնտրիչարը— 11 հազար մարդ— դաշնակիցներին հարվածում են կենտրոնից: Նախատեսվում է կրկնակի ընդհարում: Կովի դաշտում այս անգամ հանդիպում են 23,5 հազար մարդ Սուվորովի կողմից և 35 հազար՝ Մակդոնալի: Բոլոր ուղղութիւններում Փրանսիացիք համարյա մեկ ու կես անգամ ավելի յեն: Սուվորովի 12 հազար հոգու գլխավոր հարվածի դիմաց կանգնած են Մակդոնալի 14 հազար հոգին: Յերկու հակառակորդն ել ակտիվ են: Յերկուսն ել հույս են դրել զործողութիւնների արագութեան ու վճռականութեան վր-

րա: Այն ժամանակ, յերբ Սուվորովի զորքերը զենք էյին վերցնում, Փրանսիացիք հարձակումն սկսեցին: Կատաղի կռիվ սկսվեց:

Սուվորովը, տեսնելով, վոր Դամբրովսկու ղեկիչին ուզում է իր աջ թևը շուրջանցել, նրա դեմ է ուղարկում իր սիրելի Բաղրատիոնին: Մյուս զորամասերից պահանջում է ուշադրություն դարձնել հարավային կողմի վրա: Դամբրովսկու ղեկիչին վոչնչացված է. նրանից մոտ 300 հույն ազատում են փախչելով Տրեբրիա գետի մյուս կողմը: Բայց այդ ժամանակ Շվեյկովսկու հինգ զուգարտակները շրջապատված են Վիկտորի և Ռուսկայի 15 զուգարտայնորով: Սուվորովը Բաղրատիոնին վերադարձնում է իր մոտ և յերկու կողմերի ուժերի թիվը շատ թե քիչ հավասարակշռվում են: Ռուսները Փրանսիացիներին ճեղմանը չի դիմանում և Սուվորովից նահանջելու թուլյալովթյուն է խնդրում: Սուվորովը շուրջ թուլացած, սպիտակեղևուով պառկած է մի մեծ քարի մոտ:

— Փորձեցեք այս քարը տեղից շարժել, — ասում է նա, — չեք կարող: Այլպես ել յես չեմ կարող նահանջի թուլյալովթյուն տալ: Բարի յեղեք ավելի ամուր դիմանալ և վոչ մի քայլ չնահանջել:

Բայց ահա զեկուցում է Բաղրատիոնը.

— Վնասը մեծ է, հրացանները ցեխոտվել են ու չեն կրակում, զորքերը հյուժված են, կռիվը շարունակել չեն կարողանում:

— Լավ չե, իշխան Պյոտր, — ասում է Սուվորովը, — բերեք ձիս, — գոռում է նա:

Յեվ հենց շաղկանց էլ սլանում է գեպի զորամասերը: Մի ակնթարթում ամեն ինչ կենդանանում է: Յե՛վ հրացաններն են սկսում կրակել, և՛ հույնաժուլթյունն է չքանում: Տեսնելով, վոր մի զորամաս խառնիխուռն հետ է նահանջում, Սուվորովը միացավ նրան: Իր ձին հեծած, այդ զորամասի առջևից սլանալով նա գոռում էր նահանջողներին.

— Հրապուրեցե՛ք, հրապուրեցե՛ք:

Յերբ նահանջող զորամասը զարմանքով սկսեց ականջ դնել իր դիտավոր հրամանատարի ասածին, Սուվորովը հանկարծ կանգ առավ, կտրուկ շուռ յեկավ գեպի նահանջողները և հրահանդեց.

— Բավական է, այժմ թշնամու վրա՛:

Համարյա թե քայքայման հասած զորամասը Սուվորովի այս հրահանդով շուռ յեկավ և նոր ուժերով հարձակվեց թշնամու վրա:

Միաժամանակ Բաղրատիոնը հարված հասցրեց թշնամու թիկունքին: Հարվածն այնքան ուժեղ էր, վոր Փրանսիացիք Բաղրատիոնին նոր ժամանած ոժանդակ ուժերի տեղ դրին և արագորեն անցան Տրեբրիա գետի մյուս կողմը:

Այնուամենայնիվ Սուվորովին չհաջողվեց իր հաջողությունը ծավալել: Մեկսը նորից չկատարեց նրա հրամանը և իր մոտ, պասսիվ ճակատամասում պահեց Փրեկիխի ջուկատը:

Գիշերը վրա հասավ: Ճակատամարտը յերեք ուր էր տևել: Տրեբրիա գետի հովիտը դիակներով էր ծածկված: Ծանր դուրթյուն էր ստեղծվել: Մակդոնալը գեռ վերջնականապես ջախջախված չէր, իսկ Սուվորովի թիկունքում, բնդամենը յերկու յերթաչափ նրանից հեռու, Մակդոնալին ողնության էր շտապում Մորոյի բանակը: Չնայած դրան, Սուվորովը վորոշում է հարձակումը շարունակել:

Ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ Մակդոնալի մոտ: Ինչպես Սուվորովին, այնպես էլ նրան դուրթյունը չափազանց ծանր էր պատկերանում: Ճակատի դիմաց Սուվորովն է, թիկունքում՝ ավստրիացի Կրայը և Հոհենցոլլերները գտնվում էյին մոտավորապես նույն հեռավորության վրա, ինչ վոր Մորոն Սուվորովից:

Մակդոնալը զինվորական խորհուրդ է զուգարում: Գեներալները միաբերան հայտարարում են, թե մեծ կորուստներ են ունեցել: Շատ զնդեր բոլորովին բնաջինջ են յեղել, հեծելագործը կիսով չափ նվազել է, հետագա դիմա-

դրութիւնն անհարին և: Վորոշվեց նահանջել: Դիչերն սկսեց Փրանսիացիներէ նահանջը: Սուվորովը դքս մասին խմացավ ժամը 4-ին և անմիջապէս հետապնդում կազմակերպեց: Սակայն ամսորիացիք հասան միայն մինչև Պիաշենցա, իսկ ուսաները հասան Փրանսիացիներէ արշերգարդի հետեից և ամբողջապէս վոչեչացրին այն: Տրեբբիայում ունեցած 35 հազար մարդուց Մակդոնալդին հաջողվեց դուրս բերել մոտ 12 հազար մարդ, բոլորովին ընկճված ու հուսահատված: Բացի այդ, հակառակորդին ավար եր մնացել 6 թնդանոթ, 7 զրոշակ և համարյա ամբողջ դումակը:


Սուվորովի 23,5 հազարը Չախճախեցին Մակդոնալդի 35 հազարին: Չորսվարի համառութիւնը, զորքերի քաջութիւնը, լավ վարժվածութիւնը և կռիւների հիանալի վարումը հաղթանակ տարան: Սուվորովի շարժումը Ալբրտանդրիայից դեպի Տրեբբիա և ուժեղագույն հակառակորդին այդ դեռի մոտ Չախճախելը սաղմական արվեստի մեծագույն նմուշների թվին և պատկանում: Չինվորական գործընթացը միաբերան հայտարարում են, վոր հենց միայն դեպի Տրեբբիա կառարած շարժումը և հունիսի 6-8 կռիւք արժանի յեն դարձնում, վոր նա մեծ դորավարների շարքը դասվի:

Մորն, Սուվորովի հակառակորդը, նրան նապոլեոնից ցածր չի դասել: Նա ասել է.

— Ինչ կասեք դուք մի մարդու մասին, վորը բոլորին կպտտկեցնի, ինքն ել կպտտի, բայց նահանջի հրաման չի տա:

Այդպէս եր Սուվորովը և այդ դիժը նա իր մեջ դատարակել եր մանկութիւնից: «Հաղթելուց հետո գործիք համաձայն հանգամանքներին», սուվորեցնում եր Սուվորովը և Մակդոնալդի դեմ տարած հաղթանակից հետո նա զարմանալի արագությամբ շուտ և դալիս դեպի Մորն, սակայն վերջինս չուղեց կրկնել Մակդոնալդի դասերը և հետ նահանջեց դեպի Ռիվյերա:

Վերադառնալով Ալեքսանդրիա՝ Սուվորովն ստացավ Յրանցի չոր ու ցամաք հրովարտակը, վորով նրան հիչե-



Սուվորովի վարժակրթ

ցում եր արվում, թե զլիսավոր խնդիրն և Մանտուա ամրոցը
գրավելը, ուստի և առայժմ պետք է հրաժարվել բոլոր այլ
տեսակի գործողութուններից ու անճիշտ նախաձեռնու-
թյուններից:

Հունիսի 17-ին վերջապես Մանտուան նվաճված էր,
Սուվորովը վճռական նպատակ գրեց՝ Ռիվյերայի ու Ջենո-
վայի վրա հարձակվելով Մորոյի բանակը բոլորովին դուրս
քշել Իտալիայից և նրան զրկել յերբեկիցե Մակդոնալդի բա-
նակի հետ միանալու հնարավորութունից: Ջենովայի գը-
րավումով Մակդոնալդը շատ ծանր դրության մեջ կընկ-
ներ:

Հոֆհերցոգրատի հարուցած խոչընդոտները կաշկանդե-
ցին նրա այդ պլանները և Սուվորովն ստիպված յեղավ
գրադվել մանր ամրոցներ գրավելով և դրա վրա թանկագին
ժամանակից ավելի քան մեկ ամիս կորցրեց:

Փրանսիայում այդ ժամանակ ուրիշ բան էլին մտա-
ծում: Սուվորովի սպաննալիքներն այնքան մեծ էլին, վոր
Փրանսիական կառավարութունը պատերազմի իտալական
ճակատը գլխավորը համարեց: Շտապ կարգով լրացնելով
Մորոյի ու Մակդոնալդի ջախջախված բանակները՝ Փրան-
սիական կառավարութունը բոլոր ջանքերը գործադրեց,
վոր նրանց միացնի և 1799 թվի հուլիսի վերջերին նրան
այդ բանը հաջողվեց:

Այդպիսով դաշնակիցների աչքի առաջ Ռիվյերայում
նորից Փրանսիացիների 45 հազարանոց մի բանակ ստեղծ-
վեց: Հուլիսի 24-ին յերիտասարգ, տաղանդավոր ժուրե-
րըն այդ բանակի գլուխ անցավ: Մորոն նրա մոտ մնաց
վորպես ողնական: Հուլիսի 29-ին ժուրերը հարձակում
սկսեց: Ոգոստոսի 3-ի լուսարացից առաջ Փրանսիացիք յե-
րեացին Նովիի մոտի բարձունքներում, զեպի Տորտան տա-
նող ճանապարհին: Նրանք պաշարեցին Սերրավալլեն: Սեն-
Սիրը խոչոր ուժերով Նովին գրավեց:

Սուվորովը հուլիսի 24-ից սկսեց տեղեկութուններ ըս-
տանալ Փրանսիացիների հարձակման մասին, բայց միայն
ոգոստոսի մեկին վերջնականապես յերևաց, վոր նրանք

չարժվում են Բորմիդա և Սկրիվիա դեպերի հովիտներով:
Սուվորովը վորոչեց Փրանսիացիներին թույլ տալ, վոր ին-
նեն դաշտավայրը և այնտեղ ջախջախել նրանց, ինչպես
արել էր Կինբուրնի ցամաքալեզվում («Թող բոլորը ար-
դուրս դան»): Առաջավոր զորամասերին հրամայված էր
թշնամուն լեռներից հրապուրել զեպի դաշտավայրը:

Նովիի շրջանում, լեռների լանջերին ժուրերը կանգ-
նեցրեց իր զորքը և ինքը Մորոյի ու Սեն-Սիրի հետ բարձ-
րացավ Նովիի մոտի բլուրը՝ շրջակայքը գիտելու: Նրանց
առաջ փոված էր դաշտավայրը, վոր գրավված էր դաշնա-
կիցների զորքերով: Ուղիղ Պոցոլո-Փորմիզարոյի մոտ
կանգնած էլին Բադրատինի և Միլորադովիչի 9,5 հազա-
րը, Ռիվալտոյի մոտ յերևում էր Մելասի ու Դեբֆելդենի
15 հազարը, Որբա դեպի ամին՝ Կրայի ու Բելլարդի 27
հազարը, Տորտանայի մոտ՝ Ռոզենբերգի և Ալոկայինի 13,5
հազարը:

Սոսկալի Սուվորովը բոլոր զորքերով ուղիղ նրանց դի-
մաց էր: Ի՞նչ անել: Առաջ դնալն անմտություն է, նահան-
ջելը՝ ամոթ: Յեվ ահա, ինչպես միշտ այդպիսի դեպքերում
լինում է, գումարվում է զինվորական խորհուրդ: Ամբողջ
լինում է, գումարվում է զինվորական խորհուրդ: Ամբողջ
որը միճում են, զենքերալները պնդում են, թե պիտի նա-
հանջել: Ո՞վ կուղենա առանց ռազմական բախտը փորձելու
նահանջել: Ժուրերը տատանվում է, վոր մի վորոչում չի
ընդունում: Նա դանում է, վոր զեռ մտածելու ժամանակ
ունի և խոտանում է առավոտյան դեմ տալ իր կարգա-
գրությունը:

Բայց Փրանսիացիք մոռացել էլին, վոր իրենց առաջ
Սուվորովն է, վորը չէր սիրում հակառակորդին մտածելու
ժամանակ տալ: Տեսնելով, վոր Փրանսիացիք դաշտավայրը
չեն իջնում՝ Սուվորովը վորոչում է ոգոստոսի 4-ին նրանց
ջախջախել լեռներում: Այն վայրը, վորտեղ նախատեսվում
էր ճակատամարտ տալ, Ապենինների վերջին բլուրներն են,
Սկրիվիա և Որբա գետերի հովիտների միջև: Մեծ բարձ-
րությունը, վայրի խիստ կտրտված լինելը, Նովիի մոտի
խողրդի այգիները, քաղաքի քարե բարձր պատեր, քաղ-

մաթիւլ այգիները— այս բոլորը Փրանսիացիներին մեծ ա-
ռաւելություններ եյին տալիս համառ դիմադրութեան
համար:

Սուվորովն առաջարկեց հակառակորդի վրա գրոհել
նրա ձախ թևից: Կրայը ցանկություն հայտնեց հարձակումն
սկսելու: Ֆերմարչալը հավանություն տվեց ավստրիական
զենեակաւոր այդպիսի առաջարկութեանը: Այն բանից հետո,
յերբ կսկսեր արտահայտվել Կրայի հարվածը, Բագրատիոնը
և Միլորադովիչը պետք է հարձակում գործեյին Նովիի
վրա: Սուվորովը վստահ էր հաղթանակին: Նա Մելասին
հրամայեց դերի վերցնել այն զորքերին, վորոնք Կրայի
առաջխաղացման հետևանքով կտրված կլինեն իրենց դիւսա-
վոր ուժերից:

Դեռ լույսը չբացված Կրայը դուրս յեկավ և արեղակի
առաջին ճառագայթների հետ Փրանսիացիների ձախ թևում
հրացանային կռիւ սկսվեց: Գլխավոր հրամանատար Ժու-
քերը զնդակոծութունը լսելով՝ անձամբ այնտեղ արշա-
վեց: Նա տեսավ, վոր Կրայի 27 հազարանոց ահեղ կոր-
պուսն առաջ է շարժվում, նետովեց կովող շղթայի մեջ,
բայց ճանապարհին պատահական զնդակով սպանվեց: Մո-
րոն ստանձնեց Փրանսիական բանակի հրամանատարու-
թյունը:

Կրայի առաջին գրոհները Փրանսիացիներին չփոթված
գտան և հաջող եյին անցնում: Փրանսիական հեծելազորը
բոլորովին հետ էր մղվել: Ավստրիացիք մոտենում եյին
բլուրների լանջերին: Նրանց բազմաթիւ հրետանին ուժեղ
հրակ էր տեղում: Հետևակազորը համարձակորեն գրոհի
յեր նետվում: Ավստրիացիների աջ զորասյուլներն արդեն
չուրջանցել եյին թշնամու դիրքերի ձախ թևը, Լեմուանի
դիվիզիայի բրիգադներից մեկն արդեն բոլորովին ջարդ-
վել էր և ավստրիական գումարտակներն արդեն բարձրա-
նում եյին բլուրների կատարները: Թվում էր, թե հաղթա-
նակը մոտ է:

Մինչ այդ Մորոն վտանգը տեսնելով՝ մարդ էր ուղար-
կել Սեն-Սերի մոտ, վոր ողնութեան ասնի: Վերջինս ան-

հապաղ ուղարկել էր Կոլլիի բրիգադը: Թարմ բրիգադի
Ժամանումը և միաժամանակ Պաստուրանից Կլոզելի ու
Պարտունոյի հարձակումը գործին նոր ընթացք տվեց: Բո-
պե յեղավ, յերբ ավստրիական զորքերը պիտի բարձունք-
ներից հետ մղվեյին և ստիպված եյին հետ քաշվել:

Մոտ ժամը 9-ին Սուվորովը Բագրատիոնին հրամայեց
գրավել Նովին, իսկ Միլորադովիչին կարգադրեց ոգնել
նրան՝ Կրային՝ վերսկսելու իր գրոհը: Դաժան ընդհարումը
չարունակվեց 13 ժամ: Սուվորովը գործի մեջ դրեց իր
մարտական կարգի յերրորդ հերթը՝ Դերֆելդենի ջոկատը,
սակայն հաջողութուն չկար: Հակառակորդները ուժասպառ
եյին յեղել: Սկսվեց սրտամաշ դադարը:

Այն ժամանակ Սուվորովը կովի մեջ քաշեց իր վեր-
ջին ռեզերվները: Նա Մելասին հրամայեց հարձակվել
Փրանսիացիների աջ թևի վրա, իսկ Ռոզենբերգին հրամա-
յեց դնալ Ռիվալտու՝ հետապնդման նպատակով: Ժամը 16-ին
կռիւը նորից բորբոքվեց: Փրանսիացիք դադարը հաջող ե-
յին ողտադործել: Նրանք ամբարքել եյին իրենց դիրքերը,
հրետանին տեղավորել եյին բարձունքներում և նախա-
պատրաստվել յերկարատե պաշտպանութեան:

Սակայն վոչ մի դիրք նրանց փրկել չկարողացավ: Սու-
վորովի ձեռքում նույնիսկ ավստրիացիք կարողանում էյին
անցնել թշնամու թևերն ու թիկունքը: Ռուսներն անզուսույ
կերպով նետվում եյին դեպի Պաստուրան, վորտեղի նել
անցըր փակված էր սայլերով ու ձիերի դիակներով: Ժամը
18-ին Փրանսիական զորքերի ամբողջ մասսան ցնցվեց:
Հետևակը, հրետանին ու հեծելազորը — բոլորը միասին
գլխասպառառ նետովեցին դաշտերը, ձորերն ու փոսերը:
Փուրքանչյուրը փրկություն էր վորոնում ինչպես կարող
էր: Միայն վրա հասնող զիչերը նրանց փրկեց վերջնական
բնաջնջումից:

Բայց և այնպես այս փայլուն հաղթանակը թանդ ձեռք
բերվեց. շարքից դուրս յեկածների թիւը հասնում էր մոտ
8 հազարի: Փրանսիացիների կուրուսան ավելի մեծ էր.
6500 սպանված ու վիրավոր, 4500 զերի, վորոնց մեջ

կային չորս դեներալ (Պերինյոն, Գրուշին, Կոլլին, Պարտունոն) : Համարյա ամբողջ հրետանին, 4 դրոշակ և ամբողջ դումակը ավար մնաց դաշնակիցներին :

Նովիի մոտ տեղի ունեցած ճակատամարտը պատերազմների պատմության մեջ ամենաարյունահեղ ճակատամարտերից մեկն է համարվում :

16 ժամ տևող կռվում հյուժված զորքերը հենց կռվի դաշտում էլ պառկեցին քնելու : Քնած չեր միայն Սուվորովը : Նա արդեն կարգադրություն էր պատրաստում, վոյլուսաբացին հարձակում սկսվի Ջենովական Ռիվյերայի վրա և դրա հետ միասին պաշտպանում էր զորքերի հանգիստը : Գիշերը Նովիի մոտ թագնված Փրանսիացիք, տեսնելով վոր բոլորը քուն են մտել, վորոշեցին հարձակվել պահակության վրա և տաղնապ առաջացնել : Սուվորովն անձամբ ղեկավարեց նրանց վոչնչացնելու գործը : Նրա անձնական միջամտության շնորհիվ կարգն անմիջապես վերականգնեց :

Ռիվյերայի վրա հարձակում գործելով թշնամուն վոչընչացնելու Սուվորովի ցանկությունը վիճակված չեր իրականանալ : Պարզվեց, վոր ավստրիացիք ղիտավորյալ կերպով պարեն ու չորիներ չեյին պատրաստել լեռնային արշավանքի համար : Հետևյալ օրը Մելասը ղեկուցեց, թե հոֆերիզարտոն իրեն հրամայել է Ծ հաղար մարդ առանձնացնել և ուղարկել Տոսկանա և վոր ինքը համապատասխան ցուցումներ է տվել : Մելասի կողմից Փելլզմարշալի դիսի վրայով կարգադրություն անելը ուս պորավարին հասցրած առաջին վիրավորանքն էր : Բթամտությունն ու նախանձն իրենց գործն էյին տեսնում :

Ռուսների ու ավստրիացիների դաշնակցության վերջը մոտենում էր :

Նովիի մոտ տեղի ունեցած ճակատամարտով էլ ավարտվեց Սուվորովի իտալական արշավանքը : Այդ արշավանքի ընթացքում նրա բոլոր մտածածներն իրագործվեցին : Մինչև վերջ չհասցրվեց այն, ինչին խանգարեցին ավստրիացիք :

Յերեք անգամ Սուվորովը պարտություն մասնեց հրմուտ և ուժեղ հակառակորդին : Մի քանի շաբաթվա ընթացքում նվաճեց ամբողջ Հյուսիսային Իտալիան : Չնայած հոֆերիզորտոի հարուցած խոչընդոտներին՝ Սուվորովը հերթով ջախջախեց Փրանսիական յերեք լավաղույն զորավարներին : Նրան չվիճակվեց միայն հանդիպել և չափվել Նապոլեոնի հետ : Նապոլեոնն այդ ժամանակ Յեդիպտոտումն էր : Բայց նրա բոլոր աշակերտները վախենում էյին «զարհուրելի» Սուվորովից :

Սուվորովի իտալական ամբողջ արշավանքը ռազմական արվեստի մի նմուշ է հանդիսանում, ուս պորավարի մեծ ուժի և հաստատակամության նմուշը, վորով հոչակ ձեռք բերեց և՛ իր և սուվորովյան զորքերի համար :

Սուվորովի մասին խոսում էր ամբողջ աշխարհը : Բոլոր զորամասերին հատուկ հրամանով կարգադրված էր նրան սահմանված պատիվները տալ նույնիսկ կայսեր ներկայությամբ :

Թատրոններում Սուվորովին նվիրված վոտանավորներ էյին կարդում : Անդլիայում թագավորից հետո յերկրորդ բաժակը բարձրացնում էյին Սուվորովի կենացը : Յուրաքանչյուր անգլիացի ցանկանում էր ունենալ Սուվորովի նկարը : Թերթերն ու ժուռնալները լիքն էյին նրան վերաբերող հոդվածներով :

Շատ զորավարների չի վիճակվել իրենց կենդանության ժամանակ այդպիսի փառք վայելել :

ՇՎԵՑԱՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

(Սխեման սեղավորված է գրի վերջում)

Վիեննայի, Պետերբուրգի և Լոնդոնի կաբինետներին յերկարատե բանակցություններից հետո մշակվեց ուժերի նոր դասավորում: Գլխավոր նպատակն էր համարվում Փրանսիացիներին Շվեցարիայից դուրս քշելը: Այդ պլանի իրականացման ամբողջ ծանրությունն ընկնում էր ուսս գործերի վրա: Ստանց Շվեցարիայում վորեւե առանձին շահ ունենալու Պավել I-ի Ռուսաստանը պետք է իր արյունը թափեր, վորպեսզի անդլիացիք իրար հետեից Փրանսիական զաղութները գրավելով դառնան համաշխարհային պետություն, իսկ Ավստրիան իրեն միացնի Հյուսիսային Իտալիան, վոր նվաճվել էր Սուվորովի ջանքերով: Շվեցարիական ու իտալական արշավանքները քաղաքական տեսակետից մեղ համար առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում, սակայն դրանք հետաքրքրական ու կարևոր են ռազմական տեսակետից: Նրանք ցույց են տալիս ռուսական բանակի բացառիկ քաջությունը, նկարագրում են աշխարհիս զորավարներից մեծագույնի՝ հանձարեղ Սուվորովի ռազմական արտակարգ ընդունակությունները:

1799 թվի ողոստոսի վերջին Սուվորովն ստացավ երգհերցոգ Կարլի նամակը պատերազմի նոր պլանի մասին, իսկ յերկու որ հետո՝ Պավել կայսեր հրամանը՝ դեպի Շվեցարիա արշավելու մասին:

Իտալիայում հրամանատարությունը հանձնելով ավստրիական զեներալ Մելասին՝ Սուվորովն Ատտիից և Ալեքսանդրիայից յերկու զորասյուներով դուրս յեկավ դեպի Տավերնա, 6 որում անցնելով ավելի քան 150 կիլոմետր:

Տավերնայում Սուվորովը հրահանգ հրապարակեց, թե լեռներում բանակն ինչպես պիտի դործի և զորասյուների կազմը վերակազմակերպեց այն հաշվով, վոր անհրաժեշտության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կարողանա ինքնուրույն կռիվ մղել: Սուվորովի ամբողջ բանակը, վոր մտավ Տավերնա, բաղկացած էր 21 հազար մարդուց, վորից հետևակ՝ 15600 հոգի, հեծելազոր՝ 3700, հրետանավորներ՝ 1500 և սակրավորներ՝ 200 մարդ: Բանակը բաժանվում էր յերկու կորպուսի, Ռոզենբերգի կորպուսը՝ մոտ 7 հազար մարդ և Դերֆելդենի կորպուսը՝ 14 հազար մարդ: Շվեցարիայում Սուվորովի բանակին պիտի միանային դեներալ Ռիմսկի-Կորսակովի կորպուսը՝ մոտ 25 հազար մարդ և ավստրիական Ֆելդմարշալ Հոտցեն՝ 25 հազար մարդով: Բացի այդ, մինչև Սուվորովի տեղ հասնելը Շվեցարիայում պետք է լիներ երցհերցոգ Կարլի ավստրիական բանակը:

Վիեննայի կաբինետի անսպասան դիտավորյալ մեքենայությունների հետևանքով երցհերցոգ Կարլի բանակը Շվեցարիայից դուրս էր բերվել մինչև Սուվորովի այնտեղ հասնելը: Պատմության մեջ և՛ մինչև այդ արշավանքը և՛ դրանից հետո բազմիցս նկատվել են այդպիսի դեպքեր: Դաշնակից ավստրիացիք սովորաբար ավարի բաժանման նկատառումով աշխատել են հնարավորին չափավելի շատ արնաքամ անել իրենց ընկերակցին, վորպեսզի բաժանման ժամանակ իրենք ավելի ուժեղ յերևան: Բայց այդ բանը քիչ է ոգնել նրանց:

Շվեցարիայի ավստրիացիների հեռանալուց հետո Փրանսիացիներին ուժը խիստ գերազանցում էր. 92 հազար մարդ՝ դաշնակիցների 50 հազարի դիմաց: Փրանսիական գլխավոր հրամանատար զեներալ Մասսենան վորոշեց ողոստադործել իր ուժերի գերակշռությունը և դաշնակիցներին Շվեցարիայից դուրս քշել նախ քան Սուվորովի այնտեղ հասնելը:

Մասսենան ընդհանուր գրոհը նշանակել էր սեպտեմբերի 25-ին, մինչդեռ Սուվորովը յենթադրում էր Յյուրըի

Հասնել 28-ին: Յեւ ահա, յերբ Սուվորովը աներեւակայելի զժվարություններ հաղթահարելով հակառակորդին դուրս ե մղում Սեն-Գոթարդի լեռնանցքից ու Սատանի կամուրջից, Մասենան բոլոր ուժերով հարձակվում ե Ռիմսկի-Կորսակովի ե Հոտցի վրա: Սեպտեմբերի 25-ին ե 26-ին նա կործանիչ հարվածներ ե տալիս նրանց: Կորսակովը ե Հոտցեն բոլորովին ջախջախվում են: Հոտցեն սղանված ե: Ռուսները նահանջում են դեպի Շաֆհաուզեն: Սուվորովի զրուժյունն աներանելի յե դառնում:

Հետևենք նրա ընթացքին ե այդ փայլուն որինակով սովորենք այդ բացառիկ մարդու արիությունն ու ստիկունությունը:

Սեն-Գոթարդում Լեկուրբի 8,5 հազար Փրանսիացիներն եյին: Տեղադրությունը կրկնապատկում եր նրանց ուժը: Սուվորովը Դերֆելդենի ճակատային հարվածով կաշկանդում ե հակառակորդին, իսկ այդ ժամանակ Ռոզենբերգն ուղարկվում ե Լուկմայեր լեռնաշղթան չուրջանցելու ե դեպի Ուրդեն գյուղը դուրս գալու: Լեկուրբը շրջապատվեց ե Ռեյսայի հովիտը տանող բոլոր ճանապարհները կտրվեցին նրա առաջ: Այդ զրուժյան մեջ Լեկուրբին ուրիշ բան չեր մնում անելու, քան այն, վոր բոլոր հրանոթները Ռեյսա նեախ, իսկ ինքը զորքերի հետ գիշերով Բեացբերգ լեռնաշղթայով անցնի, դուրս գա Ռեյսի հովիտը, Գեչենեն գյուղի մոտ: Ամբողջ գիշերը Փրանսիացիք ներքաններին բզեռ ամբարցած մաղցում եյին լեռներում ե առավոտյան զեմ Լեկուրբը նորից Սուվորովի ճանապարհը յիակեց Ռեյսա գետի միակ անցի՝ Սատանի կամուրջի մոտ:

Սեպտեմբերի 25-ի առավոտյան Սուվորովի մեկ զորասյունը շարժվեց դեպի Ալտորֆ: Նոր սխրագործություն եր սպասվում: Ուրդեն գետից Ա կելումետր հեռավորությամբ մի լեռնային գետակ ե հոսում «Ուրդենի անցքի» միջով, սեպացած ժայռերի միջով ե լեռան չուրջը պտտվելով կլորով կերպով իջնում ե դեպի Սատանի կամուրջը, վոր զցված ե Ռեյսա գետի վրայով: Կամուրջի մոտ գետն աղմուկով դուրս ե նետվում ճեղքի միջից, փրփրում ե 25

մետր բարձրությամբ ջրվեժից դահալիժում ցած: Մի նեղ արահետ ալյուտեղ յերկու անգամ պտտվում ե ժայռի շուրջը ե ալից ափ անցնելով՝ Գեչենեն գյուղի մոտ դուրս ե գալիս կերճից:

Մի քանի հրացանաձիգը բավական եյին այստեղ Սուվորովի առաջխաղացումը կանգնեցնելու համար: Լուսաբացին Մանսուրովի գունդը մոտեցավ «Ուրդենի անցքին»: Գնդի ավանգարդին դիմավորեց Փրանսիացիներին թնդանոթային ու հրացանային կրակը: Առաջ անցնելն անհնարին ե: Այն ժամանակ զնդապետ Տրուբնիկովի 300 կամավորները, մայր Տրեվուդինը 20 յեղերներով ե զնդապետ Սվիչչևի գումարտակը սեպացած ժայռերի վրա մաղցելով անցնում են Փրանսիացիների թիկունքը ե նրանց ստիպում են «անցըր» թողնել:

Սակայն Լեկուրբի յերկու գումարտակները վոր կանդնած եյին կամուրջի այն կողմը, կարողանում են վերցնել վայրեջքի մի մասը: Նոր համառ հրաձգություն ե սկսվում: Այն ժամանակ գեներալ Կամենսկու գործասերը նոր չուրջանց են կատարում ե Փրանսիացիք վերջնականապես կամուրջը թողնում են: Ժամը 16-ին կամուրջը բացված եր ուռաների առաջխաղացման համար: Դուրս յեկավ, վոր Սուվորովի զորքերի համար անհնարին բան չկա: Հաղթահարելով հմուտ թշնամուն ե բնության ստեղծած անմառչելի արգելքները՝ Սուվորովի զորքերը սեպտեմբերի 26-ին հաջողությամբ ժամանեցին Ալտորֆ: Մնում եր մեկ յերթ մինչև Շվից, վորտեղ պետք ե միանային դաշնակիցների մյուս ուժերի հետ ե վորտեղ անհրաժեշտ պաշարեղեն եր պատրաստած:

Թվում եր, թե առաջնորդի համարձակ մտադրությունը մոտ ե իրականացման:

Սակայն Ալտորֆի մոտ Սուվորովն իմացավ, վոր Լյուցերնյան լճի մոտով դեպի Շվից տանող ուղիղ ճանապարհ չկա ե յերեք չի յեղել: Միայն յերկու շավիղ կան, վորոնք Շախենի հովիտի Ռուստոկ ձյունապատ լեռնաշղթայի վրայով տանում են դեպի Մուռտենակ, սակայն նույնիսկ վորձ-

ված վորսորդները այդ ժամանակ այդ շավիղներն անան-
ցանելի էյին համարում: Դաշնակից բանակի մասին տեղի-
կություն չկար, իսկ տեղական բնակիչների մեջ լուրերը ե-
յին պոտոում, թե մի ուր առաջ կատաղի կուլում Փրանսիա-
ցիք վճռական հաղթանակ են տարել նրանց դեմ:

Ի՞նչպե՞ս կարող էր պատահել, վոր Սուվորովը միայն
Ալտորֆում իմացավ, թե դեպի Շվից ճանապարհ չկա:
Հայտնի չե, վոր նրա սկզբնական պլանի համաձայն զոր-
քերի միացումը պիտի տեղի ունենար Գլարխի շրջանում:
Նա այդ պլանը փոխել էր ավստրիացիների խորհրդով, վո-
րոնք բոլոր տեղեկությունները պիտի տային առաջխաղաց-
ման ճանապարհների մասին: Սուվորովը հաճախ էր նրանց
հիշեցնում այդ: Ոտարերկրյա շատ գրողներ գտնում են,
վոր ավստրիացիք դիտավորյալ կերպով են Սուվորովին դե-
պի Ալտորֆ տարել:

Այսպես թե այնպես Սուվորովի գորքերը նոր աներևա-
կայելի դժվարության առաջ էյին կանգնած: Առանց մի
բուպե տատանվելու Սուվորովը վորոշում ընդունեց դեպի
Շվից շարժվել ամենակարճ ճանապարհով, ուչազրություն
չդարձնելով դժվարությունների վրա:

Ռեյսա ու Շախեն գետերի հովիտների և Մուռտտի հով-
աի միջև յեղած լեռնաշղթան միջին հաշվով ծովի մակերև-
վույթից 2000 մետր բարձրություն ունի, հովիտների հա-
տակից՝ 1500—1600 մետր: Ուժասպառ գորքերը լեռնաշղթա-
յի ստորոտից բարձրանում էյին հազիվ նկատելի շավիղով,
վորը քանի բարձրանում՝ այնքան ավելի վատանում էր,
տեղ-տեղ էլ բոլորովին անհայտանում: Սուվորովը, չնա-
յած իր տարիքին, քայլում էր վտարով, առջևի դրամասե-
րի հետ: Ինքը շարունակ առույզ և ուրախ լինելով՝ նա ի-
մարդկանց էլ թույլ չէր տալիս ընկճվել: Տեսնելով, վոր
մի իրումք մարդիկ ուժասպառ յեղած հրաժարվում են ա-
ռաջ դնալ, նա սկսեց ուրախ յերգել. «Ի՞նչ է պատահել այս
ազդկանք, ի՞նչ է պատահել դեղեցկուհուն»: Յե՛վ հոգնած
մարդիկ մերթ կատակով, մերթ յերգով խրախուսվելով
առաջ էյին դնում: Վերելքը դժվարին էր, սակայն վայրե՞-

քը ավելի դժվար էր: Բազրատինը՝ Սուվորովի սիրելին
շարունակ ամենադժվար տեղերն էր լինում: Այդ անդամ ել-
նա դնում էր ավանդարդում:

Հովիտն իջնելով՝ Բազրատինը տեղեկանում է, վոր
դյուղը գրավված է Փրանսիացիների կողմից: Առանց յեր-
կար մտածելու նա գրոհում է նրանց վրա: Արդյունքն այն
է լինում, վոր հակառակորդի կեսը կոտորվում է, մյուս-
ները դերի յեն ընկնում: Բազրատինի ամբողջ ավանդարդը
Մուռտտեն դյուղի մոտ հավաքվեց ուչ գելերը: Հանդստա-
նալու փոխարեն ստիպված յեղան դենքը ձեռքներին պա-
րաստ մնալ, վորովհետև վոչ հեռու, Շվիցում հակառա-
կորդն էր, գլխավոր ուժերի պոչը ձգվել էր մինչև Ալտորֆ,
իսկ այնտեղից մինչև Մուռտտեն ամբողջ ճանապարհը
ծածկված էր հատ ու կենտ մարդկանցով ու ջրրիններով,
վորոնք վերջին ուժերն էյին լարում սոսկալի վերելքներն
ու վայրելքները հաղթահարելու համար:

Յերկու ուր Սուվորովի գորքերը Ալտորֆից շարժվում
էյին դեպի Մուռտտեն: Այդ ամբողջ ժամանակամիջոցում
Լեկուրը փորձում էր գրոհել Ռոդենբերգի վրա, վորը
պաշտպանում էր ռուսների զորասյունի ուղին, սակայն
ամեն անգամ Լեկուրի գրոհներն անհաջող էյին անցնում:
Սեպտեմբերի 28-ին վերջապես Սուվորովի գորքերը հավաք-
վեցին Մուռտտենի հովտում: Գլարխը և Կլենտալ հովիտը
գրավված էյին հակառակորդի կողմից, իսկ Լինկենի ջո-
կատի մասին վոչ մի տեղեկություն չկար:

Տեղական բնակիչներից Սուվորովն իմացավ, վոր Ռիմ-
սկի-Կորսակովը և ավստրիացիք ջախջախվել են: Ի՞նչ
անել: Դեպի Շվից դնալը անմտություն է: Նահանջը ամոթ
է, ռուսները և Սուվորովը յերբեք չեն նահանջում: Միակ
բանը, վոր մնում էր անելու, դեպի Գլարխ անցնելն էր՝
ավստրիացիներին միանալու համար: Իսկ գորքե՞րն ինչպե՞ս,
պատրաստ են նրանք այդքան տառապանքից հետո նոր
սխրագործության դիմելու: Սուվորովը զինվորական խոր-
հուրդ է հրավիրում: Իր ճառը նա վերջացնում է այսպես.

— Մենք վոչ վորքից ոգնություն սպասել չենք կարող:
Միակ հույսը ձեր առաջնորդած գործե՞ս անսահման քա-

Ղությունն և և անձնուրացությունը: Միայն այդ և մնում մեզ: Մեր առաջ աշխարհում չաեսնված խոշորագույն ջանքեր կան. մենք անդունդի յեզրին ենք կանգնած... Սակայն մենք ուսաներ ենք: Փրկեցեք Ռուսաստանի պատիւին ու արժանապատւությունը:

Ինչորի փոխարեն պատասխանեց ԴերՖելդենը.

— Հայր, Ալեքսանդր Վասիլյեվիչ, մենք տեսնում ենք և դիտենք, թե ինչ կտ մեր առաջ: Բայց դու հո դիտես, հայր, ճանաչում ես ամբողջ հողով քեզ նվիրված, անսահմանորեն քեզ սիրող զինվորներին, հավատա՛ մեզ, յերգվում ենք մեր և բոլորի փոխարեն: Ինչ ել պատահելու լինի մեր մեջ, հայր, դու չես տեսնի վոչ նողկալի վախկոտություն, վոչ տրտուկ: Թող թշնամու հարյուր հազարներ մեր դիմաց յեկնեն, թող այս լեռները յեռապատիկ, սասնապատիկ բարձր լինեն, մենք կհաղթենք և՛ նրանց, և՛ մյուսներին, ամեն ինչի կդիմանանք և չենք խայտառակի ուսսական զենքը, իսկ յեթե մեռնենք, կմեռնենք փառքով: Առաջնորդիր մեզ վորտեղ ուզում ես, արա ինչ ցանկանում ես, մենք քոնն ենք, հայր... Մենք ուսաներ ենք:

«Յերգվում ենք» բառերից հետո Սուվորովը բարձրացրեց զլուխը, բաց արավ իր փայլուն աչքերը և սկսեց խոսել.

— Ծնորհակալ եմ, շնորհակալ եմ: Կլախձախենք թշնամուն և այդ հաղթանակ կլինի նենդության դեմ... Հաղթանակ կլինի:

Այդ խոսքերից հետո նա սեղանին մոտեցավ և թելադրեց հրամանը: Հրամանի եյությունը հետևյալն էր: Սեպտեմբերի 30-ին Աուֆենբերգը շարժվում է դեպի Պրագել լեռը, Գլարիսի ճանապարհին խփում է Փրանսիացիներին և հնարավորին չափ հեռու քշում: Հետևյալ որը նույն ճանապարհով գնում է Բազրատիոնը, նրա հետևից Եվեյիովսկու գլխիցիան: ԴերՖելդենի կորպուսից Ռոզենբերգը և Ֆերստերը մնում են Մուստանի հովտում՝ Եվեյի մոտ կանգնած հակառակորդին հետ պահելու համար, մինչև վեր մյուսները Պրագելի վրայով անցնեն:

Աուֆենբերգը Պրագել լեռան վրայից հակառակորդին քշեց և իջավ Կլենտալ: Հոկտեմբերի 1-ին նրա հետևից շարժվեց Բազրատիոնը, Բազրատիոնի հետևից՝ Եվեյիովսկին: Մոտ ժամը 15-ին Բազրատիոնը իջավ Կլենտալ, վորտեղ Աուֆենբերգն առավտավանից կռիվ եր մղում Մուլիտորի դեմ, վորը հավատացած լինելով, թե Մուստանի հովտում Սուվորովը զոհ է գնացել, Աուֆենբերգենին առաջարկություն ուղարկեց անձնատուր լինել: Աուֆենբերգենն արդեն բանակցությունների մեջ եր մտել, բայց այդ ժամանակ վրա հասավ Բազրատիոնը: Ճակատից հարված տարով և յերկու թևերից շուրջանցելով նա Մուլիտորին տեղահան արեց և սեղմեց լճի ու սեպացած լեռների արանքում: Դեպի Լինտայի հովիտը տանող ճանապարհն աղատված եր:

Նույն ժամանակ Ռոզենբերգը փայլուն կերպով կատարում եր թիկունքը պահելու խնդիրը: Ռոզենբերգի արամադրության տակ Մուստանի հովտում Ֆերստերի դիվիզիայի հետ միասին կար մոտ 8 հազար մարդ: Մասենան իջ բոլոր ուժերը դեպի Եվից քաղերով այնտեղ հավաքեց 11 հազար հոգի և վորոչեց այդ ուժերով հարձակվել Սուվորովի վրա և Մուստանի հովտում վոչնչացնել նրան: Հոկտեմբերի 1-ի առավոտյան Մասենան Եվիցից Եկենբուրգի վրայով, հին ճանապարհի յերկարությամբ շարժվեց դեպի Մուստոտա դեպի վրա զցված Քարե կամուրջը:

Կես որվան մոտ Փրանսիական զորասյունի զլուխը մոտեցավ Խինտեր-Իրերգույին և սկսեց այնտեղից հարձակվել Կլինտորելի վրա: Ռոզենբերգի առաջավոր զիրքերը կրակ բաց արին, սակայն տաք հրաձգությունից հետո քաշվեցին դեպի գլխավոր պաշտպանության դիժը, վոր գտնվում եր Հեսիդկենի և Բյուլի միջև: Այստեղ ևս Փրանսիացիք ուժեղ կրակի հանդիպեցին և ստիպված յեղան գլխավոր ուժերը ծավալել: Սակայն պահակային զորամասերը խոշոր ուժերի զրոհը չընդունեցին և քաշվեցին դեպի գլխավոր դիրքը:

Ռոզենբերգն իր զորքերը մարտական կարգի մեջ դրեց Մուստան գյուղից դեպի արևմուտք, 800—1000 մ. լայ-

նությամբ մի դաշտում: Առաջին գիծը, վոր կազմվեց առաջավոր պոստերի նախկին ռեզերվից, շարվեց յերեք շարքով, յերկրորդ գիծը ևս յերեք շարք կազմեց առաջինից 300 մետր դեպի հետ: Ավելի հեռուն, ռեզերվում գտնվում էին Ֆերասերի, Վալեցկու և Տիրնովի զնդերը: Հեծելազորը տեղավորված էր թևերում: Այսպիսի դիրքով սպասում էին հակառակորդի գրոհին:

Փրանսիացիք հարձակվում էին իրենց օովորական մարտակարգով. առջևից հրաձիգների մի խիտ շղթա, նրա հետևից շարային կարողով ու քայլով, նվազախմբով ու թմբուկներով գլխավոր ուժերը, վորոնք շարված էին յերեք խոշոր զորասյուներով, յերկուսը Մուստտա գետի աջ ափում, մեկը՝ ձախ, հրանոթները զորասյուների գլխամասում:

Մասենի առաջավոր զորամասերը յեռանդով օեղմեցին հետ նահանջող ռուսական պահակային զորքերին, Մուստտա գետն անցան և դուրս յեկան ռուսների գլխավոր դիրքի առաջ: Յերկու կողմերից էլ հրացանային ու կարտեզային ուժեղ կրակ սկսվեց: Փրանսիացիք գրոհ էին մղում: Ռուսական զորքերի առաջին գիծը յերերաց և սկսեց նահանջել, բայց այդ ժամանակ յերկրորդ գիծը խիտ առ խիտ շարվեց դեպի առաջին գիծը և մի քանի համադարկերից հետո յերկու զորագծերն էլ սվինները դեմ տված սլացան Փրանսիացիների վրա: Այդ, ինչպես տեղական բնակիչներն են պատմում, մի ահեղ տեսարան էր: Հովտի ամբողջ լայնությամբ, միանգամից ամբողջ ճակատով բաղխվեցին հակառակորդների մարտական գծերը: Թևերում ռուսների գրոհին ոգնում էին կազակները:

Փրանսիացիների հետևի զորաշարքերն իզուր էին առաջ դալիս իրենց առաջավոր զորագծին ոգնելու և իզուր էին փորձում կանգնեցնել փախչողներին և հետ շարտել ռուսներին: Ռուսների ճնշմանը վոչինչ չէր կարող դիմանալ: Նրանց թափը շուտ էր տալիս ամեն ինչ, ինչ վոր հանդիպում էր ճանապարհին: Փրանսիական ուժերը յերերացին և սկսեցին ընդհանուր նահանջը, վոր ռուսական հե-

ռազորի ու հեծելազորի ճնշման տակ դարձավ խուճապահար փախուստ:

Այդ ճակատամարտի հիշողությունը յերկար ժամանակ մնում էր տեղական բնակիչների մեջ: Շվեցարացիք հաճախ ասում էին.

— Կարծում եմ մենք լավ կուլեցինք Շինդելեզի և Ռոտենտուրմի մոտ, սակայն ռուսների կովին վոչինչ հավասարվել չի կարող:

Փրանսիացիների կորուստը ահադին էր. 3 հազար սպանված և վերավոր, ավելի քան 300 հոգի խեղդվեցին, մոտ 200 հոգի ժայռերից գլորվեցին ու զոհ գնացին, գերի առնվեց մեկ զենեռալ, 108-րդ կիսաբրիգադի հրամանատար Լակուրը: Այստեղ Փրանսիացիների զործած հարձակումը իրենց ուժերի մեկ յերրորդը նստեց:

Այսպես լուծվեց պաշտպանությամբ հետ քաշվելու խնդիրը: Հանդամանքները Ռոզենբերգին ստիպում էին հեռանալ: Նա խորամանկության դիմեց լուրեր տարածեց, թե մյուս որը շարժվում է դեպի Շվից: Հրամայեց Շվիցի շրջանում 12 հազար մարդու համար պարեն պատրաստել: Այս լուրերը իրենց վրա բեկեցին հակառակորդի ուշադրությունը, թեև առանց այդ խորամանկության էլ հաղթվ թե Փրանսիացիք սիրտ անեյին յերրորդ անգամ մտնել իրենց համար ճակատագրական այդ կիրճը:

Հոկտեմբերի 2-ի լուսաբացին Ռոզենբերգը Պրագեյի վրայով առաջ ուղարկեց 1200 զերիններ, մեկ գումարտակի հսկողությամբ: Նրանց հետևից Ռոզենբերգի կորպուսը, զորասյունի վերջից գնում էին կազակները, վորոնք հովտից հեռացան միայն 3-ի առավոտյան: Հոկտեմբերի 2-ի, լույս 3-ի գիշերը զորքը ճանապարհին աներևակայելի դժվարություններ կրեց. լեռներում ձյուն էր գալիս, իսկ հովտում հորդ անձրև էր տեղում: Բոլոր դժվարությունները հաղթահարելով հոկտեմբերի 4-ի առավոտյան Ռոզենբերգի ջոկատի վերջին ձիավորները մոտեցան Գյարխին:

Փրանսիացիների կողմից անհանդստության չենթարկվելով և իր արյերգարդին սպասելով՝ Սուվորովը հոկ-

տեմբերի 2-ին և 3-ին մնաց Գլարիտի մոտի ճամբարում:

Հոկտեմբերի 4-ին գինավորական խորհրդում վորոչեցին Շվալյոենի և Ելմի վրայով դնալ Հոենոսի հովիտը: Կին-ցիդ-Կուլմի և Պրադելի վրայով կատարած դժվարին յերթերից հետո պետք է հաղթահարելին մի լեռնանցք, վորը տարվա այդ ուշ ժամանակին առաջիններից ավելի դժվար էր լինելու: Այդ յերթի թիկունքի պաշտպանությունը հանձնարարվեց Բադրատիոնին, վորը հետ մղելով յեռանդուն կերպով իր վրա հարձակվող Մուլխորի զորքերի բոլոր գրոհները, հերոսաբար կատարեց իր վրա դրված խնդիրը:

Հոկտեմբերի 5-ի յերեկոյան Սուվորովի բանակը հա-վաքվեց Ելմում: Հետևյալ օրը նա հաղթահարեց Պանիկ-ուեր լեռնանցքը, վոր ծածկված էր ավելի քան կես մետր հաստությամբ ձյան շերտով, ըստ վորում հոկտեմբերի 6-ի, լույս 7-ի գիշերն անց կացրեց այդ լեռնանցքում: Հոկ-տեմբերի 7-ի յերեկոյան գլխավոր ուժերը հասան Պա-նիկս:

Դժվարությունը մնաց հետևում: Հոկտեմբերի 12-ին Սուվորովն իր բանակով արդեն Փելզկիրխենումն էր, վոր-տեղ գտավ այն դումակն ու հրետանին, վոր ուղարկվել էր Իտալիայից:

Դեռ նոր էր զորքը կարգի յեկել իր կրած ծայրահեղ դժվարություններից հետո, յերբ հոկտեմբերի 13-ին Սու-վորովը առաջարկություն ուղարկեց երցհերցոգին, վոր կանդնած էր Իոնաուեչինդենում, միացյալ ուժերով Հոե-նոսի վրայով հարձակում գործելու մասին: Ավստրիացի-ների հանցանքով այդ հարձակումը տեղի չունեցավ:

Սուվորովի շվեցարական արշավանքն իր նպատակին չհասավ: Սակայն այդ արշավանքը կատարող բանակը մեծ-փառքի արժանացավ: Այդպիսի դժվարությունների դիմա-նայու համար, յնչտական վտանգի մեջ լինելով և հաճախ հուսահատական դրության մեջ գտնվելով հրամանատար-



Սուվորովի յերբը Ալպերի վրայով

ների նկատմամբ հավատը չկորցնելու համար, այդ պայ-
մաններում շարունակ արիություն ու տոկունություն ցու-
ցաբերելու համար, այս բոլորի համար հարկավոր եր զո-
րավարի յերկաթե կամք, բանակի կույր հավատ նրա նկատ-
մամբ և բազմաթիվ մարտերում կոփված հաստատա-
կամություն՝ սկսած շարքային մարտիկից մինչև զենեբալլը:

Յեթե Մորոն ասում եր, վոր հենց միայն զեպի Տրեք-
քիա կատարած առաջխաղացման համար Սուվորովն ար-
ժանի յե մեծ զորավարի կոչման, այդ Մասսենան ասել է,
թե ինքը իր բոլոր 48 արշավանքները կտար Սուվորովի մեկ
չվեցարական արշավանքին:

Ամբողջ Յեվրոպան սրտատրոփ հեռուում եր այդ ար-
շավանքին: Հոկտեմբերի վերջին տեղեկություններ ստաց-
վեցին արշավանքի հաջող վերջավորության մասին: Ռուս-
ների ցնծությանը վերջ չկար: Իր ամբողջ կյանքում ուժե-
ղագույն թշնամիների հաղթելով՝ Սուվորովը չվեցարական
արշավանքով ավելացրեց իր դափնիները և իր անունը պա-
կեց անպարտելի հերոսի փառքով:

Իտալական ու չվեցարական արշավանքների համար
Սուվորովն ստացավ զենեբալիսիմուս կոչումը:

Դեպի Շվեդարիա նոր արշավանք կազմակերպելու
պլաններին վիճակված չեր իրականանալու: Դաշնակիցնե-
րի մեջ յեղած տարաձայնությունը պատճառ յեղավ, վոր
Սուվորովը ստիպված յեղավ դնալ Բոհեմիա, Աուգսբուր-
գի մոտ, վորտեղ և մնաց ձմեռելու: Բանակը տեղավորվեց
Պրագայում, Չեխոսլովակիայի ներկայիս մայրաքաղաքում:
Սուվորովի Պրագա գալն ընդհանուր տոնի վերածվեց:
Ռուս զորավարն ամբողջ Յեվրոպայի ուշադրության կենտ-
րոնն եր կազմում, ամեն տեղից նա հարգանքի ու պատվի
նշաններ եր ստանում:

Պատերազմը վերջացավ և ռուսական բանակը 1800 թվի
հունվարի 27-ին յերկու զորասյուններով շարժվեց դեպի
հայրենիք:

Կրակովի ճանապարհին Սուվորովն իրեն վատ զգաց:
Նա հրամանատարությունը հանձնեց Ռոզենբերգին, մի օրը-

տաշարժ նամակով հրաժեշտ տվեց զորքերին և միայնակ
շարունակեց ճանապարհը: Յերկար պայքարեց նա հիվան-
դության դեմ, սակայն տարիները և կրած դժվարություն-
ները խախտել էյին նրա ուժերը: Սուվորովն ստիպված յե-
ղավ ճանապարհորդությունն ընդհատել և իջնել Կոբրինըս-
կոյեյի իր կալվածքում:

Թագավորի կողմից Սուվորովի նկատմամբ ցույց տված
հատուկ ուշադրությունը, նրա հանձնարարությամբ Սու-
վորովի վորդու՝ Արկադի Ալեքսանդրովիչի Կոբրինսկոյե
գալը հիվանդի տրամադրությունը բարձրացրեց: Սուվո-
րովն անկողնից յելավ և սկսեց իր համար սովորական
կյանք վարել: Բժիշկները նույնպես նրան թույլատրեցին
ճանապարհը շարունակել: Սուվորովին հանդիսավոր ըն-
դունելություն եր սպասում Պետերբուրգում: Սակայն ամեն
ինչ այլ ընթացք ստացավ: Սուվորովին նախանձողները,
ողովելով նրա բացակայությունից և դեպի մայրաքաղաք
կատարած նրա ճանապարհորդության դանդաղությունից,
ժամանակ ունեցան Պավելի մոտ զրոյարտելու նրան: Ապրի-
լի 2-ին նրան ուղարկված նամակում ասված է. «Պարոն
զենեբալիսիմուս, իշխան Իտալիանսկի, կոմս Սուվորով-
Ռիմնիկսկի: Ինձ տեղեկություն է հասել, վոր դուք, այ-
տասահմանում իմ զորքերի հրամանատար յեղած ժամա-
նակ, ձեզ մոտ ունեցել եք մի զենեբալ, վորին անվանե-
լիս եք յեղել հերթապահ, հակառակ իմ նահանամ կարդե-
րի և բարձրագույն կանոնադրքի: Յեվ զարմանում եմ այդ
բանից, հրամայում եմ ձեզ տեղեկացնել ինձ, թե ինչն է
ձեզ ստիպել այդ անել»:

Այսպիսի նամակ ուղարկելու հետ միաժամանակ վե-
րացվեցին մայրաքաղաքում Սուվորովին հանդիսավոր կեր-
պով ընդունելու մասին տրված բոլոր կարգադրություն-
ները: Սուվորովին հասցրած այս հարվածը նրա համար
չատ ծանր յեղավ: Արկարգ ծերունու խախտված առողջու-
թյունը չբիմացավ դրան: Սուվորովը կանոնապահ Վիլնոյի
մոտ, առաջին լիտվական գյուղում: Այնտեղ, մի ռյուդա-

ցու աղքատիկ խրճիթում պառկած եր բոլորի կողմից մո-
ռացված ոռու հայտնի դորավարը:

Փոքր ինչ կաղզուրվելուց հետո մայիսի 3-ին նա, ա-
ռանց վորեւ մեկի կողմից նկատվելու, դադարնի մտալ իր
հայրենի մայրաքաղաքը և կանգ առալ իր աղակահաններից
մեկի՝ Սվոստովի մոտ: Սակայն թշնամիներն իմացան,
վոր Սուվորովը Պետերբուրգ է յեկել: Պայվելից տեղեկու-
թյուն ստացվեց, թե՛ չներկայանալ իր մոտ ընդունելու-
թյան: Այդ թույնի վերջին կաթիլն էր, վոր վերջնականա-
պես սպանեց ծերունուն:

1800 թվի մայիսի 19-ին ոռուաց պատմության մեջ մե-
ծազույն դորավարը, աշխարհի մեծ դորավարների ընտանի-
քի անդամներից մեկը, վորը ոռուական զենքի փառքը
մինչ այդ չտեսնված բարձրության եր հասցրել, մեռալ
լիակատար անհայտության մեջ ուրիշի տանը, բարեսրտու-
թյունից դրդված նրան ռթեան տված հեռավոր աղգականի
հարկի տակ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍՈՒՎՈՐՈՎՅԱՆ ՍԻՍԵՄԸ

Բարի անունը յուրաքանչյուր մարդու բաժինն է, բայց յեռ
բարի անունը կապել եմ իմ հայրենիքի փառքի հետ և բո-
լոր հաջողութունները վերագրել եմ նրա բարեկեցությանը:

Բիբիկովից գրած Սուվորովի նամակից:

Սուվորովը դաստիարակության հիմքում դնում էր
սերն ու նվիրվածությունը հայրենիքին և ինքն այդ տեսա-
կետից իր ամբողջ կյանքի ընթացքում, նույնիսկ շնորհա-
հազուրկ յեղած ժամանակ այդ բանի սրածառ որինակ եր
հանդիսանում:

Իր ամբողջ կյանքում նա համառորեն, առանց ձեռքե-
քը ծալելու աշխատում եր հայրենիքի փառքի համար և
չկար մի բան, վոր նա չզոհարեր իր հայրենիքի փառքին:
Իր ամբողջ յերկարամյա կյանքում բազմաթիվ թշնամիների
հաղթելով՝ Սուվորովը յերբեք ինքն իրեն չի տվել այն
հարցը, վոր բնորոշ է իր ավելի յերիտասարդ ժամանակա-
կցի՝ Նապոլեոնի համար. «Արդյոք յերկա՞ր պիտի հաղթեմ
ուրիշների համար, ժամանակը չե՞, վոր ինքս ինձ համար
աշխատեմ»: Սուվորովը թշնամիներին հաղթում եր վոր թե
իր համար, այլ իր հայրենիքի փառքը բարձրացնելու հա-
մար: Ձինվորները նրա մասին ասում էին. «Նա մեզ հետ
է ամեն տեղ— և՛ արչավանքում, և՛ կովի մեջ, նա մեզ
հետ չի միայն ավարը բաժանելու ժամանակ»: Սուվորովն
անչահամու էր ինչպես փոքր, այնպես էլ մեծ գործերում:
Նա ամեն կերպ աշխատում եր, վոր իր ստորադրյալներն
էլ այդպիսին լինեն: Նա միշտ գործի բարոյական կողմին
մեծ նշանակություն եր տալիս: Բովանդակությունը ձեռից
բարձր եր դասում: Ձորքերի մեջ առավելագույն չափի աղ-
տիվություն ու յեռանդ զարգացնելը նրա մշտական հոգսն
էր:

«Աչքի չափը, արագությունն ու ճնշում գործ դնելը

հաղթութեան հիմքն են», տասնյակ անգամ կրկնել է Սու-
վորովը: Իր ամբողջ ուսուցման ընթացքում նա յուրաքան-
չյուր զինվորի ու սպայի մեջ դարձացնում էր թշնամու-
ղիւրքը վայրկյանապես ըմբռնելու, նրա անփութութիւնն
ողտապործելու, ամբողջ ուժով ու թափով անմիջապէս
նրա վրա հարձակվելու կարողութիւնն:

Սուվորովը միշտ էլ խրախուսում էր քաջութիւնն ու
հնարագիտութիւնը, միաժամանակ հանդուրժել չէր կա-
րողանում «ինչ իմանամը», անվճռականութիւնը, թափ-
թռփվածութիւնը և վախը վտանդի առջև: Մասնավոր նա-
խաձեռնութիւն դաստիարակելը ներթափանցված էր նրա
ամբողջ սխտեմի մեջ. «Յես հրահանդում եմ՝ աջ, հար-
կավոր ե ձախ— ինձ մի լսիր»:

Նա մեծ հողատարութեամբ զորքերի մեջ իրենց նկատ-
մամբ հավատ էր դաստիարակում: Միշտ զինվորներին էր
զիմում խրախուսական խոսքերով.

— Դուք բոլորդ, ձեր ամբողջ վաշտը, ամբողջ դուն-
դը, բոլորդ, բոլորդ սքանչելի դուստրուներ եք: Դուք
բոլորդ քաջ եք, բոլորդ ուռններ եք: Բոլորդ դուստրուներ
նեք եք, հերոսներ: Ինչպիսի՞ ճահճուտների վրայով եք
դուք սլացել, ինչպիսի՞ ամուր մարտկոցներ եք դրավել:
Ուռա՛:

Յուրաքանչյուր պարասմունքից, յուրաքանչյուր դոր-
ծից հետո նա միշտ էլ դտնում էր դովաբանելու բան և
հաճախ էր այդպիսի ճառերով զիմում զինվորներին: Շատ
հին զինվորներին նա ճանաչում էր անձամբ: Նրանցից յու-
րաքանչյուրն ուներ իր մարտական անունը— բազե, ար-
ծիվ, դուստրու և այլն:

Սուվորովի պարզ և միշտ անկեղծ խոսքերից բորբոք-
վում էին զինվորների սրտերը:

Նա միշտ խստորեն հետևում էր, վոր զինվորին հա-
տանելիքը միշտ իրեն հասնի և հասնի իր ժամանակին: Այն
ժամանակվա աղքատիկ միջոցներով (յերթային խոհանոց-
ներ դեռ չկային) յերկարատև յերթեր կատարելով՝ նա
միշտ էլ հնար էր գտնում իր զինվորներին կանոնավոր կե-
րակրելու:

Նա նրանց վարժեցնում էր մշտական աշխատանքի,
ասելով, թե աշխատանքն ավելի կազդուրիչ է հանդստից:
«Հարկավոր է բավականաչափ, բայց վոչ ծուլացնող հան-
դիստ», ասում էր նա և միաժամանակ խորհուրդ էր տա-
լիս զըռչանալ վնասակար ուժասուլառումից: Սովորեցնում
էր միայն թոյն, ինչ հարկավոր էր պատերազմում: «Իմ
զինավարժութիւնը վոչ «պատվի առ»-ն է, վոչ էլ «ուժի
առ»-ը, այլ ամենից առաջ արագաշարժութիւնը, իսկ հե-
տո արդեն վարժութիւնները, հրացանն արագ լցնելը և
վերջը՝ սվինահար անելը»:

Նա պատվաստում էր զիտակցական ըմբռնողութիւն և
վոչ թե խստավարժութեամբ էր դբադվում: Ուսուցման մեջ
պարզութիւն ու ջանասիրութիւն— ահա Սուվորովի հիմ-
նական պահանջները:

«Սովորելը դժվար լինի՝ արչավանքը դյուրին կլն-
նի, սովորելը դյուրին լինի, արչավանքը դժվար կլինի»,
ասում էր Սուվորովը:

Խիստ զիսցիպլինա:

Իր հրամաններից մեկում Սուվորովը պահանջում է.
«Անփութութեան դեպքում տուգանել և անպատիժ չթող-
նել, քանզի վոչ մի բան մարդկանց այնպես չի հասցնում
չարիքի, ինչպես թույլ հրամանը: Ուստի և դանցառութեան
համար խիստ պատիժ տալ»:

Նա առանձնապէս խիստ էր յերթի ժամանակ և զորա-
չարքերում: Սակայն այդ չէր խանդարում, վոր նա չիում
ունենա զինվորների հետ: Յերթի ժամանակ նա հաճախ
չըջում էր զորասյուներում և զինվորներին խրատում: Այդ-
պիսի դեպքերում բոլորը խիտ ողակով շրջապատում և-
յին նրան և խմբովին առաջ դնում: Այդ անկարգութիւնն
չէր համարվում:

Սուվորովյան զիսցիպլինան հիմնված էր զիտակցու-
թեան վրա. այն ժամանակ այդ համարվում էր վոչ միայն
նորամուծութիւն, այլ համարյա թե հանցադործութիւն:
Պրուսական դպրոցը (Յրիգերիս 2-րդ) ընդունում էր, վոր
զինվորը կապրալի (կրտսեր յենթասպայի) մահակից ավելի

սլիախ վախենա, քան թշնամու գնդակից: Ձինվորի արարքներն ամենից առաջ բնորոշվում են պատժի նկատմամբ: ունեցած նրա սարսափով: Սուվորովը յերբեք չէր թույլ տալիս, վոր զինվորն ստորացվի: Նրա բանակում մարմնական պատիժներ սակավ էյին լինում:

Իր զորամասերին սովորեցնելիս Սուվորովն ամեն ինչ անում էր, վորպեսզի մարդկանց կոփի և նրանց մեջ տուհունություն զարգացնի:

Գետերը լողալով կամ ծանծաղուտներով անցնելը, յերկարատե արագ յերթերը, գիշերային յերթերը, մանվորները և հաճախակի տաղնապները սուվորովյան զինվորներին վարժեցնում էյին յերթային ու մարտական կյանքի դժվարություններին: Լարված ուսուցումը որվա բոլոր ժամերին, կտրտված վայրում, ամեն տեսակ յեղանակի այս ամենը կատարվում էր կենդանի ու հետաքրքիր ձևով: Արդյունքն այն էր լինում, վոր սուվորովյան զորքերն իրենց հավասարը չունեյին:

1765 թվին Սուզգալյան դունդը, վորի հրամանատարն էր Սուվորովը, մանեվրների ժամանակ աչքի ընկավ չարժման այնպիսի արագությամբ, վոր մտցվեց թեթև հետախուզական կորպուսի մեջ: 20 տարի անց, յերբ կրեմենչուզի զորքերի հրամանատարն էր, Յեկատերինա 2-րդի և ուսարերկրյա հյուրերի առաջ իր զորքերին ցուցադրեց այնպիսի փայլուն տեսքով, չարժումներն ու գործողություններն այնպես լավ կատարելիս, վոր բոլոր ներկա յեղողներին հիացմունք պատճառեց:

Ամբողջ Յեկատերինայում Սուվորովի մասին խոսում էյին վոչ միայն վորպես նշանավոր զորավարի, այլ և վորպես զորքերի դաստիարակման և ուսուցման մեծ վարպետի մասին:

Յերբ ավստրիական գեներալ Կրեյցը հիացմունք հայտնեց, թե Սուվորովն ինչպես է կարողանում զորքերին նոց ոխրագործության հանել, Սուվորովը պատասխանեց.

— Դատարի բան է: Սիրիր զինվորին և նա էլ քեզ կըսիրի: սրա մեջ է ամբողջ գաղտնիքը:

Արդյունքը լինում է այն, վոր դաստիարակության սուվորովյան դպրոցն անցած զորքերն աչքի էյին ընկնում անասհման համառությամբ: Ամենադժվարին պայմաններում վոչ միայն յերբեք հոգեւրէս չէյին ընկճվում, այլ և մտքներովն անդամ չէր անցնում, թե կարող է պատահել, վոր թշնամուն չհաղթեն:

Քաջությունն ամեն կերպ զարգացնելու հետ Սուվորովը, մանավանդ սպաներից ու գեներալներից, պահանջում էր գիտություն: «Հարկավոր է հաղթել զորությամբ և վոչ թե քանակով», ասում էր նա: Իր հրամաններից մեկում նա պարզաբանում է. «Թեպետ և քաջությունը, առույգությունն ու արիությունն ամենուրեք և բոլոր դեպքերում հարկավոր են, միայն թե դրանք ապարդյուն կլինեն, յեթե չըղխեն հմտությունից»:

Գեներալներին խորհուրդ էր տալիս զբաղվել գիտություններով, մշտական ընթերցանությամբ զարգացնել իրենց միտքը: «Լավ կարգացեք մեծ զորավարների գործողությունները, — խորհուրդ էր տալիս նա... Լավ սովորեցրեք զինվորներին, բայց այդ գործում նրանց որինակ սովեք ձեր անձնականով: Միայն աչքաչափի անդադար հարստացումը ձեզ կդարձնի մեծ գեներալ»:

Մի ուրիշ տեղ Սուվորովը խորհուրդ է տալիս. «Քեզ որինակ դարձրու հին ժամանակների հերոսին, դիտիր նըրան, հետևիր նրան, հավասարվիր ու անցիր նրանից... Յեվ այդ փառք կբերի քեզ»:

Նա ինքը մեկ հերոսով չէր բավականանում, բոլոր մեծ զորավարներից վերցնում էր ոգտակարը: Հսկայական փառք վայելելով՝ նա յերբեք չէր գոռոզանում դրանով: 1796 թվին, լինելով 67 տարեկան ծերունի, իր թիկունքում 40 մարտական տարիների փորձ ունենալով, Սուվորովը ուշիուշով հետևում էր 27-ամյա Նապոլեոնի գործողություններին: Նա իսկույն նկատեց, վոր Նապոլեոնը խոշոր գորավար է, «Սոչոր քայլեր է անում տղան», իսկ զինվորներին ասում էր. «Ձրանսիացիք զորասյուններով են կովում և յեթե տեղը գա, վոր մենք նրանց դեմ կովենք, մենք էլ

նրանց գորասյուններով պիտի խփենք»։ Սուվորովն ինքնատիպ էր, ամենևին չէր յենթարկվում սլոնսական խտտավարժուկան ազդեցութեանը, վորին այնպես ամուր կառչել էր Պավելը, քանի վոր նրա մեջ վնաս էր տեսնում, բայց նա չէր խորշում մարտի համար ոգտակար բաներն ընդորինակել 27-ամյա Նասյուրեոնից, վորն այն ժամանակ դեռ նոր էր իր առաջին քայլերն անում։ Նա ինքն ամբողջ կյանքում լարված սովորում էր և իր ստորադրյալներից էլ պահանջում էր ջանասիրաբար սովորել։

Սուվորովի տակտիկական կանոնները շատ լավ էլին հասկանում նրա բոլոր զինվորները։

«Սվինը, արագությունը, անակնկալի բերելը — ահա մեր առաջնորդները», ասում էր Սուվորովը։

«Թշնամին կարծում է, թե դու հարյուր, յերկու հարյուր վերստի վրա յես, իսկ դու քաջաբար քայլերդ կրկնապատկելով, յեռապատկելով նրա վրա հարձակվիր արագ ու հանկարծակի»։

«Թշնամին յերգում ու խաղում է, քեզ սպասում է մաքուր դաշտից, իսկ դու բարձր լեռների, խիտ անտառների հետևից հարձակվիր նրա վրա ինչպես ձյունը տեղա մարդու գլխին, ջարդիր, սեղմիր, շուռ տուր, հարվածիս, քշի՛ր, մի՛ թույլ տա, վոր ուշքի դա. ով վախեցած է, նա կիսով չափ պարտված է. սարսափահար մարդու աչքերը մեծ են. մեկը տասն է յերևում»։

«Պահպանիր զնդակը յերեք որով, պահիր մի ամբողջ շարաթով, յեթե վորևե տեղից ստանալու հույս չունես, կրակիր սահավ, բայց դիպուկ, իսկ սվինով ամուր ծախիր»։

Բայց կրակի նշանակութունը նա չէր մոռանում։ Հաճախ ասում էր. «Հետևակի կրակը բաց է անում հաղթանակը, սվինը փշրում է մրրիկի պես առաջ նետվածներին, թուրն ու տեղը հալածելով հաղթանակը մինչև վերջ են հասցնում»։ Չորասյուններին սովորեցնում էր խաչաձև կըրակով պաշտպանել իրար։

«Յերբեք մի արհամարհեք ձեր թշնամուն, ինչպիսիք»

էլ լինի նա, լավ ճանաչեցեք նրա գեները, նրանով դործելու յեղանակը, ձեր ուժերը և նրա թուլությունը»։

«Ռազմական հանդամանքները վարկյանապես փոփոխվում են, դրա համար էլ նրանց նկատմամբ յերբեք կայուն պլան չկա... Ճակատագիրը մեկ ծոծրակ ունի, իսկ ճակատին յերկար կախ ընկած ծամեր։ Նրա թուխքը կայծակի արագություն ունի։ Դեռ մազերից չբռնած՝ նա արգեն կարող է չքացած լինել»։

Սուվորովը պաշտպանվողի դիրք բռնել չէր սիրում։ Յերբ ստիպված էր լինում այդ անել, պաշտպանության խնդիրները նա լուծում էր հարձակողականի ձևով։

«Մի քայլ հետ՝ մահ է», ասում էր նա, «առաջ յերկու, յերեք, տասը քայլ՝ կթուլատրեմ»։

Նահանջի մասին լսել անգամ չէր ուզում։ «Նահանջ» բառը նա արտասանում էր հեղձանքով, հաճախ գերմաներեն լեզվով և հավատացնում էր, թե ոուսաց լեզվում նույնիսկ դրան համապատասխան հասկացողություն չկա։

«Իմ զինվորներն լսողությունը, հայացքը և հողին յես պաշտպանում էյի նահանջի վորևե յերևութից», — ասում էր Սուվորովը։

1794 թվին Լեհաստան ժամանելով՝ Սուվորովն իր հրամանատարության տակ համախմբեց զորքերի ցաք ու ցրելի ջոկատները։ Անհապաղ բաժանվեց նրա «Հաղթանակի գիտությունը» հրահանգը, վորպեսզի սպաներն ու յենթապաներն այն անդիր սովորեն, իսկ զինվորների համար կարգում էլին ամեն որ։ Այդ «Հաղթանակի գիտության» մեջ Սուվորովը հակիրճ նախադասություններով, բոցաչուն լեզվով շարադրել է զորքերին դաստիարակելու և սովորեցնելու իր հիմնական կանոնները։

«Հաղթանակի գիտությունը» այնքան հարագատ թվաց, վոր նրա վորոշ մտքերը դարձան զինվորական ասացվածքներ և շատերն ապրեցին մինչև մեր օրերը։

«Ուսումը լույս է, տղիտությունը՝ խավար։ Գործը վարպետից է վախենում։ Յեթե գյուղացին արորին չտիրապետի, հացը չի բուսնի։ Մեկ ուսումնականի համար յերբեք

անուան են տալիս: Մեզ յերեքը քիչ է, տուր վեցը, տուր տասը մեկի դիմաց: Բոլորին կջարգենք, գերի կվերցնենք»:

«Ռազմական յերեք վարպետութիւն կա. առաջինը՝ աչքաչափն է, թե ինչպես ճամբար դնել, ինչպես առաջ դնալ, վորտեղ գրոհել, քշել, խփել: Յերկրորդը՝ արագութիւնն է: Յերրորդը՝ ճնշումը»:

«Կենտրոնի վրա գրոհելը ձեռնտու չէ, հեծելազորն ափելի լավ կկոտորի, հակառակ դեպքում իրենք կսեղմեն»:

«Թիկունքից գրոհելը շատ լավ է, միայն փոքր կորսուածի համար, իսկ բանակի համար դժվար է թիկունքն անցնել»:

«Արագութիւնն ու անակնկալի բերելը փոխարինում են բանակին»:

«Տալ հասարակ հարվածներ, իսկ ավելի լավ է՝ շտապ ու քաջաբար»:

«Մարտում հարկավոր է ձգտել մի կետի և նահանջի մասին մոռանալ»:

«Հարվածել հատու... Ծարժումներն արագ... Անողոր գրոհ... Դուրս մղել... Հարվածել... Տոկունութիւն ունենալ»:

«Ռազմական արվեստի իսկական կանոնն է՝ ուղիղ հակառակորդի վրա հարձակվել նրա համար ամենազգայուն տեղում և վոչ թե շուռ ու մուռ դալ, յերկչոտութիւնը դարտուղի ճանապարհներ վորոնել, վորի հետևանքով գրոհը կբարդանա, մինչդեռ խնդիրը կարող է լուծվել միայն ուղղակի համարձակ հարձակումով» և այլն:

Այդ հրահանգը վերջանում էր հետեւյալ վոգեչնչող խոսքերով.

«Յենթակարգում, զորավարժում, դիսցիպլինա, մաքրութիւն, առողջութիւն, բարետեսութիւն, առույգութիւն, համարձակութիւն, քաջութիւն, հաղթութիւն:

Փառք, փառք, փառք»:

Յեւ բոլորը գիտեցին, վոր Սուլթանովի բերանում դպրոցաւորութիւնն էր, այլ հենց այն է, ինչին նա հա-

վատում է և ինչ վոր նրա ձեռքում հաղթանակ է բերում:

«Ինձ համար զինվորն ինձանից թանգ է», ասում էր Սուլթանովը և բոլորը լավ գիտեցին այդ: Ձինվորներն ըդդում էյին Սուլթանովի հոգատարութիւնն իրենց նկատմամբ և նրան վարձատրում էյին անկեղծ նվիրվածութեամբ:

Անցյալում վոչ մի զորավար իր զորքի կողմից այնպիսի սեր չի վայելել, ինչպես Սուլթանովը: Այդ են ցույց տալիս նրա զորքերը: Այլ կերպ՝ հաղիվ թե ուսուսական սվինը ձեռքեր, անցներ Ալպերի ձյունապատ դադաթներով, հաղիվ թե կարելի լինէր անցնել Սատանի կամուրջը և հետ շարտեսել Փրանսիացիներին, վորոնք փակել էյին ուսուսների առաջխաղացման բոլոր ճանապարհները:

Սուլթանովի հաղթանակների բանալին զորքերի լավագույն ուսուցման մեջ էր, մասսաների հետ զորավարի ունեցած անխախտ կապի մեջ, այն բանի մեջ, վոր բոլոր ստորադրյալները խորապես հասկանում էյին իրենց առաջնորդին և վստահում նրան:

Յոթամյա պատերազմում Սուվորովի ստացած մարտական մկրտությունից մինչև նրա ամբողջ մարտական գործունեությունը պսակող Շվեյցարական արշավանքը անցել էր 40 տարի: Այդ տարիների ընթացքում Սուվորովը հատարել էր դանադան դերեր, սկսած փոքրաթիվ հետախուզական խմբի պետից մինչև բանակի գլխավոր հրամանատարությունը, մասնակցել էր անթիվ ճակատամարտերի և վոչ մի պարտություն չէր ունեցել: Նա հաճախ փոքրաթիվ ուժերով հաղթել էր ավելի մեծ թվով թշնամուն, մի բան, վոր վո՛չ ամեն անգամ էր հաջողվում Նապոլեոնին:

Սուվորովի ժամանակակիցները, մանավանդ նրա բաղձաթիվ նախանձողները, այդ հաղթանակները բացատրում էյին բախտով:

Սուվորովը միանդամայն խելացի կերպով պատասխանում էր. «Այսօր բախտ, վաղը՝ բախտ: Վերջպես յերբեվե կարողություն էլ հարկավոր է»:

Յեվ ահա, չնայած այն բանին, վոր նա, հակառակ բազմաթիվ մեծ զորավարների որինակի, «ճակատամարտ չէր տանուլ տվել», չնայած դրան, յերկար ժամանակ չէյին ցանկանում ճանաչել նրա կարողությունը:

Սուվորովի մասին Նապոլեոնի կարծիքն արտահայտված է հետևյալ բառերով.

«Մարշալ Սուվորովը մեծ գեներալի վոգի յե ունեցել, բայց չի ունեցել նրա գլուխը: Նա ոժտված է յեղել ուժեղ կամքով, մեծ գործունեությունամբ և անսասան նվիրվածությամբ, սակայն նա ոժտված չի յեղել վոչ հանճարով, վոչ սաղմուտական արվեստի գիտությունամբ... Գործել է առանց պլանի ու հաշվի...»

Հարկ կա՞ ասելու, վոր այս դեպքում Նապոլեոնն ընկել է աններելի սխալի մեջ: Սուվորովը, հետևելով 1796 թվի իտալական արշավանքին, ավելի լավ է գնահատել Նապոլեոնին և այնուհետև իր ամբողջ կյանքում վառվում էր Նապոլեոնի հետ ուժերը չափելու տենչանքով: Վորքան ավելի կուժեղանար այդ տենչը, յեթե Սուվորովն ապրեց մինչև այն որերը, յերբ Նապոլեոնի մտքովն անցավ այդպիսի կարծիք հայտնել Սուվորովի մասին:

Կլաուզելիցը ևս անհիմն կերպով ասում է, թե Սուվորովի ղեկավարական կրթությունը շատ կասկածելի յե:

Ինչ վերաբերում է իր հայրենակիցների կարծիքին, ապա Սուվորովը նրանց մասին ասում էր. «Շողորթ ծամածուծությունների և հաճոյախոսության կարողություն չունենալով՝ հաճախ յես դուր չեմ յեկել իմ ընկերակիցներին»:

Սակայն Սուվորովը գիտեր իր արժեքը և քիչ էր մոտահողվում այն բանով, թե ուրիշներն ինչ են մտածում իր մասին:

Յերբ Պավել առաջինը սկսեց ռուսական բանակի մեջ պրուսական կարգեր մտցնել, Սուվորովն ասում էր. «Ռուսները միշտ էլ պրուսացիներին հաղթել են, ել ի՛նչ կա նրանցից ընդորինակելու... Յես հանդուցյալ թաղավորից (Փրկորիս 2-րդ) ավելի լավն եմ: Յես ասածու կամքով վոչ մի ճակատամարտ տանուլ չեմ տվել»:

Մի ուրիշ տեղ, յերբ նրա կենսադրությունը կազմելու ցանկություն հայտնեցին, Սուվորովն ասաց. «Նեղություն միք կրի, յես ինքս իմ մասին կասեմ. թաղավորներն ինձ գովաբանել են, ղինվորները՝ սիրել, բարեկամներս ինձ գովաբանել են ինձանով, թշնամիները հայհոյել են ինձ, պալատականները ծիծաղել են ինձ վրա: Պալատներում վորլատականները ծիծաղել են ինձ վրա: Պալատներում վորպես Յեղոպոս հանդես գալով՝ առակներով յես ճշմարտություն եմ ասել, հայրենիքի շահի համար յեղել եմ Բատուկիրյիլ)* և արագաղի պես կանչել եմ ու թմրածներին արթնացրել, իսկ յեթե յես ծնված լինեյի Կեսար, յես նրա

*) Պետրոս I ծաղրածուն:

նման հպարտ կլինեյի, բայց կզգուշանայի նրա արարքներից»:

1794 թվին Սուվորովը յենթազնդապետ գրաֆ Ֆիբրիցիանիին գրեւ է. «Յես միշտ աշխատասեր ու խնայող եմ յեղել աշխարհիս ամենաթանկագին դանձի՝ ժամանակի նըկատմամբ, ինչպես գործունեյության լայն ասպարեզում, այնպես էլ առանձնացած կյանքում, վորից միշտ կարողացել եմ ոգտփել»:

Նախագծումները, կշռադատումը մեծ լարումով և կատարումն էլ ավելի մեծ յեռանդով, հաճախ համբերությամբ և մասամբ փոփոխական ժամանակի ծայրահեղ ու անհետաձգելի ոգտադործումով, — այս ամենը դրված ինձ հատուկ ձևի մեջ՝ հաճախ ինձ հաղթանակ են բերել բախտի փոփոխամիտ աստվածուհու նկատմամբ»:

Գիչ չեյին, ի հարկե, նաև Սուվորովի յերկրպագունները: Անդլիայի նշանավոր ծովակալ Նելսոնը պարծենում էր նրանով, վոր իր հայրենակիցները նրա և Սուվորովի մեջ նմանություն եյին դտնում:

Լորդ Կլինտոնը նրա մասին այսպես է արտահայտվել. «Այժմ յես դուրս եմ գալիս ամենազիտական զինվորական ահազեմիայից, վորտեղ դատողություններ եյին արվում ռազմական արվեստի մասին, Հաննիբալի, Կեսարի մասին, դիտողություններ եյին արվում Տյուրենի սխալների, Էլիսան Յեվդենիի սխալների մասին, խոսվում էր մեր Մոլոտրուկի մասին, սվինի մասին, և այլն և այլն: Դուք յերեկ ցանկանում էք իմանալ, թե վորտեղ է այդ ահազեմիան և ո՛վքեր են պրոֆեսորները: Ապա գուշակեցեք: Յես ճաշում եյի Սուվորովի մոտ»:

Շատ կարգացած լինելը, սուր լեզուն, զարմանալի հիշողությունը Սուվորովին հնարավորություն եյին տալիս կարճ նախադասություններով, պատկերավոր վոճով, կարճատև զրույցներով ընդգրկել բազմաթիվ հարցեր:

Լսելով նրա զրույցը՝ խաղացի մի բանաստեղծ հիացմունքով ասել է. «Իմ յերեակայությունն ինձ փոխադրեց Ադամեմնոնի վրանը, վորտեղ կարծես յես նստած լինեմ

հունական դորախաների խորհրդում և կարծես տեսնում եմ Տրոյայի անկումն ու ելլալայի հաղթանակը»:

Դրան Սուվորովը պատասխանել է. «Հոմերոսին յես վաղուց զիտեյի: Բայց նրա հետ մեր բնական լեզվով ավելի կարճ ծանոթացրեց իմ բարեկամ Յերմիլ Իվանովիչ Կոստրովը: Հոմերոսին սիրում եմ, բայց չեմ սիրում Տրոյայի տաննամյա պաշարումը: Ի՛նչ գանդաղհոտություն, գորքա՛ն փորձանքներ Հունաստանի համար: Չեմ ուզում Ադամեմնոն լինել. յես ջեյի խոսվի արադավաղ Աքիլլեսից: Սիրում եմ Պատրոկլեսի բարեկամին նրա արագաշարժության համար, վորտեղ նա յերևում է, այնտեղ թշնամի չկա: Ինձ խանդավառում է նաև Ոստիանը, իմ բարեկամը: Յես մշուչի մեջ տեսնում ու յտում եմ Ֆինդալին, վոր բարձրր ժայտի վրա նստած ստում է. Ոսկար, հաղթահարիք զենքի ուժը, խնայիք թույլ ձեռքը:

Փառք ու պատիվ յերգիչներին: Նրանք արխանում են մեզ և դարձնում ընդհանուր բարիք ստեղծողներ»:

Այսպես էր Սուվորովը: Պատմական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր խոսյալան արչավանքի ժամանակ Սուվորովի պլանն ամբողջովին գուգադիպում է Նապոլեոնի պլանին, միայն այն տարբերությամբ, վոր Նապոլեոնն իր գաղափարներն արտահայտել է զեպերից հետո, իսկ Սուվորովը՝ առաջ:

Ամեն տեղ, վորտեղ յերևում էր Սուվորովը, ասպարվում էյին զարավոր ամբությունները, փախչում էր հակառակորդը:

18-րդ դարի վերջին տասնամյակում և՛ թուրքիայում, և՛ Լեհաստանում խոտորեն արգելված էր գորքին ու ժողովրդին ասել, թե այդ նույն Սուվորովն է, վորը 1772 թրվին ջարդել է կոնֆեդերատներին և թուրքերին: Հրամայված էր յուրեր տարածել, թե այդ միայն նույն ազգանուներ կրող անձնավորություն է, իսկ նախկին նշանավոր Սուվորովը վաղուց է մեռել իր ստացած վերքերից:

Սուվորովի հենց միայն անունն այդպիսի սաբոսափ էր զցում թշնամիների շարքերում:

Սուվորովի աչքաչափը և ստրատեգիական հանճարը արտահայտվեցին առաջին իսկ խոշոր ընդհարման ժամանակ, վորին մասնակցում էր Սուվորովը, Կոնենբերգի դուքս Գրեգորի 2-րդի նկատմամբ հաղթանակից հետո: «Յեթե յես զլխավոր հրամանատարի տեղը լինեյի, անհայաղ կգնայի Բեռլինի վրա», — ասում էր Սուվորովը:

1789 թվականին Թուրքիայի դեմ մղած պատերազմի ժամանակ նա բազմիցս Պոտյոմկինին առաջարկել և Գանուր գետը համարձակ անցնելով՝ գնալ ուղիղ դեպի Կոստանդնուպոլիս, ամենակարճ ժամանակում հաշիվ մաքրել թուրքերի հետ:

Կինբուրնի, Ֆոկչանի, Ռիմնիկի, Իգմայիլի, Պրագայի, Տրեբբիայի, Նովիի, Սեն-Գոթարդի և այլ վայրերի հերոս Սուվորովը քառասուն տարվա մարտական գործունեության ընթացքում անմահ փառք ստեղծեց ուսական գեներալ համար:

138 տարի յե անցել նրա մահից հետո, բայց մենք այժմ ել կարող ենք հպարտանալ նրա փառքով: Նա ուսս ժողովրդի ժառանգություն թողեց այնպիսի գորավարներ, ինչպիսիք եյին նրա աշակերտներ Կոստուզովը և Բադրատիոնը: Սուվորովի աշակերտները 1812 թվին Հայրենի յերկիրը թշնամու արշավանքից պաշտպանելով՝ հանդուգն նապուլեոնին ցույց տվին, թե ինչպես պետք է ջարդել թշնամուն:

Վերաբերմունքի պարզությունը, զինվորների նկատմամբ ունեցած սերն ու անգաղբում հոգատարությունը, հակիրճ, բայց փայլուն ճառի ուժը, նրա կյանքի աշխատանքային ու հիանալի յեղանակը, զինվորական ծառայության նկատմամբ ունեցած սերը, կատարողականությունը, Հայրենիքին նվիրվածությունը, — այս ամենը Սուվորովին զարճում էյին իրեն յենթակա գործերի անսահմանափակ տիրակալը:

Հազարավոր վերստերով յերթերը, անանցանելի ճահիճները, անմատչելի լեռները, ամրոցների պարիսպների բարձրությունը և յարամատների խորությունը խոչընդոս-

ներ չեյին սուվորովյան մարտիկների համար: Իրա համար ել մենք կարող ենք Սուվորովի անունը համարձակորեն դասել համաշխարհային պատմության խոշորագույն գորավարների անունների շարքում:

Այն մեկ ու կես հարյուրամյակի ընթացքում, վոր մեղքաժանում է Սուվորովից, փոխվել է եկոնոմիկան, փոխվել է սպառազինությունը, բանակի կազմակերպումն այն չե, ինչ յեղել է Սուվորովի ժամանակ, կռիվ մղելու յեղանակներն ել արմատապես փոխվել են: Սակայն մեր որերում, ինչպես և առաջ, առաջադրված նպատակին հասնելու համար հարկավոր է անսահման քաջություն, հաստատակամություն և համառություն: Սոցիալիստական Հայրենիքին նվիրվածությունը, հոգատարությունը մարդու-մարտիկի նկատմամբ և Հայրենիքի բարորություն համար անդալրում աշխատանքն իր վրա — այս բոլոր հատկություններն այժմ ել այնպես թանկ են, ինչպես և առաջ:

Մարդ ուզում է իր պատմությունը վերջացնել Սուվորովի ժամանակակից ուսս առաջին խոշոր բանաստեղծ Դերժավինի մարգարեական խոսքերով.

Ինչպես ծովերի աղմուկ, ինչպես յերկնքի թնդյուն, —

Հովիտից հովիտ, բլուրից բլուր,

Թավուտից թավուտ, սերնդից սերունդ

Կգնա, կըջի,

Կսուբա, կհնչի,

Միշտ կապի, թե


Ով եր Սուվորովը, —

Ռազմում՝ Այեբասնդը, քաջությամը՝ ստոյիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Ռուսաստանը XVIII դարում	3
Սուլթորովի մանկությունը և պատանեկությունը	7
Առաջին սիրադուրծությունները	11
Արչավ գեղի Լեհաստան	16
Սուլթորովը Թուրքիայի դեմ մղած պատերազմում 1773—1774 թ. թ.	23
Կինը	28
Փոկչան	33
Ռիմնիկ	38
Իգմայիլ	45
Յերկրորդ արչավանքը Լեհաստան	57
Սուլթորովը շնորհազրկված	64
Սուլթորովն Իտալիայում	67
Շվեյցարական արչավանքը	86
Դաստիարակության և ուսուցման սուլթորովյան սխտեմը	101
Սուլթորովը մեծ զորավար	110




Թարգմանիչ՝ Հ. Հարությունյան
Պատ. խմբագիր՝ Հ. Գոնոյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Ներբանդիչ՝ Ս. Շահբազյան

Գլխավորի լիազոր Դ. 1883 Պատվեր 234. Հրատ. 4837. Տիրաժ 5000.
Տրված է արտագրության՝ մարտի 13-ին 1939 թ. ստորագրված է սպա-
ղբության 25 մարտի 1939 թ.


ՍՈՒՎՈՐՈՎԻ
 ԻՏԱԼԱԿԱՆ ՅԵՎ ՇՎԵՑԱՐԱԿԱՆ
 ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

(1799 թ.)



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Ռուսներ և ավստրիացիք
- Ֆրանսիացիք
- Ֆրանսիական զորքերի շարժման յենթադրական ուղղությունը



«Ազգային գրադարան»



NL0217824

40. 816